

**ՀՀ ՔԱՂԱՔԱԲՆԱԿ ԱՐԱԿԱՆ ՍԵՌԻ
ՍԵՋՈՆԱՅԻՆ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ
ՄԻԳՐԱՆՏՆԵՐԻ ՇՐՋԱՆՈՒՄ ԸՆՏՐԱՆՔԻ
ՁԵՎԱՎՈՐՄԱՆ ՄԵԹՈԴՆԵՐԻ ՈՐԱԿԱԿԱՆ
ԳՆԱՀԱՏՄԱՆ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆ**

2016

ՀՏԴ 616.98:314.7

ԳՄԴ 55.148+60.7

Հ 247

Հեղինակային խումբ՝

Գրիգորյան Ս., Հակոբյան Ա., Պապոյան Ա., Պետրոսյան Ժ.,
Ասրյան Մ., Ասատրյան Ա., Գրիգորյան Տ., Արզաքանյան Վ.,
Հովհաննիսյան Է., Հովսեփյան Տ., Հովհաննիսյան Լ., Արգարյան Ս.,
Վարդանյան Ս.

Հ 247

ՀՀ քաղաքաբնակ արական սեռի սեզոնային աշխատանքային միգրանտների շրջանում ընտրանքի ձևավորման մեթոդների որակական գնահատման հետազոտություն, 2016թ./Ս.Գրիգորյան և ուրիշ. – Երևան: «ԶԻԱՀ-ի կանխարգելման հանրապետական կենտրոն» ՊՈԱԿ, 2017. - 127 էջ:

Գրքում ներկայացված են ՀՀ քաղաքաբնակ արական սեռի սեզոնային աշխատանքային միգրանտների շրջանում ընտրանքի ձևավորման մեթոդների որակական գնահատման հետազոտության արդյունքները: Գրքում ներառված տեղեկատվությունը կարող է օգտակար լինել բուժ-աշխատողներին, ՄԻԱՎ վարակին առնչվող ծառայություններ տրամադրող պետական և հասարակական կազմակերպություններին, ՄԻԱՎ/ԶԻԱՀ-ի կանխարգելման ծրագրերին տեխնիկական և ֆինանսական աջակցություն տրամադրող կազմակերպություններին:

Գիրքը տպագրվել է ԶԻԱՀ-ի, տուբերկուլոզի և մալարիայի դեմ պայքարի գլոբալ հիմնադրամի ֆինանսական աջակցությամբ:

ՀՏԴ 616.98:314.7

ԳՄԴ 55.148+60.7

ISBN 978-9939-1-0559-8

©ԶԻԱՀ-ի կանխարգելման հանրապետական կենտրոն



ՀՀ ԱՆ ԶԻԱՀ-ի կանխարգելման
հանրապետական կենտրոն

ԵՐԱԽՏԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

Սույն հետազոտությունն իրականացվել է «ԶԻԱՀ-ի կանխարգելման հանրապետական կենտրոն» ՊՈԱԿ-ի (ԶԻԱՀ-ի ԿՀԿ) կողմից:

Հետազոտության իրականացման ընթացքում և ստացված արդյունքների մեկնաբանության համար տեխնիկական աջակցություն է տրամադրվել Առողջապահության համաշխարհային կազմակերպության միջազգային խորհրդատու Լիզա Ջոնսթոնի և տեղական խորհրդատու Ռուբեն Եգանյանի կողմից:

Զեկույցի նախագիծը պատրաստվել է միջազգային խորհրդատուի կողմից և վերջնականացվել ԶԻԱՀ-ի ԿՀԿ-ի մասնագետների հետ համատեղ:

Հետազոտության իրականացման համար ֆինանսական աջակցություն է տրամադրել ԶԻԱՀ-ի, տուբերկուլոզի և մալարիայի դեմ պայքարի գլոբալ հիմնադրամը:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՀԱՊԱՎՈՒՄՆԵՐ	6
ՀՀ ՔԱՂԱՔԱԲՆԱԿ ԱՐԱԿԱՆ ՍԵՌԻ ՍԵՂՈՆԱՅԻՆ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՄԻԳՐԱՆՏՆԵՐԻ ՇՐՋԱՆՈՒՄ ԸՆՏՐԱՆՔԻ ՁԵՎԱՎՈՐՄԱՆ ՄԵԹՈԴՆԵՐԻ ՈՐԱԿԱԿԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆ.....	7
ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ԱՆՑԿԱՑՄԱՆ ՎԱՅՐԵՐԸ ԵՎ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՄԱՆ ԱՂԲՅՈՒՐԸ....	7
ՆԱԽԱԲԱՆ ԵՎ ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ.....	8
Նպատակներ	10
Հետազոտության մեջ ընդգրկվելու չափանիշներ	10
Մեթոդներ.....	11
<i>Ֆոկուս խմբերի համար մասնակիցների հավաքագրում.....</i>	11
<i>Հարցազրույցների/ֆոկուս խմբերի անցկացում.....</i>	11
<i>Տվյալների վերլուծություն</i>	11
<i>Տվյալների հավաքագրման գործիքներ.....</i>	12
<i>Իրականացնող անձնակազմ.....</i>	13
Էթիկական հարցեր	14
Արդյունքների ամփոփում.....	16
<i>Քաղաքաբնակ միգրանտների ընտրանքի հավաքագրման մեթոդը.....</i>	16
<i>Խրախուսումներ.....</i>	17
<i>ՄԻԱՎ-ի վերաբերյալ հետազոտություն</i>	17
<i>Ռիսկային սեռական վարքագիծ.....</i>	18
<i>Թմրամիջոցների գործածումը.....</i>	18
<i>Հետազա քայլեր.....</i>	19
<i>Այլ հարցեր.....</i>	19
Առաջարկություններ.....	20
Հավելված Ա.Տեղեկատվական թերթիկ քաղաքաբնակ միգրանտների շրջանում հետազոտության համար.....	22
Հավելված Բ. Հարցազրույցի ուղեցույց-հիմնական իրազեկողներ	23
Հավելված Գ. Հարցազրույցի ուղեցույց-ֆոկուս խմբեր	27
Հավելված Դ. Ֆոկուս խմբային քննարկումների և խորը հարցազրույցների մանրամասն արդյունքները, ք.Երևան.....	32

Հավելված Ե. Ֆոկուս խմբային քննարկումների և խորը հարցազրույցների մանրամասն արդյունքները, ք.Գյումրի.....	41
Հավելված Զ. Ֆոկուս խմբային քննարկումների և խորը հարցազրույցների մանրամասն արդյունքները, ք.Վանաձոր	52
Հավելված Է. Ֆոկուս խմբային քննարկումների արդյունքների ամփոփում ազգային խորհրդատուի կողմից	61
Խորքային հարցազրույցների արդյունքների ամփոփում.....	68
ՀԻՄՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ	75

ՀԱՊԱՎՈՒՄՆԵՐ

ՀՈՎ	հակառետրովիրուսային բուժում
ԿՍԿ	կոմերցիոն սեռական ծառայություններ տրամադրող կին
ԳՀ	ՁԻԱՀ-ի, տուբերկուլոզի և մալարիայի դեմ պայքարի գլոբալ հիմնադրամ
ՄԻԱՎ	մարդու իմունային անբավարարության վիրուս
SUS	տղամարդու հետ սեռական հարաբերություններ ունեցող տղամարդ
ՁԻԱՀ-ի ԿՀԿ	ՁԻԱՀ-ի կանխարգելման հանրապետական կենտրոն
ԹՆՕ	թմրամիջոցների ներարկային օգտագործող
ՄՄՁԸ	մասնակիցների միջոցով ձևավորվող ընտրանք

**ՀՀ ՔԱՂԱՔԱԲՆԱԿ ԱՐԱԿԱՆ ՍԵՌԻ ՍԵՉՈՆԱՅԻՆ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ
ՄԻԳՐԱՆՏՆԵՐԻ ՇՐՋԱՆՈՒՄ ԸՆՏՐԱՆՔԻ ՁԵՎԱՎՈՐՄԱՆ ՄԵԹՈԴՆԵՐԻ
ՈՐԱԿԱԿԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆ**

Սույն զեկույցում ներկայացված են ՀՀ քաղաքաբնակ արական սեռի սեզոնային աշխատանքային միգրանտների շրջանում ընտրանքի ձևավորման մեթոդների որակական գնահատման հետազոտության արդյունքները: Հետազոտությունն ուղղված էր քաղաքաբնակ միգրանտների ներքին սոցիալական ցանցերի ուսումնասիրությանը, նրանց շրջանում մասնակիցների միջոցով ձևավորվող ընտրանքի (ՄՄՁԸ) մեթոդով հետազոտություններ իրականացնելու հնարավորության գնահատմանը:

**ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ԱՆՑԿԱՑՄԱՆ ՎԱՅՐԵՐԸ
ԵՎ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՄԱՆ ԱՂԲՅՈՒՐԸ**

Անցկացման վայրերը՝

Երևան, Գյումրի և Վանաձոր քաղաքներ:

Ֆինանսավորման աղբյուրը՝

ՁԻԱՀ-ի, տուբերկուլոզի և մալարիայի դեմ պայքարի գլոբալ հիմնադրամ:

ՆԱԽԱԲԱՆ ԵՎ ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

Ըստ ՄԱԿ-ի ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի միացյալ ծրագրի «Սպեկտրում» համակարգչային ծրագրով ստացված տվյալների՝ ՀՀ մեծահասակ բնակչության շրջանում ՄԻԱՎ-ի տարածվածությունը կազմում է 0,2%, ինչը վկայում է, որ Հայաստանը դասվում է ՄԻԱՎ-ի ցածր տարածվածություն ունեցող երկրների շարքում: Այնուհանդերձ ՄԻԱՎ-ի տարածվածությունը համեմատաբար բարձր է առավել վտանգի ենթարկվող խմբերի շրջանում՝ համաձայն մասնակիցների միջոցով ձևավորվող ընտրանքի մեթոդով 2014թ. նրանց շրջանում իրականացված ՄԻԱՎ վարակի վերաբերյալ կենսաբանական և վարքագծային հետազոտությունների արդյունքների¹: Ըստ այդ հետազոտության՝ ՄԻԱՎ-ի տարածվածությունն ամենաբարձրն էր թմրամիջոցների ներարկային օգտագործողների (ԹՆՕ) շրջանում՝ 4%, տղամարդու հետ սեռական հարաբերություններ ունեցող տղամարդկանց (SUS) շրջանում՝ 0,4%, իսկ կոմերցիոն սեռական հարաբերություններ տրամադրող կանանց (ԿՍԿ) շրջանում տվյալ հետազոտության շրջանակներում ՄԻԱՎ-ի նկատմամբ դրական դեպքեր չեն արձանագրվել:

Ընդհանուր առմամբ Հայաստանը համարվում է էմիգրացիոն երկիր, որտեղից միգրացիոն հոսքերն ուղղված են հիմնականում Ռուսաստանի Դաշնություն (90%)^{2,3} և Ուկրաինա, որտեղ ՄԻԱՎ-ի տարածվածությունը կազմում է մոտ 1% բնակչության 15-49 տարիքային խմբում⁴: Հայաստան վերադարձող աշխատանքային միգրանտները կարող են ՄԻԱՎ-ով վարակվել իրենց ընդունող երկրներում: Ըստ որոշ աղբյուրների⁵ Հայաստանում սեզոնային աշխատանքայի միգրանտների հաշվարկային թիվը կազմում է շուրջ 80000-100000, որոնցից 36,5%-ն ապրում է գյուղական համայնքներում: Համաձայն այլ աղբյուրների՝ աշխատանքային միգրանտների մեծ մասը բնակվում է քաղաքներում՝ 58,3%⁶: Համարյա բոլոր աշխատանքային միգրանտները, որոնք վերադառնում են Հայաստան, արական սեռի ներկայացուցիչներ են: 2014թ.

1 Ministry of Health, National Center for AIDS Prevention. (2015) Results from the HIV Biological and Behavioural Surveillance in the Republic of Armenia, 2014. Accessible at: ccmarmenia.am/images/uploads/bbc_report_2014_eng.pdf

2 European Training Foundation (2011). Migration Survey on the Relationship between Skills, Migration and Development in Armenia. Accessible at:

http://www.crrc.am/hosting/file/_static_content/projects/Migration_and_skills_2011/Migration_and_skills_Armenia.pdf

3 International Labour Organization. (2010). Migration and Development: Armenian Country Study, Yerevan. Accessible at: http://www.smsmta.am/upload/Migration%20and%20Development_Study_in_English.pdf.

4 World Health Organization. Data and statistics. Accessed on September 12, 2015 at: <http://www.euro.who.int/en/health-topics/communicable-diseases/hiv-aids/data-and-statistics>.

5 International Organization for Migration. (2013) Report on Household Survey on Migration in Armenia, Accessed at: http://publications.iom.int/bookstore/index.php?main_page=product_info&cPath=41_7&products_id=1400

6 International Labour Organization. (2010). Migration and Development: Armenian Country Study, Yerevan. Accessible at: http://www.smsmta.am/upload/Migration%20and%20Development_Study_in_English.pdf.

Հայաստանում իրականացված ՄԻԱՎ-ի վերաբերյալ բոլոր հետազոտությունների 1%-ը (n=9278) իրականացվել է աշխատանքային միգրանտների շրջանում, և նույն տարում արձանագրված ՄԻԱՎ վարակի 334 նոր դեպքերի 55%-ը գրանցվել է աշխատանքային միգրանտների, 18%-ը՝ նրանց զուգընկերների շրջանում⁷: Համաձայն 2014թ. Հայաստանի վեց մարզերի միգրանտների շրջանում հավանական ընտրանքի մեթոդով իրականացված կենսաբանական և վարքագծային հետազոտության արդյունքների՝ ՄԻԱՎ-ի տարածվածությունը նրանց շրջանում կազմել է մոտ 0,4%⁸: Նշված հետազոտության արդյունքների հավաստիության մեջ համոզվելու համար ՁԻԱՀ-ի կանխարգելման հանրապետական կենտրոնը (ՁԻԱՀ-ի ԿՀԿ) 2015թ. միգրանտների շրջանում իրականացրել է նոր հետազոտություն ընտրանքի ձևավորման այլ մեթոդի կիրառմամբ:

Ներկայումս չկան հավաստի տվյալներ ՀՀ վերադարձող քաղաքաբնակ միգրանտների վերաբերյալ: 2012թ. գյուղաբնակ և քաղաքաբնակ միգրանտների շրջանում իրականացվել է հետազոտություն, որի ընթացքում փորձ է արվել կիրառելու տնային տնտեսությունների պատահական ընտրանքի մեթոդ⁹: Այս մոտեցման կիրառումը դժվարություններ էր առաջացրել հատկապես մեծ քաղաքների մարդաշատ վայրերում, ինչի հետևանքով հետազոտությունն սկսելուց կարճ ժամանակ անց պատահական ընտրանքը վերածվել է ձնակույտի ընտրանքի:

Վերոնշյալ հետազոտության արդյունքները ցույց տվեցին, որ քաղաքաբնակ միգրանտներն ունեն սոցիալական ցանց: Սակայն առկա տեղեկատվությունը հնարավորություն չէր տալիս եզրակացնելու, թե արդյոք նրանք կապված են այնչափ, որ հնարավոր լինի կիրառել հավանականության վրա հիմնված ընտրանքային մեթոդաբանություն, ինչպես օրինակ ՄՄՁԸ-ն: Քաղաքաբնակ միգրանտների ներքին սոցիալական ցանցերը հասկանալու, նրանց շրջանում ՄՄՁԸ մեթոդով հետազոտություններ իրականացնելու հնարավորությունը գնահատելու նպատակով ՁԻԱՀ-ի ԿՀԿ-ն անցկացրել է որակական հետազոտություն: Որակական գնահատումն անցկացվել է 2016թ. Երևան, Գյումրի և Վանաձոր քաղաքներում:

7 International Organization for Migration. (2013) Report on Household Survey on Migration in Armenia, Accessed at: http://publications.iom.int/bookstore/index.php?main_page=product_info&cPath=41_7&products_id=1400

8 Ministry of Health, National Center for AIDS Prevention. (2015) Results from the HIV Biological and Behavioural Surveillance in the Republic of Armenia, 2014. Accessible at: ccmarmenia.am/images/uploads/bbc_report_2014_eng.pdf

9 International Organization for Migration. (2013) Report on Household Survey on Migration in Armenia, Accessed at: http://publications.iom.int/bookstore/index.php?main_page=product_info&cPath=41_7&products_id=1400

Նպատակներ

Որակական գնահատման նպատակներն էին.

- Հասկանալ և չափել ցանցային կապերի ուժը քաղաքաբնակ միգրանտների շրջանում (գիտեն արդյոք նրանք քաղաքաբնակ այլ միգրանտների նույն վայրում):
- Գնահատել նրանց սոցիալական ցանցի չափերը (որքան քաղաքաբնակ միգրանտների գիտեն, որ ճանաչում են իրենց):
- Հասկանալ խմբի ներքին ցանցի որակները (ինչպես են նրանք սոցիալապես կապված, ինչ են անում միասին):
- Գնահատել ՄՄՁԸ մեթոդով հետազոտություն անցկացնելու հնարավորությունը քաղաքաբնակ միգրանտների շրջանում (արդյոք նրանք կմասնակցեին հետազոտություններին, եթե վստահելի ընկերն առաջարկեր. ինչու՝ այո, և ինչու՝ ոչ):
- Գնահատել նշված խմբի սեռական և թմրանյութերի գործածմանն առնչվող ռիսկային վարքագիծը:

Հետազոտության մեջ ընդգրկվելու չափանիշներ

Ընտրանքի մեջ ընդգրկվելու չափանիշներն են՝

- արական սեռ,
- 18 տարեկան և ավելի,
- աշխատելու նպատակով 3 կամ ավելի ամիս (բայց ոչ ավելի, քան 12 ամիս վերջին մեկ տարվա ընթացքում) արտերկրում գտնված միգրանտ,
- ընտրված տարածքում բնակվող:

Հետազոտության մեջ ընդգրկվել են նշված չափանիշներին համապատասխանող անձինք: Որոշ դեպքերում ընտրանքի մեջ ներառվել են նաև այդ չափանիշներին չհամապատասխանող քաղաքաբնակ այնպիսի միգրանտներ, որոնք կարող էին տրամադրել տեղեկատվություն նպատակային խմբի մասին:

Մեթոդներ

Ֆոկուս խմբերի համար մասնակիցների հավաքագրում

Ֆոկուս խմբի համար մասնակիցները հավաքագրվել են անձնական կապերի կամ քաղաքաբնակ միգրանտներին ծառայություններ տրամադրողների միջոցով: Այլ աղբյուրներ են եղել ոլորտում աշխատող փորձագետները, միգրանտների հետ աշխատող հասարակական կազմակերպությունները: Ֆոկուս խմբերը կազմվել են միգրանտների տարբեր ենթախմբերից: Առաջին ֆոկուս խմբի համար մասնակիցների հավաքագրումից հետո հեշտացել է այլ ֆոկուս խմբերի համար նրանց հավաքագրումը:

Հարցազրույցների/ֆոկուս խմբերի անցկացում

Հարցազրույցները և ֆոկուս խմբերն անցկացվել են հարմարավետ վայրերում: Մինչև հարցազրույցը/ֆոկուս խումբը սկսելը ներկայացվել է տեղեկատվական թերթիկը (հավելված Ա), և բոլորից ստացվել է բանավոր համաձայնություն հետազոտությանը մասնակցելու համար: Այնուհետև հարցազրույցավարը բոլորի անունից ստորագրել է տեղեկացված համաձայնության ստացման վերաբերյալ ձևը: Հարցերը հարցազրույցի/ֆոկուս խմբի համար եղել են բաց և ձևակերպված այնպես, որ խթանեն բաց քննարկում (**հավելված Բ և Գ**), և ամբողջ գործընթացն իրականացվել է համաձայն որակական հետազոտության ուղեցույցի, որը մշակվել էր միջազգային խորհրդատուի կողմից: Ֆոկուս խումբը վարողը անցկացրել է քննարկումն այնպես, որ բոլոր մասնակիցներն առավելագույնս ներգրավվեն և պատասխանեն հարցերին: Վարողից բացի ֆոկուս խմբին մասնակցել է ևս մեկը, որն ընթացքում կատարել է գրառումներ:

Տվյալների վերլուծություն

Գրառումները թարգմանվել են անգլերեն և էլեկտրոնային տարբերակով ուղարկվել միջազգային խորհրդատուին դիտարկման, առաջարկությունների և դիտողությունների համար: Դրանք ներկայացվել են հետազոտությունն իրականացնողների և միջազգային խորհրդատուի միջև տեսակապի ժամանակ, որի ընթացքում քննարկվել են կատարված աշխատանքները, ավելացվել են տրվող հարցերը: Քննարկվել է նաև քաղաքաբնակ միգրանտների շրջանում հետազոտություններ իրականացնելու համար ՄՄՁԸ-ի կամ որևէ այլ մեթոդի կիրառման հնարավորությունը: Նախատեսվածից դուրս որևէ լրացուցիչ հարցազրույց անցկացնելու անհրաժեշտություն չի եղել, քանի որ ստացված տվյալները նոր տեղեկատվություն չեն պարունակել: Ձեկույցի նախագիծը պատրաստվել է միջազգային խորհրդատուի կողմից և վերջնականացվել ՁԻԱՀ-ի ԿՀԿ-ի մասնագետների հետ համատեղ:

Տվյալների հավաքագրման գործիքներ

Հարցազրույցի հարցաշարերը կիսաձևայնացված էին, որպեսզի հնարավոր լիներ կատարելու փոփոխություններ տվյալների հավաքագրման ընթացքում: Ուսումնասիրվող ընտրանքային մեթոդներն էին ժամանակատեղանքային ընտրանքը [TLS], կլաստերային ընտրանքը [CS], թիրախային ինստիտուցիոնալ ընտրանքը [TS], մասնակիցների միջոցով ձևավորվող ընտրանքը [RDS], ձևակույտի ընտրանքը [SB] և դրանց ձևափոխություններն ու համակցությունները:

- Ինչպես առավել լավ կլինի հայտնաբերել «սերմերը» (RDS, SB)
- Համապատասխան վայրեր հարցազրույցների/ծառայությունների համար (RDS, TLS, CS, SB, TS)
- Համապատասխան խրախուսումներ (RDS, TLS, CS, SB, TS)
- Ցանցի աստիճան (RDS, SB)
- Փորձանմուշների հավաքագրման և հետազոտման հնարավորություններ (RDS, TLS, CS, SB, TS)
- Այլ մասնակիցների ընդգրկելու պատրաստակամություն (RDS, SB)
- Հարցազրույցների հարցերի և հետազոտության ընթացքի ընդունելիություն ու կիրառելիություն (RDS, TLS, CS, SB, TS)
- Լաբորատոր փորձանմուշների հետազոտությունների կազմակերպման և արդյունքների տրամադրմանն առաջադրվող պահանջներ (RDS, TLS, CS, SB, TS)
- Խմբին պատկանելիության հաստատում (RDS, SB)
- Խմբի և անձնակազմի անվտանգության ապահովում (RDS, SB, TLS, CS, TS)

Ընտրանքային մեթոդ ընտրելու չափանիշները կարող են հիմնված լինել՝

- ներկայացուցչականության վրա. կարո՞ղ է ընտրանքային մեթոդը ձևավորել ընտրանք, որը կներկայացնի խումբը,
- արդյունավետության վրա. կարո՞ղ է ընտրանքային մեթոդը ձևավորել պահանջված ընտրանքի չափ վեց շաբաթից մինչև երկու ամսվա ընթացքում,
- հնարավորության և համընդհանուր կիրառելիության վրա. կարո՞ղ է ընտրանքային մեթոդը իրականացվել ստանդարտացված ձևով աշխարհագրական ընտրված վայրերում (մանրամասները տե՛ս **հավելվածներ Բ-ում և Գ-ում**):

Հարցաշարերում ներառված են եղել նաև հարցեր՝ ուղղված ռիսկային վարքագծի դրսևորումների բացահայտմանը՝ մշտական և պատահական զուգընկերներ,

կոմերցիոն սեռական ծառայություններ, հոմոսեքսուալ հարաբերություններ, ոչ ներարկային և ներարկային թմրամիջոցների գործածում:

Իրականացնող անձնակազմ

Հիմնական անձնակազմը ներգրավվել է ՁԻԱՀ-ի ԿՀԿ-ից: Նրանք գործել են որպես ֆոկուս խմբերի վարողներ, հարցազրուցավարներ խորը հարցազրույցի անցկացման ժամանակ և համակարգել են հանդիպումները, արել գրառումներ և կազմել արդյունքների վերաբերյալ հաշվետվություններ: Տեղական և միջազգային խորհրդատուների կողմից տրամադրվել է տեխնիկական աջակցություն ֆոկուս խմբերի վարման և ստացված արդյունքների մեկնաբանության համար՝ ընտրանքի ձևավորման վերջնական մեթոդաբանությունը որոշելու նպատակով:

Ստորև ներկայացված են հետազոտությունն իրականացրած հիմնական անձնակազմը և նրա իրականացրած աշխատանքները:

1. Տեղական խորհրդատու

- Համակարգել է որակական գնահատումը:
- Անցկացրել է վարժանք հարցազրուցավարների համար:
- Պատրաստել է գնահատման զեկույցը:

2. Հարցազրուցավարներ

- Անցկացրել են խորը հարցազրույցներ:
- Վարել են ֆոկուս խմբեր:
- Կատարել են գրառումներ և պատրաստել արդյունքների վերաբերյալ հաշվետվություններ:

3. Միջազգային խորհրդատու

- Մշակել է հետազոտության ուղեցույցը և հարցաշարերը:
- Տրամադրել է տեխնիկական աջակցություն որակական գնահատման արդյունքները մեկնաբանելու համար:
- Տրամադրել է տեխնիկական աջակցություն քաղաքաբնակ միգրանտների խմբի ընտրանքային մեթոդաբանության որոշման համար:
- Տրամադրել է տեխնիկական աջակցություն քաղաքաբնակ միգրանտների հետազոտության վերլուծության և արդյունքների մեկնաբանության համար:
- Տրամադրել է տեխնիկական աջակցություն հետազոտության վերջնական զեկույցը կազմելու համար:

Էթիկական հարցեր

Սույն հետազոտության ընթացքում պահպանվել են մարդկանց ներգրավմամբ հետազոտությունների էթիկական կողմին առնչվող սկզբունքները, ինչպես ներկայացված է Հելսինկիի հռչակագրում: Բոլոր հավաքագրված տվյալները եղել են անանուն, և անձը բացահայտող որևէ տեղեկատվություն չի հավաքագրվել:

Բանավոր տեղեկացված համաձայնություն

Մասնակիցները հնարավորություն են ունեցել ծանոթանալու, կամ նրանց համար ընթերցվել է բանավոր տեղեկացված համաձայնության ձևը (հավելված Ա): Նրանք նաև հնարավորություն են ունեցել տալու ցանկացած հարց հարցազրուցավարներին: Տեղեկացված համաձայնությունը ներառել է բոլոր ընթացակարգերը, հնարավոր վտանգները, օգուտները, նաև տեղեկատվություն այն մասին, թե ում դիմեն բողոքներ կամ մտահոգություններ հայտնելու համար: Բոլոր մասնակիցներն ազատ են եղել դադարեցնելու իրենց մասնակցությունը հետազոտության ցանկացած փուլում: Ստանալով տեղեկացված համաձայնություն՝ հարցազրուցավարները մասնակիցների անունից ստորագրել են այն, որպեսզի մասնակիցները խուսափեն անձնական տեղեկատվության ներկայացումից:

Տարիք

Հետազոտության մեջ ընդգրկվել են միայն 18 կամ ավելի բարձր տարիքի անձինք:

Արդյունքներ

Տվյալները հավաքագրվել են խորը հարցազրույցների և ֆոկուս խմբերի միջոցով Երևանում, Գյումրիում և Վանաձորում:

Խորը հարցազրույցներն անցկացվել են ՀԿ-ների ներկայացուցիչների շրջանում (Երևան, n=2, Գյումրի, n=3, Վանաձոր, n=3), միգրանտների շրջանում (Երևան, n=2, Գյումրի, n=2, Վանաձոր, n=2), տեղական ինքնակառավարման մարմինների (ՏԻՄ) և միգրանտներին ծառայություններ տրամադրող կազմակերպությունների ներկայացուցիչների շրջանում (Երևան, n=2, Գյումրի, n=3, Վանաձոր, n=2), միգրանտների շրջանում երբևէ ուսումնասիրություններ իրականացրած հետազոտողների շրջանում (Երևան, n=2, Վանաձոր, n=1) (աղյուսակ 1):

Աղյուսակ 1. Խորը հարցազրույցների մասնակիցներ

Խորը հարցազրույցների մասնակիցներ	Երևան	Գյումրի	Վանաձոր
ՀԿ-ներից	2	3	3
Միգրանտներ	2	2	2
Տեղական ինքնակառավարման մարմիններից և միգրանտներին ծառայություններ տրամադրող կազմակերպություններից	2	3	2
Հետազոտողներ	2	0	1
Ընդամենը	8	8	8

Անցկացվել է նաև 6 ֆոկլուս խմբային քննարկում 48 միգրանտի մասնակցությամբ Երևանում, Գյումրիում և Վանաձորում (աղյուսակ 2): Մասնակիցները եղել են նշված քաղաքների տարբեր համայնքներից, տարիքը եղել է Երևանում՝ 22-44, Գյումրիում՝ 19-50, Վանաձորում՝ 25-54 միջակայքում: Ընդհանուր առմամբ մասնակիցների 41,1%-ը եղել է 20-29, 43,8%-ը՝ 30-39, 14,6%-ը՝ 40-49, 10,4%-ը՝ 50-59 տարեկան:

Աղյուսակ 2. Ֆոկլուս խմբերի (ՖԽ) մասնակիցները՝ ըստ քանակի, ներկայացրած համայնքների և տարիքի

Ֆոկլուս խմբերի մասնակիցներ	Երևան		Գյումրի		Վանաձոր	
	ՖԽ 1	ՖԽ 2	ՖԽ 1	ՖԽ 2	ՖԽ 1	ՖԽ 2
	7	9	8	8	8	8
Ներկայացրած համայնքներ	Կայարան Բանգլադեշ Կոմիտաս Շենգավիթ Նորագավիթ Նոր Նորք Ավան Նորք-Մարաշ Դավիթաշեն Մալաթիա Սեբաստիա		Փափախանա Մուշ 58 թաղամաս Սլաբոտկա ԴԱ Տեքստիլ Չուլոչնի 48 Կամոյի փողոց Սավոյան փողոց Կոմիտասի փողոց Գորկու փողոց		Կոնգո Տարոն Լճեր Դիմաց Կայարան Կենտրոն Բոշի թաղ Ջունգլիներ Ծալկութ Դարպաս	
Տարիքը	Միջին 33	Միջակայք 22-44	Միջին 32	Միջակայք 19-50	Միջին 39	Միջակայք 25-54

Ստորև ներկայացված են հետազոտության ամփոփ արդյունքները: Ավելի մանրամասն արդյունքները՝ ըստ քաղաքի, հարցազրույցի տիպի (ֆոկուս խումբ կամ խորը հարցազրույց) և բովանդակության, ներկայացված են **հավելվածներ Դ, Ե և Զ-ում**: Տեղական խորհրդատուի կողմից կատարված արդյունքների ամփոփումը ներկայացված է **հավելված Է-ում**:

Արդյունքների ամփոփում

Քաղաքաբնակ միգրանտների ընտրանքի հավաքագրման մեթոդը

Քաղաքաբնակ միգրանտները բոլոր երեք քաղաքներում ունեն մեծ և բազմազան սոցիալական ցանցեր, ինչը ցույց է տալիս, որ «հավասարը՝ հավասարին» հավաքագրումը հնարավոր է: Միգրանտները նշել են, որ գիտեն միջինը 14-15 այլ միգրանտի, սակայն քաղաքների միջև տարբերությունները զգալի են: Այսպես՝ Գյումրիում այդ թիվը կազմել է 21, Վանաձորում՝ 15, Երևանում՝ 10-11: Միգրանտները ճանաչում են միմյանց որպես ընկերներ, ծանոթներ, բարեկամներ, հարևաններ և աշխատակիցներ և հանդիպում են տարբեր առիթներով, տոների ժամանակ սրճարաններում, ռեստորաններում, տներում: Մեկնելուց առաջ հանդիպում են որոշակի հարցեր քննարկելու, ծրագրելու նպատակով, հանդիպում են նաև արտերկրում աշխատելիս: Ըստ միգրանտների՝ նրանք ունեն այլ միգրանտների հետ հաղորդակցվելու կարիք աշխատանք գտնելու համար, որպես ճանապարհի ընկերներ և տեղեկատվության աղբյուր: Միգրանտները նշել են, որ իրենց համար հեշտ է այլ միգրանտների հետ կապ հաստատելը, և իրենք կարող են գտնել միգրանտների հետազոտությանը մասնակցելու համար: Սակայն միգրանտների 15%-ը Երևանում, 19%-ը Գյումրիում և 38%-ը Վանաձորում նշել են, որ նախորդ մեկ ամսվա ընթացքում չեն հաղորդակցվել այլ միգրանտների հետ: Միգրանտները նշել են, որ իրենք ևս հետաքրքրված են հետազոտությանը մասնակցությամբ: Միգրանտներից ոմանք նշել են նաև, որ որոշ մարդիկ չեն մասնակցի, ինչը հնարավոր է ցանկացած հետազոտության ժամանակ:

Հաշվի առնելով սոցիալական ցանցերի ուժը հետազոտության մեջ ներառված համայնքներում և հավանական ընտրանքի մեթոդ կիրառելու կարիքը՝ այլ մեթոդներից առավել նախընտրելի է ՄՄՁԸ մեթոդը: Չնայած ակնհայտ է, որ նշված մեթոդը լավ կաշխատի Գյումրիում և Վանաձորում, այնուամենայնիվ Երևանում, հաշվի առնելով ցանցերի տեսակը, ՄՄՁԸ մեթոդը կարող է չաշխատել: Քննարկումների հիման վրա արտահայտվել է կարծիք, որ Երևանում ցանցերը կարող են լինել փակ խմբերի ձևով, ինչը կարող է պատճառ հանդիսանալ սակավաթիվ հավաքագրման ալիքների մինչև հետազոտության ավարտը: Այսպիսի ցանցերը թույլ չեն տա բազմաթիվ ալիքների գոյացման, որոնք անհրաժեշտ են երկար հավաքագրման շղթաներ ստեղծելու, ոչ

պատահականորեն ընտրված «սերմերի» շեղումը նվազեցնելու համար (այսինքն՝ կարող են հանգեցնել հնարավոր սերմերի շեղման): Այս իրավիճակի համար հնարավոր լուծում է ՄՄՁԸ մեթոդով հետազոտություն սկսելը՝ հնարավորություն տալով վերափոխվելու ճնակույտի մեթոդով ընտրանքի, եթե ՄՄՁԸ-ն չաշխատի: Նման դեպքում կա հնարավորություն ստանալու հավանական ընտրանք (ՄՄՁԸ), սակայն դրա չաշխատելու դեպքում կլինեն որոշ տվյալներ վերլուծելու համար (ճնակույտի մեթոդ): Ժամանակատեղանքային ընտրանքը չի աշխատի, քանի որ միգրանտները ժամանակ չեն անցկացնում հատուկ վայրերում, որոնք կարող էին քարտեզագրվել և հեշտ գտնվել:

Խրախուսումներ

Բոլոր հարցվողները նշել են, որ խրախուսումները հետազոտության անհրաժեշտ մասն են: Դրամական խրախուսման չափի վերաբերյալ առաջարկները տատանվել են Երևանում և Գյումրիում՝ 10000-15000 դրամի սահմաններում, Վանաձորում՝ մինչև 5000 դրամի սահմանում: Խրախուսման այլ ձևերի թվում նշվել են հեռախոսի լիցքավորման քարտերը, կենցաղային ապրանքները, սնունդ կամ քաղցրավենիքը, անվճար ընդհանուր բժշկական և սեռավարակների վերաբերյալ հետազոտությունները: «Հավասարը՝ հավասարին» հավաքագրման մեթոդաբանությունը նույնպես կմոտիվացնեի միգրանտներին՝ մասնակցելու հետազոտությանը, քանի որ հավաքագրվողները հակված են ընդունելու իրենց ընկերների առաջարկը:

Հետազոտողներից մեկի կարծիքով սույն հետազոտության համար առաջարկված խրախուսումները կարող են բացասաբար անդրադառնալ հետազոտում միգրանտների շրջանում իրականացվելիք այլ հետազոտությունների վրա, քանի որ միգրանտները կարող են ակնկալել խրախուսումներ մասնակցության համար: Ուստի խրախուսումը չպետք է լինի շատ բարձր՝ հնարավորություն տալով այլ հետազոտողների և ՀԿ-ների ծրագրելու հետագա հետազոտությունները:

ՄԻԱՎ-ի վերաբերյալ հեղազոտություն

Խորը հարցազրույցների ժամանակ հարցվողների մեծ մասը նշել է, որ միգրանտները մտահոգված չեն իրենց առողջությամբ և ՄԻԱՎ վարակը չեն դիտարկում որպես խնդիր: Սակայն Երևանում առկա էր էական տարբերություն: Ըստ հետազոտողների՝ այստեղ միգրանտները մտահոգված են իրենց առողջությամբ, մինչդեռ այլ հարցման այլ մասնակիցներ նշել են հակառակը: Ֆոկուս խմբի մասնակցող միգրանտները նշել են, որ հետաքրքրված են իրենց առողջությամբ և անգամ առաջարկել են սեռավարակների վերաբերյալ հետազոտությունները՝ որպես խրախուսում:

Հետազոտության ժամանակ գաղտնիության պահպանումն ու անանունությունը, հատկապես ՄԻԱՎ-ի վերաբերյալ հետազոտության առումով, հարցվողների համար նշվել է որպես առաջնահերթություն: Ուստի միգրանտների մասնակցությունն ապահովելու համար անհրաժեշտ է հստակ նկարագրել գաղտնիության և անանունության պահպանման մեթոդները:

Ռիսկային սեռական վարքագիծ

Հարցաշարերը պարունակել են հարցեր՝ բացահայտելու ռիսկային սեռական վարքագծի դրսևորումները: Հարցերը վերաբերել են այն միգրանտներին, որոնց ճանաչել են ֆոկուս խմբի մասնակիցները (ոչ թե իրենց մասին) անանունություն ապահովելու նպատակով: Ֆոկուս խմբերի և խորը հարցազրույցների գրեթե բոլոր մասնակիցները նշել են, որ արտերկրում միգրանտներն ունենում են և՛ մշտական, և՛ պատահական զուգընկերներ, բայց մեծամասնությունն ունենում է մշտական զուգընկեր: Լրացուցիչ հետազոտությունների կարիք կա «մշտական» զուգընկեր սահմանելու համար, քանի որ ոմանք մշտական են համարում և՛ այն զուգընկերներին, որոնց համարում են հավատարիմ և որոնց հետ ունենում են կարճատև կապեր, և՛ այն զուգընկերներին, որոնց հետ ունենում են մոնոգամ, երկարատև կապեր հաճախակի բաժանումներով:

Պահպանակների օգտագործման մասին հարցվողների պատասխանները տարբեր էին: Ընդհանուր առմամբ պահպանակների օգտագործումն ունի ոչ մշտական բնույթ: Հարցվողների մեծ մասը նշել է, որ տղամարդիկ օգտագործում են պահպանակներ պատահական զուգընկերների կամ մարմնավաճառների հետ, բայց չեն օգտագործում մշտական զուգընկերների հետ: Որոշ հարցվողներ նշել են, որ ալկոհոլի ազդեցությամբ, դիսկոտեկում կամ նմանատիպ վայրերում ծանոթացած զուգընկերների հետ տղամարդիկ հիմնականում չեն օգտագործում պահպանակ:

Համարյա ոչ ոք չէր լսել տղամարդկանց հետ սեռական հարաբերություններ ունեցող միգրանտ տղամարդկանց մասին, թեև մի հետազոտող նշել է, որ դա առկա է, բայց ոչ ոք չի ցանկանում խոսել այդ մասին:

Թմրամիջոցների գործածումը

Քիչ միգրանտներ են անձամբ ճանաչում միգրանտների, որոնք գործածում են թմրամիջոցներ, բայց շատերը լսել են որոշ տեսակի թմրամիջոցներ (օրինակ՝ մարիխուանա կամ հաշիշ) գործածող միգրանտների մասին: Նշվել է նաև շնչելու միջոցով գործածվող թմրամիջոցների մասին: Հարցվողները գործնականում տեղյակ չէին ներարկային ճանապարհով թմրամիջոցներ գործածողների մասին: Ոմանք նշել են, որ ներարկային ճանապարհով թմրամիջոցներ գործածող անձինք աշխատանքի չեն ընդունվի: Որոշ միգրանտների կարծիքով ներարկային թմրամիջոցներ գործածում

են համեմատաբար ավելի երկար ժամանակ արտերկրում բնակվող և աշխատող միգրանտները:

Հեղափոխություններ

Համարյա բոլոր հարցվողները նշել են, որ իրենց հետ կարելի է նորից կապ հաստատել, և նրանք կցանկանան մասնակցել և/կամ օգնել հետազոտությունների պլանավորման հարցում: Որոշ հարցվող միգրանտներ կարող են դառնալ լավ «սերմեր», եթե ընտրվի ՄՄՁԸ-ն կամ ձևակույտի ընտրանքի մեթոդը:

Այլ հարցեր

Ժամկետները

Որոշ հարցեր հստակեցվել են հետազոտության ընթացքում: Մասնավորապես այն, որ հունվարի վերջը և փետրվարը բարեհաջող ժամանակ չեն միգրանտներ հավաքագրելու համար, քանի որ նրանցից շատերն արդեն մեկնած կլինեն արտերկիր: Անհրաժեշտ է հետազոտություններն անցկացնել այն ժամանակահատվածում, երբ սեզոնային միգրանտները դեռևս կլինին Հայաստանում:

Տարբեր համայնքների հասանելիությունը

Քաղաքներում կան շատ համայնքներ, և պետք է ջանալ ապահովել դրանց միջև հասանելիությունը, որպեսզի միգրանտները կարողանան հեշտությամբ հասնել հարցազրույցի վայր և ներկայացնեն տարբեր համայնքներ (օրինակ՝ խուսափեն աշխարհագրական խոչընդոտներից, ինչի հետևանքով միգրանտները Ա համայնքից կարող են չիմանալ և չհավաքագրել միգրանտների Բ կամ Գ համայնքից):

Բրիգադներ հավաքագրողներ

Հաշվի առնելով բրիգադներ հավաքագրողների ազդեցությունը՝ կարևոր է ապահովել նրանց մասնակցությունը հետազոտության պլանավորման գործընթացում: Բրիգադներ հավաքագրողները կարող են լինել համայնքներում ճանաչված մարդիկ, և նրանց հեղինակությունը պետք է բարձրացվի հետազոտության հաջողությունն ապահովելու համար: Նրանք կարող են նաև որոշակի դեր ունենալ այլ մարդկանց հետազոտությանը մասնակցելուն խրախուսելու հարցում:

Հետազոտության վայրի պայմանները և մասնակիցների սկրինինգը

Միգրանտները նշել են, որ հետազոտությանը մասնակցելու խոչընդոտ կարող են լինել հերթերում սպասելը և հետազոտության վայրի հասանելիությունը նրանց համար, ովքեր չունեն փոխադրամիջոց: Դրանից խուսափելու համար անհրաժեշտ է ներգրավել միգրանտներին հետազոտությունը ծրագրելիս: Խրախուսումը պետք է բավարար լինի հետազոտության տեղամաս հասնելու և վերադառնալու համար: Հերթերից խուսափելու համար հարկավոր է նախապես որոշել ժամերը:

Որոշ համայնքներում, որտեղ գործազրկությունը բարձր է, անհրաժեշտ է իրականացնել սկրինինգ՝ համոզվելու, որ մասնակիցը սեզոնային միգրանտ է: Դրա համար կարող են մշակվել հարցեր միգրանտների օգնությամբ: Որպես այլընտրանք՝ կարելի է նայել մասնակիցների անձնագրերում առկա կնիքները:

Առաջարկություններ

- Կիրառել ՄՄՁԸ մեթոդը Գյումրիում և Վանաձորում արական սեռի սեզոնային աշխատանքային միգրանտների ընտրանք ձևավորելու համար:
- Փորձել կիրառել ՄՄՁԸ-ն Երևանում և վերափոխել ձևակույտի ընտրանքի, եթե այն չաշխատի: Ընտրանքային այլ մեթոդներ հավանաբար կիրառելի չեն լինի՝ հաշվի առնելով, որ հնարավոր չէ ունենալ միգրանտների ընտրանքային ցուցակ, և միգրանտները չունեն ժամանցի հստակ վայրեր:
- Փորձել օգտագործել ֆոկուս խմբերի որոշ միգրանտների՝ որպես «սերմեր», սկրինները կամ անձնակազմի այլ անդամներ:
- Խրախուսումը սահմանել 10 000 դրամից ոչ ավելի. բավարար կլինի 5000 կամ 8000 դրամը: Ավելի քիչ գումար հնարավոր է ընդունելի լինի Գյումրիում և Վանաձորում:
- Խրախուսումը չպետք է լինի շատ բարձր՝ հնարավորություն տալով այլ հետազոտողների և ՀԿ-ների ծրագրելու հետագա հետազոտությունները:
- Հանդիպել բրիգադներ հավաքագրողների հետ հետազոտությանը նրանց աջակցության նպատակով:
- Յուրաքանչյուր քաղաքում ուսումնասիրել համայնքների միջև հնարավոր խոչընդոտները, որոնք կարող են ազդել հետազոտության աշխարհագրական սահմանների վրա (օրինակ՝ մասնակիցներ ընդգրկելիս պետք է նախապատվությունը տալ այն համայնքներին, որոնք ավելի հասանելի են միգրանտ-

ներին, և որտեղ մի համայնքի միգրանտները հնարավոր է իմանան միգրանտների այլ համայնքներից):

- Հետազոտությունը ծրագրել այն ժամանակահատվածում, երբ առավելագույն թվով միգրանտներ կլինեն Հայաստանում:
- Գտնել լավագույն տարբերակը՝ հավաստիացնելու մասնակիցներին հետազոտության գաղտնիության և անանունության պահպանման հարցում նախքան հետազոտությունը և դրա ընթացքում:
- Մշակել և փորձարկել գործիքներ՝ բացառելու հետազոտությանը այն մարդկանց մասնակցությունը, որոնք միգրանտներ չեն:
- Իրականացնել ՄԻԱՎ-ի և սեռավարակների վերաբերյալ հետազոտություններ, տրամադրել դրանց արդյունքները մասնակիցներին և անհրաժեշտության դեպքում կատարել ուղեգրումներ խնամքի և բուժման համար:
- Տալ մշտական գույքընկերների հստակ սահմանում:
- Աշխատանքները կազմակերպել այնպես, որ չլինեն երկար հերթեր:
- Հարցաշարը կազմել այնպես, որ հնարավոր լինի գնահատել սեռական և թմրամիջոցների գործածման հետ կապված ռիսկային վարքագիծը Հայաստանում և արտերկրում:

**Տեղեկատվական թերթիկ քաղաքաբնակ միգրանտների շրջանում
հետազոտության համար**

Ներկայացում

Բարև Ձեզ, իմ անունը _____ է: Շնորհակալություն, որ համաձայնել եք մասնակցել սույն հետազոտությանը: Մենք մասնավորապես հետաքրքրված ենք արական սեռի, 18 տարեկան և ավելի, աշխատելու նպատակով 3 կամ ավելի ամիս (բայց ոչ ավելի, քան վերջին մեկ տարվա ընթացքում) արտերկրում գտնված, քաղաքում ապրող մարդկանցով:

Հարցազրույցները, որոնք մենք անցկացնում ենք, հետազոտության մաս են կազմում, որը համակարգվում է ՁԻԱՀ-ի կանխարգելման հանրապետական կենտրոնի կողմից՝ նպատակ ունենալով ծրագրելու Հայաստանի քաղաքային համայնքներում արական սեռի սեզոնային աշխատանքային միգրանտների շրջանում հետագա հետազոտությունը: Տեղեկատվությունը, որը մենք հավաքագրում ենք, կօգնի մեզ ուժեղացնելու ՄԻԱՎ վարակի կանխարգելման ծրագրերն այս խմբի շրջանում: Այս հարցազրույցը/ֆոկուս խումբը կտևի մոտ 45 րոպե: Դուք ընտրվել եք մասնակցելու այս հարցազրույցին/ֆոկուս խմբին, որովհետև տեղյակ եք Ձեր քաղաքում միգրացիային առնչվող խնդիրներին: Իմացե՛ք, որ Ձեր պատասխանները կմնան գաղտնի, և ցանկացած մեկնաբանություն, որ կանեք հարցազրույցի/ֆոկուս խմբի ժամանակ, որևէ կերպ չի առնչվի ձեր անձի հետ: Ձեր մասնակցությունն այստեղ լիովին կամավոր է և հարցազրույցի (քննարկման) ցանկացած պահի կարող է ընդհատվել, եթե Դուք անհարմար եք զգում: Դուք կարող եք ընդհատել, պարզաբանել Ձեր անհարմարությունը, պայմանավորվել մեկ այլ անգամ հանդիպելու համար կամ նույնիսկ հեռանալ: Ձեր ազնիվ և անմիջական պատասխանները մեր հարցերին բարձր են գնահատվում: Եթե համաձայն եք մասնակցել այս հետազոտությանը, ես կշարունակեմ:

Դուք կցանկանա՞ք մասնակցել:

Եթե այո, շարունակե՛ք: Եթե ոչ, շնորհակալություն հայտնե՛ք և վերջացրե՛ք:

Հարցազրույցավարի ստորագրությունը, որով նա հաստատում է, որ պատասխանողը տվել է բանավոր տեղեկացված համաձայնություն:

Հարցազրույցի ուղեցույց-հիմնական իրազեկողներ

Նշում՝ ոչ բոլոր հարցերը կարող են համապատասխանել բոլոր հարցվողներին

Համաձայնություն (ամփոփել համաձայնության ձևը, պատասխանել հարցերին, հարցազրուցավարի ստորագրություն)

Ինչպես գիտեք համաձայնության ձևից, մենք անցկացնելու ենք հետազոտություն ՀՀ քաղաքաբնակ արական սեռի, սեզոնային աշխատանքային միգրանտների շրջանում: Մենք կցանկանայինք ավելին իմանալ ձեզնից, թե ինչպես գտնել այս խմբի մարդկանց հարցումն անցկացնելու համար: Սա կտևի մոտ մեկ ժամ: Դուք ունե՞ք հարցեր մինչև սկսելը:

Դոմեն 1. ընդհանուր տեղեկատվություն խմբի մասին

- Դուք գիտե՞ք արական սեռի, 18 տարեկան և ավելի, աշխատելու նպատակով 3 կամ ավելի ամիս (բայց ոչ ավելի, քան վերջին մեկ տարվա ընթացքում) արտերկրում գտնված, այս քաղաքում ապրող մարդկանց:
- Դուք գիտե՞ք այս բնութագրիչներով կանանց:
- Ինչպե՞ս եք ճանաչում նրանց:

Եթե տրամադրում են նրանց ծառայություններ կամ առնչվում են նրանց հետ հետազոտության բերումով, ճշտե՞ք՝ ինչ տիպի ծառայություններ և հետազոտություններ կամ այլ միջոցառումներ են իրականացնում:

- Ցանկության դեպքում հեշտ կլինի՞ Ձեզ համար կապ հաստատել նրանց հետ: Ունե՞ք նրանց հեռախոսահամարները: Որքա՞ն հաճախ եք տեսնում նրանց: Նրանցից քանիսի՞ն գիտեք:
- Եթե խնդրենք Ձեզ տալու Ձեր ճանաչած 18 տարեկան և ավելի, աշխատելու նպատակով 3 կամ ավելի ամիս (բայց ոչ ավելի, քան վերջին մեկ տարվա ընթացքում) արտերկրում գտնված և այս քաղաքում ապրող տղամարդկանց հետ կապ հաստատելու համար անհրաժեշտ տեղեկություններ նրանց հետ անանուն հարցում անցկացնելու նպատակով, Դուք հարմար կզգայի՞ք՝ անելով դա:
- Փողոցում քայլելիս կարո՞ղ է քաղաքային միգրանտը հեշտությամբ ճանաչվել: Ինչպե՞ս:
- Որքա՞ն է մեծ այս խմբի ցանցը (միայն նույն հարևանությամբ, քաղաքում, քաղաքից դու՛րս):


- Աշխատանքից դուրս նրանք հանդիպում են որևէ վայրում: Որտե՞ղ (վայրի անվանումը և հասցեն):
- Այս քաղաքի ո՞ր հատվածներում են ապրում արական սեռի սեզոնային միգրանտները:
- Նրանք ձևավորում են աջակցության խմբեր (նկարագրե՛ք):
- Դուք գիտե՞ք այս քաղաքում վայր, որտեղ քաղաքի միգրանտները կարող են հետազոտվել ՄԻԱՎ-ի վերաբերյալ: Դուք կարծու՞մ եք, որ քաղաքի միգրանտները մտահոգվում են ՄԻԱՎ վարակի խնդրով: Ինչու՞ այո և ինչու՞ ոչ:

Դոմեն 2. Խմբի ընտրանքը

ՀԱՐՑԱԶՐՈՒՑԱՎԱՐ: Եթե կան ցանցերի նշաններ, շարունակե՛ք հետևյալ կերպ.

Թույլ տվեք բացատրել Ձեզ ընտրանքի մի մեթոդ, որ ցանկանում ենք կիրառել 18 տարեկան և ավելի, աշխատելու նպատակով 3 կամ ավելի ամիս (բայց ոչ ավելի, քան վերջին մեկ տարվա ընթացքում) արտերկրում գտնված և այս քաղաքում ապրող տղամարդկանց գտնելու համար, որպեսզի ընդգրկենք մեր հետազոտության մեջ: Այս մեթոդը սկսվում է՝ ընտրանքի համար համապատասխան մարդուն մինչև երեք կտրոն տալով, որպեսզի նա տա դրանք այլ համապատասխան մարդկանց: Յուրաքանչյուր համապատասխան մարդու համար, որը կգա հավաքագրողի կողմից տրված կտրոնով, հավաքագրողը կստանա փոխհատուցում (մի փոքր գումար կամ նվեր): Յուրաքանչյուր համապատասխան մարդ կանցնի հարցազրույց և ՄԻԱՎ-ի վերաբերյալ անվճար հետազոտություն, կստանա ՄԻԱՎ վարակի կանխարգելման մասին տեղեկատվություն, փոխհատուցում և մինչև երեք կտրոն այլ համապատասխան մարդկանց տալու համար: Այս հավաքագրման գործընթացը անցնում է բազմաթիվ ընտրանքային ալիքներով, մինչև կձևավորվի ընտրանքի չափը: Կտրոնների օգտագործումը հնարավորություն է տալիս բոլոր մասնակիցներին մնալու չբացահայտված (այսինքն՝ նրանք ունեն միայն հատուկ համար կտրոնում, չկա ո՛չ անուն, ո՛չ հեռախոսահամար կամ այլ տեղեկատվություն, որի հիման վրա հնարավոր լիներ գտնել նրանց հարցազրույցի տեղամասից հեռանալուց հետո): Կտրոն ստացած անձն ինքն է կայացնում որոշում հետազոտությանը մասնակցելու կամ դրանից հրաժարվելու մասին:

Ութ ալիքների հավաքագրման շղթա մեկ սերմից¹⁰:



Կարծում եք քաղաքի միգրանտները կցանկանայի՞ն մասնակցել այսպիսի հետազոտության: Ինչու՞ այո և ինչու՞ ոչ:

- Կցանկանայի՞ն նրանք անցնել ՄԻԱՎ-ի վերաբերյալ հետազոտություն, եթե դա լիներ անանուն և գաղտնի:
- Ի՞նչը կլիներ համապատասխան նվեր կամ խթան՝ հետազոտությանը մասնակցելու համար: Բերե՛ք հստակ օրինակներ:
- Ի՞նչ եք կարծում, որոնք են դժվարություններն այսպիսի հետազոտություն անցկացնելու համար:

Ուղղե՛ք այս հարցերը մարդկանց, ովքեր կունենան տեղեկատվություն միգրանտների ռիսկային վարքագծի մասին:

Դոմեն 3. սեռական վարքագիծ

- Դուք գիտե՞ք կամ լսե՞լ եք Հայաստանի քաղաքային համայնքներից արական սեռի սեզոնային աշխատանքային միգրանտների մասին, ովքեր արտերկրում գտնվելիս ունենում են սեռական զուգընկերներ կամ ընկերուհիներ:
- Դուք գիտե՞ք կամ լսե՞լ եք Հայաստանի քաղաքային համայնքներից արական սեռի սեզոնային աշխատանքային միգրանտների մասին, ովքեր արտերկրում գտնվելիս օգտվում են մարմնավաճառների ծառայություններից:

10 Johnston L, Sabin K. Échantillonnage determine selon les répondants pour les populations difficiles à joindre (in French) or Sampling hard-to-reach populations with respondent driven sampling (In English). Methodological Innovations Online. 2010;5(2):38-48.

- Դուք գիտե՞ք կամ լսե՞լ եք, որ այս տղամարդիկ օգտագործեն պահպանակներ արտերկրում աշխատելիս կանանց հետ սեռական հարաբերություններ ունենալու ժամանակ: Տարածվա՞ծ է պահպանակների օգտագործումը պատահական զուգընկերների հետ սեռական հարաբերություն ունենալիս: Տարածվա՞ծ է պահպանակների օգտագործումը կոմերցիոն զուգընկերների հետ:
- Դուք լսե՞լ եք սեզոնային միգրանտների մասին, ովքեր արտերկրում գտնվելիս ունենում են սեռական հարաբերություններ տղամարդկանց հետ: Ըստ Ձեզ՝ դա տարածվա՞ծ երևույթ է:

ՀԱՐՑԱԶՐՈՒՑԱՎԱՐ: Օգտագործե՛ք պատասխանները ռիսկային սեռական վարքագիծը բացահայտող այլ հարցեր կառուցելու համար:

Դոմեն 4. թմրամիջոցների գործածումը

- Դուք գիտե՞ք կամ լսե՞լ եք Հայաստանի քաղաքային համայնքներից արական սեռի սեզոնային աշխատանքային միգրանտների մասին, ովքեր արտերկրում գտնվելիս օգտագործում են թմրամիջոցներ: Եթե այո, ապա ի՞նչ տեսակի:
- Դուք գիտե՞ք կամ լսե՞լ եք Հայաստանի քաղաքային համայնքներից արական սեռի սեզոնային աշխատանքային միգրանտների մասին, ովքեր արտերկրում գտնվելիս գործածում են ներարկային թմրամիջոցներ: Եթե այո, ապա ի՞նչ տեսակի:
- Կարո՞ղ եք նկարագրել, թե ինչպես են նրանք ներարկում թմրամիջոցները. ներարկում են այլ մարդկանց հետ, օգտագործում են նույն ներարկիչը և ասեղները, օգտվում են նույն պարագաներից:

Դոմեն 5. հետազա քայլեր

- Դուք կցանկանայի՞ք մեզ օգնել՝ գտնելու արական սեռի սեզոնային աշխատանքային միգրանտների այս պլանավորված հետազոտության մեջ ընդգրկելու համար:
- Դուք կցանկանայի՞ք մեզ օգնել՝ գտնելու արական սեռի սեզոնային աշխատանքային միգրանտների ֆոկուս խմբերի մասնակցելու համար:
- Կարո՞ղ եք նշել ինչ-որ ծառայություններ կամ մարդկանց, ովքեր աշխատում են սեզոնային աշխատանքային միգրանտների հետ:
- Դուք կցանկանայի՞ք նորից խոսել մեզ հետ այսպիսի հետազոտություն ծրագրելու մասին:

Դուք ունե՞ք հարցեր:

Շնորհակալություն Ձեր տրամադրած ժամանակի համար:

Հարցազրույցի ուղեցույց-ֆոկուս խմբեր

Մասնակիցները պետք է լինեն նրանք, ովքեր համապատասխանում են ընտրանքի մեջ ընդգրկվելու չափանիշներին:

Համաձայնություն (ամփոփել համաձայնության ձևը, պատասխանել հարցերին, հարցազրույցավարի ստորագրություն):

Ինչպես գիտեք համաձայնության ձևից, մենք անցկացնելու ենք հարցում ՀՀ քաղաքաբնակ արական սեռի սեզոնային աշխատանքային միգրանտների շրջանում: Մենք կցանկանայինք ավելին իմանալ ձեզանից, թե ինչպես գտնել այս խմբի մարդկանց՝ հարցում անցկացնելու համար: Սա կտևի մոտ մեկ ժամ: Դուք ունե՞ք հարցեր մինչ սկսելը:

Դոմեն 1. ընդհանուր տեղեկատվություն խմբի մասին

Նրանց համար, ովքեր համապատասխանում են ընտրանքի մեջ ներառվելու չափանիշներին:

- Դուք գիտե՞ք արական սեռի, 18 տարեկան և ավելի, աշխատելու նպատակով 3 կամ ավելի ամիս (բայց ոչ ավելի, քան վերջին մեկ տարվա ընթացքում) արտերկրում գտնված որևէ մարդու:
- Ինչպե՞ս եք ճանաչում նրանց: Դուք շփվո՞ւմ եք նրանց հետ: Ի՞նչ եք անում միասին:
- Ցանկության դեպքում հեշտ կլինի՞ Ձեզ համար կապ հաստատել նրանց հետ: Ունե՞ք նրանց հեռախոսահամարները: Որքա՞ն հաճախ եք տեսնում նրանց:
- 18 տարեկան և ավելի, աշխատելու նպատակով 3 կամ ավելի ամիս (բայց ոչ ավելի, քան 12 ամիս վերջին մեկ տարվա ընթացքում) արտերկրում գտնված և այս քաղաքում ապրող քանի՞ տղամարդու գիտեք: Նրանցից քանիսի՞ն եք տեսել վերջին մեկ ամսվա ընթացքում (կարելի է խնդրել ֆոկուս խմբի անդամներին թղթի վրա գրել և տալ Ձեզ):
- Եթե խնդրենք Ձեզ տալ Ձեր ճանաչած 18 տարեկան և ավելի, աշխատելու նպատակով 3 կամ ավելի ամիս (բայց ոչ ավելի, քան վերջին մեկ տարվա ընթացքում) արտերկրում գտնված և այս քաղաքում ապրող տղամարդկանց հետ կապ հաստատելու համար անհրաժեշտ տեղեկություններ նրանց հետ անանուն հարցում անցկացնելու նպատակով, Դուք կանե՞ք դա (ձնակույտի ընտրանքի նշան):


- Եթե խնդրենք Ձեզ բերել Ձեր ճանաչած 18 տարեկան և ավելի, աշխատելու նպատակով 3 կամ ավելի ամիս (բայց ոչ ավելի, քան վերջին մեկ տարվա ընթացքում) արտերկրում գտնված և այս քաղաքում ապրող տղամարդկանց՝ հետազոտության մեջ նրանց ընդգրկելու նպատակով, քանի՞ մարդ կկարողանաք բերել (ՄՄՁԸ-ի նշան):
- Փողոցում քայլելիս Դուք կարո՞ղ եք հեշտությամբ ճանաչել մեկին, ով աշխատում է այլ երկրում: Ինչպե՞ս:
- Որքա՞ն է մեծ 18 տարեկան և ավելի, աշխատելու նպատակով 3 կամ ավելի ամիս (բայց ոչ ավելի, քան վերջին մեկ տարվա ընթացքում) արտերկրում գտնված և այս քաղաքում ապրող տղամարդկանց ցանցը (միայն նույն հարևանությամբ, քաղաքում, քաղաքից դու՞րս)
- Աշխատանքից դուրս Դուք հանդիպու՞մ եք Ձեր միգրանտ ընկերների հետ որևէ վայրում: Որտե՞ղ (վայրի անվանումը և հասցեն):
- Այս քաղաքի ո՞ր հատվածներում են արական սեռի սեզոնային միգրանտներն ապրում:
- Դուք ունե՞ք արական սեռի սեզոնային միգրանտների աջակցության խմբեր (նկարագրե՛ք):
- Դուք գիտե՞ք այս քաղաքում վայր, որտեղ քաղաքի միգրանտները կարող են հետազոտվել ՄԻԱՎ-ի վերաբերյալ:
- Դուք և քաղաքի այլ միգրանտներ մտահոգվու՞մ եք ՄԻԱՎ վարակի խնդրով: Ինչու՞ այո և ինչու՞ ոչ:

Դոմեն 2. խմբի ընտրանք

Եթե ցանցերի նշան կա, շարունակե՛ք հետևյալ կերպ:

Թույլ տվեք բացատրել Ձեզ ընտրանքի մի մեթոդ, որ մտածում ենք օգտագործել 18 տարեկան և ավելի, աշխատելու նպատակով 3 կամ ավելի ամիս (բայց ոչ ավելի, քան 12 ամիս վերջին մեկ տարվա ընթացքում) արտերկրում գտնված և այս քաղաքում ապրող տղամարդկանց գտնելու համար, որպեսզի նրանց ընդգրկենք մեր հետազոտության մեջ: Այս մեթոդը սկսվում է՝ ընտրանքի համար համապատասխան մարդուն մինչև երեք կտրոն տալով, որպեսզի նա տա դրանք համապատասխան այլ մարդկանց: Յուրաքանչյուր համապատասխան մարդու համար, որը կգա հավաքագրողի կողմից տրված կտրոնով, հավաքագրողը կստանա փոխհատուցում (մի փոքր գումար կամ նվեր): Յուրաքանչյուր համապատասխան մարդ կանցնի հարցազրույց և ՄԻԱՎ-ի վերաբերյալ անվճար հետազոտություն, կստանա ՄԻԱՎ

վարակի կանխարգելման մասին տեղեկատվություն, փոխհատուցում և մինչև երեք կտրոն այլ մարդկանց տալու համար: Այս հավաքագրման գործընթացն անցնում է բազմաթիվ ընտրանքային ալիքներով, մինչև կծկավորվի ընտրանքի չափը: Կտրոնների օգտագործումը հնարավորություն է տալիս բոլոր մասնակիցներին մնալու չբացահայտված (այսինքն՝ նրանք ունեն միայն հատուկ համար կտրոնում, չկա ո՛չ անուն, ո՛չ հեռախոսահամար կամ այլ տեղեկատվություն, որի հիման վրա հնարավոր լիներ գտնել նրանց հարցազրույցի տեղամասից հեռանալուց հետո): Կտրոն ստացած անձն ինքն է կայացնում որոշում հետազոտությանը մասնակցելու կամ դրանից հրաժարվելու մասին:



Ութ ալիքների հավաքագրման շղթա մեկ սերմից¹¹:

- Կկարողանայի՞ք արդյոք մասնակցել այսպիսի հետազոտության: Ինչու՞ այո և ինչու՞ ոչ:
- Ըստ Ձեզ՝ մարդիկ, որոնց գիտեք, կցանկանա՞ն մասնակցել այսպիսի հետազոտության:
- Եթե Դուք մասնակցեի՞ք, քանի՞ մարդ կկարողանայի՞ք հավաքագրել, որոնք կներգրավվեին հետազոտության մեջ:
- Ի՞նչ եք կարծում, որոնք են դժվարություններն այսպիսի հետազոտություն անցկացնելու համար:

11 Johnston L, Sabin K. Échantillonnage determine selon les répondants pour les populations difficiles à joindre (in French) or Sampling hard-to-reach populations with respondent driven sampling (In English). Methodological Innovations Online. 2010;5(2):38-48.

- Դուք կցանկանալի՞ք նորից խոսել մեզ հետ այսպիսի հետազոտություն ծրագրելու մասին:

Դոմեն 3. սեռական վարքագիծ

- Դուք գիտե՞ք կամ լսե՞լ եք Հայաստանի քաղաքային համայնքներից արական սեռի սեզոնային աշխատանքային միգրանտների մասին, ովքեր արտերկրում գտնվելիս ունենում են զուգընկերներ:
- Դուք գիտե՞ք կամ լսե՞լ եք Հայաստանի քաղաքային համայնքներից արական սեռի սեզոնային աշխատանքային միգրանտների մասին, ովքեր արտերկրում գտնվելիս օգտվում են մարմնավաճառների ծառայություններից:
- Դուք գիտե՞ք կամ լսե՞լ եք, որ այս տղամարդիկ օգտագործեն պահպանակներ արտերկրում աշխատելիս կանանց հետ սեռական հարաբերություններ ունենալու ժամանակ: Տարածվա՞ծ է պահպանակների օգտագործումը պատահական զուգընկերների հետ սեռական հարաբերություն ունենալիս: Տարածվա՞ծ է պահպանակների օգտագործումը կոմերցիոն զուգընկերների հետ սեռական հարաբերություն ունենալիս:
- Դուք լսե՞լ եք սեզոնային միգրանտների մասին, ովքեր արտերկրում գտնվելիս ունենում են սեռական հարաբերություններ տղամարդկանց հետ: Ըստ Ձեզ՝ դա տարածվա՞ծ երևույթ է:

Օգտագործե՛ք ստացված պատասխանները ՀՀ քաղաքաբնակ արական սեռի սեզոնային աշխատանքային միգրանտների շրջանում սեռական ռիսկային վարքագիծն ուսումնասիրելու նպատակով այլ հարցեր կազմելու համար:

Դոմեն 4. թմրամիջոցների օգտագործումը

- Դուք գիտե՞ք կամ լսե՞լ եք Հայաստանի քաղաքային համայնքներից արական սեռի սեզոնային աշխատանքային միգրանտների մասին, ովքեր արտերկրում գտնվելիս գործածում են թմրամիջոցներ: Եթե այո, ապա ի՞նչ տեսակի:
- Դուք գիտե՞ք կամ լսե՞լ եք Հայաստանի քաղաքային համայնքներից արական սեռի սեզոնային աշխատանքային միգրանտների մասին, ովքեր արտերկրում գտնվելիս գործածում են ներարկային թմրամիջոցներ: Եթե այո, ապա ի՞նչ տեսակի:
- Կարո՞ղ եք նկարագրել, թե ինչպես են նրանք ներարկում թմրամիջոցները. ներարկում են այլ մարդկանց հետ, օգտագործում են նույն ներարկիչը և ասեղները, օգտվում են նույն պարագաներից:

Դումեն 5. հետագա քայլեր

- Դուք կցանկանայի՞ք մեզ օգնել՝ գտնելու արական սեռի սեզոնային աշխատանքային միգրանտների այս ծրագրված հետազոտության մեջ ընդգրկելու համար:
- Դուք կցանկանայի՞ք մեզ օգնել՝ գտնելու արական սեռի սեզոնային աշխատանքային միգրանտների ֆոկուս խմբերի մասնակցելու համար:
- Կարո՞ղ եք նշել ինչ-որ ծառայություններ կամ մարդկանց, ովքեր աշխատում են սեզոնային աշխատանքային միգրանտների հետ:
- Դուք կցանկանայի՞ք նորից խոսել մեզ հետ այսպիսի հետազոտություն ծրագրելու մասին:

Դուք ունե՞ք հարցեր:

Շնորհակալություն Ձեր տրամադրած ժամանակի համար:

Ֆոկուս խմբային քննարկումների և խորը հարցազրույցների մանրամասն արդյունքները, ք.Երևան

Հարց	Խորը հարցազրույցներ	Ֆոկուս խմբային քննարկումներ	Դիտարկումներ
Սոցիալական ցանցեր			
Դուք գիտե՞ք արական սեռի, 18 տարեկան և ավելի, աշխատելու նպատակով 3 կամ ավելի ամիս (բայց ոչ ավելի, քան 12 ամիս վերջին մեկ տարվա ընթացքում) արտերկրում գտնված, այս քաղաքում ապրող մարդկանց:	Բոլոր հարցվողները գիտեն որոշակի թվով միգրանտների՝ 1. ՀԿ-ների ներկայացուցիչներ՝ 25-40, 2. միգրանտներ՝ 10-25, 3. ՏԻՄ ներկայացուցիչներ և միգրանտ-ներին ծառայություններ տրամադրողներ՝ 30-50՝ աշխատանքի բերումով, 5-15՝ անձամբ, 4. հետազոտողներ՝ շատերին՝ աշխատանքի բերումով, 2-15՝ անձամբ:	Բոլոր հարցվողները գիտեն որոշակի թվով միգրանտների՝ 2-15:	Քննարկումների ժամանակ դիտարկվել է՝ արդյոք ցանցերը փոքր են և փակ:
Դուք գիտե՞ք այս բնութագրիչներով կանանց:	Բոլոր հարցվողները գիտեն փոքր թվով կանանց՝ 0-8:	--	Փոքր թվով կանայք
Ինչպե՞ս եք ճանաչում նրանց:	Բոլոր հարցվողները գիտեն միգրանտների՝ իրենց հարևանությամբ բնակվող, որպես բարեկամներ, ընկերներ և ծանոթներ, ծառայություններ տրամադրողներն ու հետազոտողները գիտեն միգրանտներին նաև աշխատանքի բերումով:	Բոլոր հարցվողները գիտեն միգրանտների՝ իրենց հարե-վանությամբ բնակվող, որ-պես բարեկամներ, ընկերներ և ծանոթներ: Հանդիպում են՝ քննարկելու աշխատանքի մեկնելու հետ կապված հար-ցեր, նաև հանդիպում են միմ-յանց արտերկրում աշխատելիս:	Տարբեր սոցիալական ցանցեր

Հարց	Խորը հարցազրույցներ	Ֆոկուս խմբային քննարկումներ	Դիտարկումներ
Ցանկության դեպքում Ձեզ համար հեշտ կլինի՞ կապ հաստատել նրանց հետ: Ունե՞ք նրանց հեռախոսահամարները: Որքա՞ն հաճախ եք տեսնում նրանց: Նրանցից քանիսի՞ն գիտեք:	Բոլոր հարցվողները նշել են, որ խնդիր չունեն՝ կապ հաստատելու 4-15 միգրանտի հետ:	Բոլոր հարցվողները նշել են, որ խնդիր չունեն կապ հաստատելու որոշ թվով միգրանտների հետ:	Հետազոտող. միգրանտների հիմնական մասն արդեն մեկնել էր հարցազրույցի անցկացման ժամանակ, և կվերադառնար հունվարի վերջ/փետրվարին
Եթե խնդրենք Ձեզ տալ Ձեր ճանաչած 18 տարեկան և ավելի, աշխատելու նպատակով 3 կամ ավելի ամիս (բայց ոչ ավելի, քան 12 ամիս վերջին մեկ տարվա ընթացքում) արտերկրում գտնված և այս քաղաքում ապրող տղամարդկանց հետ կապ հաստատելու համար անհրաժեշտ տեղեկություններ նրանց հետ անանուն հարցում անցկացնելու նպատակով, Դուք հարմար կզգայի՞ք՝ անելով դա:	Բոլոր հարցվողները խնդիր չունեն կապ հաստատելու որոշ թվով միգրանտների հետ:	Նշել են, որ կարող են բերել 2-10 միգրանտի: Որոշ հարցվողներ նշել են, որ միգրանտները կմասնակցեն հետազոտությանը հիմնականում այն պատճառով, որ չեն ցանկանա մերժել ընկերներին և կցանկանան անվճար հետազոտվել ՄԻԱՎ-ի և սեռավարակների վերաբերյալ: Մասնակցությունը կախված կլինի հետազոտության ժամանակ երևանում գտնվելուց, մասնակցության համար բավարար ժամանակ ունենալուց և հնարավոր հերթերի բացակայությունից:	Հետազոտությունը ծրագրել այնպես, որ հերթեր չլինեն, տրամադրել հետազոտության արդյունքները, ներառյալ սեռավարակների վերաբերյալ հետազոտության արդյունքները:
Փողոցում քայլելիս կարո՞ղ է քաղաքային միգրանտը հեշտությամբ ճանաչվել: Ինչպե՞ս:	Բոլոր հարցվողները նշել են, որ չեն կարող ճանաչել միգրանտներին:	Բոլոր հարցվողները նշել են, որ չեն կարող ճանաչել միգրանտներին:	Դժվար կլինի հավաքագրել TLS-ի դեպքում:

Հարց	Խորը հարցազրույցներ	Ֆոկուս խմբային քննարկումներ	Դիտարկումներ
Որքա՞ն է մեծ այս խմբի ցանցը (միայն նույն հարևանությամբ, քաղաքում, քաղաքից դուրս):	Միգրանտները հաղորդակցվում են այլ միգրանտների հետ մեկնելու, աշխատանք գտնելու համար: Մեկ միգրանտ նշել է, որ գիտի մոտ 25 հոգուց բաղկացած ցանց քաղաքում:	Բոլորը, բացի 4 մասնակցից, (4/16) նշել են, որ կարող են կապ հաստատել իրենց ծանոթների հետ:	Հնարավոր է, որ այս հարցը լավ չի հասկացվել հարցվողների կողմից:
Աշխատանքից դուրս նրանք հանդիպում են որևէ վայրում: Որտե՞ղ (վայրի անվանումը և հասցեն):	Միգրանտները հանդիպում են տարբեր առիթներով և տոների ժամանակ, սրճարաններում, ռեստորաններում, տներում: Հանդիպում են միմյանց նաև աշխատանք գտնելու համար:	Միգրանտները հանդիպում են տարբեր առիթներով և տոների ժամանակ, տներում, սրճարաններում և ռեստորաններում:	Դժվար է գտնել հանրային վայրեր TLS-ի համար:
Այս քաղաքի ո՞ր հատվածներում են ապրում արական սեռի սեզոնային միգրանտները:	Ծառայություններ տրամադրողները, միգրանտները և ՀԿ-ների ներկայացուցիչները նշել են, որ միգրանտներն ապրում են քաղաքի բոլոր հատվածներում: Հետազոտողները նշել են, որ միգրանտների մեծ մասն ապրում է ծայրամասերում, մասնավորապես՝ Մասիվում, Բանգլադեշում, Սովետաշենում, Երրորդ մասում:	Միգրանտներն ապրում են քաղաքի բոլոր հատվածներում:	Պետք է ուսումնասիրել՝ արդյոք նրանք ծայրամասերից գալիս են կենտրոն որևէ պատճառով:
Նրանք ձևավորում են աջակցության խմբեր (նկարագրե՛ք):	Ոչ ոք չէր լսել աջակցության խմբերի մասին:	Ոչ ոք չէր լսել աջակցության խմբերի մասին:	Միգրանտների աջակցության խմբեր չկան:

Հարց	Խորը հարցազրույցներ	Ֆոկուս խմբային քննարկումներ	Դիտարկումներ
Խրախուսում/ ՄԻԱՎ-ի վերաբերյալ հետազոտություն			
<p>Դուք գիտե՞ք Երևանում վայր որտեղ քաղաքի միգրանտները կարող են հետազոտվել ՄԻԱՎ-ի վերաբերյալ: Դուք կարծու՞մ եք, որ քաղաքի միգրանտները մտահոգվում են ՄԻԱՎ վարակի խնդրով: Ինչու՞ այո և ինչու՞ ոչ:</p>	<p>Բոլորը նշել են, որ ՄԻԱՎ-ի հետազոտությունը հասանելի է բժշկական հաստատություններում, հետազոտողները նշել են ՁԻԱՀ-ի ԿՀԿ-ն: Բոլորը, բացի հետազոտողներից, նշել են, որ միգրանտները հետաքրքրված չեն ՄԻԱՎ վարակի խնդրով և չեն կարծում, որ դա վերաբերում է իրենց: Ըստ հետազոտողների՝ միգրանտները մտահոգվում են իրենց առողջությամբ:</p>	<p>--</p>	<p>Միայն հետազոտողներն են կարծում, որ միգրանտները մտահոգվում են իրենց առողջությամբ:</p>
<p>Կարծում եք քաղաքի միգրանտները կցանկանայի՞ն մասնակցել այսպիսի հետազոտության: Ինչու՞ այո և ինչու՞ ոչ:</p>	<p>Բոլորը, բացի հետազոտողներից, նշել են, որ միգրանտները հետաքրքրված չեն ՄԻԱՎ վարակի խնդրով, բայց կհետաքրքրվեն, եթե լինի որոշակի խրախուսում: ՀԿ-ի ներկայացուցիչը նշել է, որ գիտի 15 մարդու, ովքեր կմասնակցեին հետազոտությանը խրախուսման դեպքում: Ծառայություններ տրամադրողը նշել է կենցաղային ապրանքների տրամադրումը կամ այլ բժշկական հետազոտությունների անվճար իրականացումը՝ որպես խրախուսում՝ հետազոտությանը մասնակցելու համար: Հետազոտողները նշել են, որ միգրանտները կմասնակցեին, եթե բարձրացվեր նրանց գիտելիքների մակարդակը, միգրանտները հոգնել են տարբեր հարցումներից:</p>	<p>Բոլոր մասնակիցները նշել են, որ կցանկանան մասնակցել այդպիսի հետազոտությունների, քանի որ դա հետաքրքրում է իրենց, իրենք գնահատում են իրենց առողջությունը, ինչպես նաև կա որպես խրախուսում գումար ստանալու հնարավորություն: Մեկ մասնակից նշել է, որ չի ցանկանա հետազոտվել ՄԻԱՎ-ի վերաբերյալ:</p>	<p>Միգրանտները չեն մասնակցի առանց խրախուսման:</p>

Հարց	Խորը հարցազրույցներ	Ֆոկուս խմբային քննարկումներ	Դիտարկումներ
<p>Կցանկանայի՞ն արդյոք նրանք անցնել ՄԻԱՎ-ի վերաբերյալ հետազոտություն, եթե դա լիներ անանուն և գաղտնի:</p>	<p>Բոլորը հայտնել են, որ գաղտնիությունն ու անանունությունը շատ կարևոր են: Հետազոտողը նշել է. «Ոչ ոք չի հավատում, որ եթե դա հետազոտություն է, ապա անանուն է և գաղտնի: Եվ եթե արդյունքը դրական լինի, ապա անձը կբացահայտվի»:</p>	<p>Մի մասը նշել էր, որ միգրանտները կցանկանային անցնել ՄԻԱՎ-ի վերաբերյալ հետազոտություն, մյուս մասն էլ նշել էր, որ նրանք հետաքրքրված չեն իրենց առողջությամբ:</p>	<p>Անհրաժեշտ է մեծ ուշադրություն դարձնել անանունության և գաղտնիության պահպանմանը:</p>
<p>Ի՞նչը կլիներ համապատասխան նվեր կամ խրախուսում՝ հետազոտությանը մասնակցելու համար: Բերե՞ք հստակ օրինակներ:</p>	<p>Բոլորը, բացի հետազոտողներից, նշել են, որ խրախուսման համար բավարար կլինի 10 000-15 000 դրամը (ըստ հետազոտողի՝ բավարար կլինի 5000 դրամը) կամ կենցաղային ապրանքները՝ որպես նվեր (բաժակների հավաքածու) կամ այլ բժշկական հետազոտությունների անվճար տրամադրումը: Մեկ հետազոտող նշել է, որ միգրացիայի գործակալությունը նույնպես կարող է ներգրավվել, և որպես խրախուսում՝ կարող են տրվել հեռախոսի լիցքավորման քարտեր: Ըստ մեկ այլ հետազոտողի՝ նույնիսկ 5000 դրամը չի նպաստի հետազոտությանը մասնակցելուն, քանի որ մարդկանց սպասելիքները/ակնկալիքներն ավելի բարձր կլինեն: Հետազոտության մասնակցության համար լավ շարժառիթ կարող է լինել այն, որ մարդն իմանա բարձր արժեք ունեցող (30000-40000 դրամ) ծառայություններն անվճար ստանալու հնարավորության մասին:</p>	<p>Առաջարկվել է 10000-15000 դրամ՝ որպես խրախուսում: Ոմանք նշել են, որ միգրանտների որոշ մասը չի մասնակցի հետազոտությանը՝ անկախ խրախուսման չափից:</p>	<p>10000-15000 դրամը բավարար է: Պետք է ընդգծել անվճար հետազոտության արժեքը: Նվերները նույնպես ընդունելի են:</p>

Հարց	Խորը հարցազրույցներ	Ֆոկուս խմբային քննարկումներ	Դիտարկումներ
Ի՞նչ եք կարծում, որո՞նք են դժվարություններն այսպիսի հետազոտություն անցկացնելու համար:	Պատասխանները ներառում էին այն, որ միգրանտները մտահոգված չեն իրենց առողջությամբ, հետաքրքրված չեն այսպիսի հետազոտություններով և ՄԻԱՎ վարակի հարցերով:	Որպես դժվարություններ նշվել են ժամանակի սղությունը, հերթերում սպասելու ցանկություն չունենալը, ամաչելը, քաղաքում չլինելը:	Նախօրոք պայմանավորվածություններ մասնակցի հետազոտության տեղամաս ներկայանալու ժամի վերաբերյալ:
Սեռական վարքագիծ			
Դուք գիտե՞ք կամ լսե՞լ եք Հայաստանի քաղաքային համայնքներից արական սեռի սեզոնային աշխատանքային միգրանտների մասին, որոնք արտերկրում գտնվելիս ունենում են զուգընկերներ:	Բոլոր հարցվողները նշել են, որ միգրանտներն ունենում են երկու տեսակի զուգընկերներ, բայց մեծ մասամբ ունենում են մշտական զուգընկերներ: Մի հարցվող նշել է, որ միգրանտների 15-20%-ն ունենում է պատահական զուգընկերներ:	Միգրանտներն ունեն զուգընկերներ, որոշ միգրանտներ՝ և՛ մշտական, և՛ պատահական: Ավելի հեշտ է զուգընկերներ գտնել գյուղական վայրերում:	Պետք է սահմանել «մշտական զուգընկերներ» բնորոշումը հարցաշարերում: Մշտական զուգընկերների հաճախակի փոփոխումը կարող է մեծ վտանգ պարունակել:
Դուք գիտե՞ք կամ լսե՞լ եք Հայաստանի քաղաքային համայնքներից արական սեռի սեզոնային աշխատանքային միգրանտների մասին, որոնք արտերկրում գտնվելիս օգտվում են մարմնավաճառների ծառայություններից:	Բոլոր հարցվողները նշել են, որ քիչ միգրանտներ են օգտվում մարմնավաճառների ծառայություններից, քանի որ դա շատ թանկ է և պարունակում է սեռավարակների ռիսկ: «Ավելի հեշտ է գտնել պատահական զուգընկեր»:	Քիչ միգրանտներ են օգտվում մարմնավաճառների ծառայություններից:	Քիչ միգրանտներ են օգտվում մարմնավաճառների ծառայություններից

Հարց	Խորը հարցազրույցներ	Ֆոկուս խմբային քննարկումներ	Դիտարկումներ
<p>Դուք գիտե՞ք կամ լսե՞լ եք, որ այդ տղամարդիկ արտերկրում աշխատելիս օգտագործեն պահպանակներ կանանց հետ սեռական հարաբերություններ ունենալիս: Տարածվա՞ծ է պահպանակների օգտագործումը պատահական զուգընկերների հետ սեռական հարաբերություն ունենալիս: Տարածվա՞ծ է պահպանակների օգտագործումը կոմերցիոն զուգընկերների հետ սեռական հարաբերություն ունենալիս:</p>	<p>Բոլոր հարցվողները նշել են, որ միգրանտները հիմնականում օգտագործում են պահպանակներ, ընդ որում պահպանակներ օգտագործում են պատահական, բայց ոչ մշտական զուգընկերների հետ:</p>	<p>Բոլորը միակարծիք էին այն հարցում, որ միգրանտները հիմնականում օգտագործում են պահպանակներ մարմնավաճառների հետ: Վերջիններս հիմնականում ունենում են պահպանակներ և առանց դրա չեն ունենում սեռական հարաբերություններ: Լինում են իրավիճակներ (օրինակ՝ ակոհոլի ազդեցությամբ), երբ նրանք չեն օգտագործում պահպանակներ:</p>	<p>Պահպանակի ոչ մշտական օգտագործում:</p>
<p>Դուք լսե՞լ եք սեզոնային միգրանտների մասին, որոնք արտերկրում գտնվելիս ունենում են սեռական հարաբերություններ տղամարդկանց հետ: Ըստ Ձեզ՝ դա տարածվա՞ծ երևույթ է:</p>	<p>Ծառայություն տրամադրողներից միայն մեկն է նշել, որ լսել է սեզոնային միգրանտների մասին, որոնք արտերկրում գտնվելիս ունենում են սեռական հարաբերություններ տղամարդկանց հետ:</p>	<p>Տարածված չէ:</p>	<p>Չգիտեն նման միգրանտների մասին (կամ չեն խոսում այդ մասին):</p>
Թմրամիջոցների գործածում			
<p>Դուք գիտե՞ք կամ լսե՞լ եք Հայաստանի քաղաքային համայնքներից արական սեռի սեզոնային աշխատանքային միգրանտների մասին, որոնք արտերկրում գտնվելիս գործածում են թմրամիջոցներ: Եթե այո, ապա ի՞նչ տեսակի:</p>	<p>Միայն մեկ ծառայություն տրամադրող է նշել արտերկրում միգրանտների կողմից թմրամիջոցների գործածման մասին, մյուսները չեն լսել այդ մասին:</p>	<p>Նշել են, որ գիտեն որոշ միգրանտների, որոնք արտերկրում գործածում են թմրամիջոցներ:</p>	<p>Թմրամիջոցների գործածման մակարդակը ցածր է:</p>

Հարց	Խորը հարցազրույցներ	Ֆոկուս խմբային քննարկումներ	Դիտարկումներ
Դուք գիտե՞ք կամ լսե՞լ եք Հայաստանի քաղաքային համայնքներից արական սեռի այլ սեզոնային աշխատանքային միգրանտների մասին, որոնք արտերկրում գտնվելիս գործածում են ներարկային թմրամիջոցներ: Եթե այո, ապա ի՞նչ տեսակի:	Ծառայություններ տրամադրող միայն մեկ անձ է նշել արտերկրում միգրանտների կողմից թմրամիջոցների ներարկային գործածման մասին.« <i>Ներարկային թմրամիջոցներ գործածողները հիմնականում երկար ժամանակ արտերկրում աշխատող և բնակվող միգրանտներ են»:</i>	Ներարկային ճանապարհով թմրամիջոցներ գործածող միգրանտների մեծ մասը երկար ժամանակ ապրում է արտերկրում, շատ միգրանտներ չեն ճանաչում այդպիսի մարդկանց:	Շատ ցածր է թմրամիջոցների ներարկային գործածումը: Գործածողները հիմնականում երկար ժամանակ արտերկրում ապրող միգրանտներն են:
Կարո՞ղ եք նկարագրել, թե ինչպես են նրանք ներարկում թմրամիջոցները. ներարկում են այլ մարդկանց հետ, օգտագործում են նույն ներարկիչը և ասեղները, օգտվում են նույն պարագաներից:	Բոլոր հարցվողները նշել են, որ չեն կարող:	Միայն մեկ մասնակից գիտեր այդ մասին, մյուսները չգիտեին:	Ցածր տեղեկացվածություն ներարկային ճանապարհով թմրամիջոցներ գործածողների վերաբերյալ:
Հեղափառ քայլեր			
Դուք կցանկանայի՞ք օգնել մեզ՝ գտնելու արական սեռի սեզոնային աշխատանքային միգրանտներ այս պլանավորված հետազոտության մեջ ընդգրկելու համար:	Բոլոր հարցվողները պատասխանել են՝ այո:	Բոլորը նշել են, որ կցանկանան ընդգրկվել և հավաքագրել այլոց, բոլորը կցանկանան օգնել:	Կցանկանան օգնել՝ գտնելու միգրանտներ:
Դուք կցանկանայի՞ք օգնել մեզ՝ գտնելու արական սեռի սեզոնային աշխատանքային միգրանտներ ֆոկուս խմբերի մասնակցելու համար:	Բոլոր հարցվողները պատասխանել են՝ այո:	Բոլոր հարցվողները պատասխանել են՝ այո:	Կցանկանան մասնակցել:

Հարց	Խորը հարցազրույցներ	Ֆոկուս խմբային քննարկումներ	Դիտարկումներ
Կարո՞ղ եք նշել ինչ-որ ծառայություններ կամ մարդկանց, որոնք աշխատում են սեզոնային աշխատանքային միգրանտների հետ:	Բոլոր հարցվողները, բացառությամբ հետազոտողների, նշել են, որ չգիտեն: Հետազոտողները նշել են միգրացիայի գործակալությունը և մարզպետարանների տարբեր ծառայություններ:	Բոլոր հարցվողները նշել են, որ չգիտեն:	Քիչ ծառայություններ են հայտնի միգրանտներին:
Դուք կցանկանայի՞ք նորից խոսել մեզ հետ այսպիսի հետազոտություն ծրագրելու մասին:	Բոլոր հարցվողները պատասխանել են՝ այո:	Բոլոր հարցվողները պատասխանել են՝ այո:	Պատրաստակամ են աջակցելու հետազոտությունը ծրագրելիս:

Ֆոկուս խմբային քննարկումների և խորը հարցազրույցների մանրամասն արդյունքները, ք.Գյումրի

Հարց	Խորը հարցազրույցներ	Ֆոկուս խմբային քննարկումներ	Դիտարկումներ
Սոցիալական ցանցեր			
Դուք գիտե՞ք արական սեռի, 18 տարեկան և ավելի, աշխատելու նպատակով 3 կամ ավելի ամիս (բայց ոչ ավելի, քան 12 ամիս վերջին մեկ տարվա ընթացքում) արտերկրում գտնված, այս քաղաքում ապրող մարդկանց:	Բոլոր հարցվողները գիտեն որոշ թվով միգրանտների՝ <ul style="list-style-type: none"> • ՏԻՄ ներկայացուցիչներ և միգրանտներին ծառայություններ տրամադրողներ՝ 10-30, • միգրանտներ՝ 5-30, • ՀԿ-ների ներկայացուցիչներ՝ 9-20: 	Բոլոր հարցվողները գիտեն որոշ թվով միգրանտների՝ 1-50, վերջին մեկ ամսվա ընթացքում տեսել են՝ 0-30:	Սոցիալական մեծ ցանցեր:
Դուք գիտե՞ք այս բնութագրիչներով կանանց:	Հարցվողների մեծ մասը նշել է, որ գիտեն փոքրաթիվ միգրանտ կանանց: Իգական սեռի 1 հարցվող նշել է, որ գիտի 10 կնոջ. «Նրանք մեկնում են հիմնականում ծովափնյա քաղաքներ, պատրաստում թխվածքներ»:	--	Փոքրաթիվ կանանց գիտեն:
Ինչպե՞ս եք ճանաչում նրանց:	Բոլոր հարցվողները գիտեն միգրանտների՝ իրենց հարևանությամբ բնակվող, որպես բարեկամներ, ընկերներ և ծանոթներ:	Բոլոր հարցվողները գիտեն միգրանտների՝ իրենց հարևանությամբ բնակվող, որպես բարեկամներ, ընկերներ և ծանոթներ: Նաև հանդիպում են՝ քննարկելու մեկնումը աշխատանքի վայրեր և հանդիպում արտերկրում աշխատելիս:	Սոցիալական տարբեր ցանցեր:

Հարց	Խորը հարցազրույցներ	Ֆոկուս խմբային քննարկումներ	Դիտարկումներ
<p>Ցանկության դեպքում հեշտ կլինի՞ Ձեզ համար կապ հաստատել նրանց հետ: Ունե՞ք նրանց հեռախոսահամարները: Որքա՞ն հաճախ եք տեսնում նրանց: Նրանցից քանիսի՞ն գիտեք:</p>	<p>Բոլոր հարցվողները միգրանտների հետ կապ հաստատելու խնդիր չունեն, եթե նրանք Հայաստանում են:</p>	<p>Բոլոր հարցվողները խնդիր չունեն կապ հաստատելու 2-20 միգրանտի հետ: Միակ խնդիրն այն կլինի, եթե նրանք գտնվեն երկրից դուրս:</p>	<p>Մեծ մասն արդեն մեկնել էր այս հարցազրույցի անցկացման ժամանակ: Հեշտ կլինի կապ հաստատել, եթե նրանք երկրում լինեն:</p>
<p>Եթե խնդրենք Ձեզ տալ Ձեր ճանաչած 18 տարեկան և ավելի, աշխատելու նպատակով 3 կամ ավելի ամիս (բայց ոչ ավելի, քան 12 ամիս վերջին մեկ տարվա ընթացքում) արտերկրում գտնված և այս քաղաքում ապրող տղամարդկանց հետ կապ հաստատելու համար անհրաժեշտ տեղեկություններ նրանց հետ անանուն հարցում անցկացնելու նպատակով, Դուք հարմար կզգայի՞ք՝ անելով դա:</p>	<p>Բոլոր հարցվողները խնդիր չունեն կապ հաստատելու մեծ թվով (n=20) միգրանտների հետ:</p>	<p>Մասնակիցները նշել են, որ կարող են բերել միգրանտների: Նրանք չեն ցանկանա գալ իրենց առողջության համար, բայց կգան խրախուսման դեպքում: Բոլորը կարող են հավաքագրել նվազագույնը 2-20 մարդու:</p>	<p>Սկրինինգի ժամանակ ավելի մեծ ուշադրություն պետք է դարձնել այն միգրանտներին, որոնք հայտնում են, որ գործազուրկ են:</p>

Հարց	Խորը հարցազրույցներ	Ֆոկուս խմբային քննարկումներ	Դիտարկումներ
<p>Փողոցում քայլելիս կարո՞ղ է քաղաքային միգրանտը հեշտությամբ ճանաչվել: Ինչպե՞ս:</p>	<p>Հարցվողների մեծ մասը նշել է, որ չի կարողանա ճանաչել միգրանտներին փողոցում: ՀԿ-ի ներկայացուցիչը նշել է. «<i>Երբեմն կարելի է ճանաչել նրանց հագուստով, հատկապես երիտասարդ միգրանտներին, որոնք Հայաստանում իրենց զգում են, ինչպես արձակուրդում և կրում են սպորտային հագուստ</i>»: Մեկ այլ հարցվող նշել է. «<i>Երբեմն, հատկապես Սիբիրից եկողները, կրում են կաշվե վերարկուներ, որով հնարավոր է գուշակել, նաև նրանք լավ են հագնվում, մաշկի գույնն է փոխվում</i>»:</p>	<p>Բոլոր հարցվողները նշել են, որ չեն կարող ճանաչել միգրանտներին:</p>	<p>Հավանաբար չի աշխատի TLS-մեթոդը:</p>
<p>Որքա՞ն է մեծ այս խմբի ցանցը (միայն նույն հարևանությամբ, քաղաքում, քաղաքից դու՞րս):</p>	<p>Միգրանտները հաղորդակցվում են ընտանիքներով, նաև միասին մեկնելու, աշխատանք գտնելու կապակցությամբ: Ցանցերը կազմված են «բրիգադներից», որոնք միասին մեկնում են աշխատանքի: «Բրիգադները» կարող են կազմված լինել 10-20 միգրանտից:</p>	<p>Հարցվողների պատասխանները վկայում են, որ հարցը լավ չի հասկացվել, բայց վերոնշյալ հարցի առաջին մասի պատասխաններից հետևում է, որ կան միգրանտների ցանցեր: Դրանք կազմված են խմբերից, որոնք միասին մեկնում են աշխատանքի:</p>	<p>Հնարավոր է՝ այս հարցը լավ չի հասկացվել հարցվողների կողմից: Տարբեր ցանցեր:</p>

Հարց	Խորը հարցազրույցներ	Ֆոկուս խմբային քննարկումներ	Դիտարկումներ
Աշխատանքից դուրս նրանք հանդիպում են որևէ վայրում: Որտե՞ղ (վայրի անվանումը և հասցեն):	Միգրանտները հանդիպում են տարբեր առիթներով և տոների ժամանակ, սրճարաններում, ռեստորաններում, տներում: Նրանք հանդիպում են նաև աշխատանք գտնելու համար:	Միգրանտները հանդիպում են տարբեր առիթներով և տոների ժամանակ (տարին 3-4 անգամ): Նաև հանդիպում են աշխատանքի համար մեկնումը ծրագրելու նպատակով:	Դժվար է գտնել հանրային վայրեր TLS-ի համար:
Այս քաղաքի ո՞ր հատվածներում են ապրում արական սեռի սեզոնային միգրանտները:	Բոլոր հարցվողները նշել են, որ միգրանտներն ապրում են քաղաքի բոլոր հատվածներում:	Միգրանտներն ապրում են քաղաքի բոլոր հատվածներում:	Պետք է ուսումնասիրել համայնքների միջև խաչումները:
Նրանք ձևավորում են աջակցության խմբեր (նկարագրե՛ք):	Ոչ ոք չէր լսել աջակցության խմբերի մասին:	Ոչ ոք չէր լսել աջակցության խմբերի մասին:	
Խրախուսումներ/ ՄԻԱՎ-ի վերաբերյալ հեղափոխություն			
Դուք գիտե՞ք Գյումրիում վայր, որտեղ քաղաքի միգրանտները կարող են հետազոտվել ՄԻԱՎ-ի վերաբերյալ: Դուք կարծու՞մ եք, որ քաղաքի միգրանտները մտահոգվում են ՄԻԱՎ վարակի խնդրով: Ինչու՞ այո և ինչու՞ ոչ:	Չգիտեն, որտեղ կարելի է հետազոտվել, եթե ինչ-որ խնդիր է լինում, դիմում են ընտանեկան բժշկի: «Քչերն են մտածում ՄԻԱՎ վարակի մասին, որովհետև կարծում են, որ դա իրենց չի վերաբերում»: Ըստ ՀԿ-ի ներկայացուցչի. «Երիտասարդ միգրանտները կարող են հեղափոխվել սեռավարակների, բայց ոչ ՄԻԱՎ-վարակի վերաբերյալ մասնավոր կլինիկայում»: ՀԿ-ի մեկ այլ ներկայացուցիչ նշել էր.	Մասնակիցներից մեկը նշել է. «Այսօր միգրանտները, հատկապես երիտասարդները, տեղեկացված են ՄԻԱՎ վարակի մասին և մտածում են իրենց առողջության մասին, բայց նրանք չգիտեն վայր, որտեղ կարելի է հետազոտվել»:	

Հարց	Խորը հարցազրույցներ	Ֆոկուս խմբային քննարկումներ	Դիտարկումներ
	<p>«Միգրանտները սովորաբար հետազոտվում են արյան փոխներարկման կայանում: Ավելի տարիքով միգրանտներն ավելի շատ են մտածում ՄԻԱՎ վարակի խնդրի մասին, քանի որ ավելի տեղեկացված են այդ հարցով»: Մյուսները ևս նշել են արյան փոխներարկման կայանը՝ որպես վայր, որտեղ կարելի է հետազոտվել ՄԻԱՎ-ի վերաբերյալ:</p>		
<p>Կարծում եք քաղաքի միգրանտները կցանկանայի՞ն մասնակցել այսպիսի հետազոտության: Ինչու՞ այո և ինչու՞ ոչ:</p>	<p>Միգրանտներից մեկը նշել էր. «Միգրանտների 20%-ը հնարավոր է՝ մասնակցի հետազոտությանը որոշակի խրախուսման դեպքում, և ևս 10%-ը՝ ընկերների խնդրանքով»: Մեկ այլ միգրանտ նշել էր. «Եթե ես առաջարկեմ իմ ծանոթներին մասնակցել, նրանք կգան, չեն մերժի ինձ»: Ըստ ՀԿ-ի ներկայացուցչի. «Երևի կմասնակցեն այդպիսի հետազոտությանը, եթե վստահ լինեն գաղտնիության և անանունության պահպանման հարցում, նաև եթե լինի որոշակի խրախուսում»: Ծառայություններ տրամադրողը նշել էր, որ միգրանտները չեն մասնակցի. «Դա մարդկանց մտածելակերպից է»:</p>	<p>Բոլոր մասնակիցները նշել են, որ կցանկանան մասնակցել այդպիսի հետազոտությունների, քանի որ դա հետաքրքրում է իրենց, իրենք գնահատում են իրենց առողջությունը, ինչպես նաև կա որպես խրախուսում գումար ստանալու հնարավորություն: Նաև նշել են հետաքրքրվածություն սեռավարակների վերաբերյալ անվճար հետազոտվելու և արյան ընդհանուր հետազոտություն անցնելու հարցում: Որոշ միգրանտներ կմասնակցեն, քանի որ չեն ցանկանա մերժել, եթե ինչ-որ մեկը հրավիրի նրանց՝ մասնակցելու հետազոտությանը:</p>	<p>«Հավասարը՝ հավասարին» հավաքագրումը լավ կաշխատի, խրախուսման կարիք կա: Սեռավարակների վերաբերյալ անվճար հետազոտություններն ու բժշկական զննումները ևս կլինեն խրախուսում:</p>

Հարց	Խորը հարցազրույցներ	Ֆոկուս խմբային քննարկումներ	Դիտարկումներ
<p>Կցանկանայի՞ն արդյոք նրանք անցնել ՄԻԱՎ-ի վերաբերյալ հետազոտություն, եթե դա լիներ անանուն և գաղտնի:</p>	<p>Բոլորը նշել են, որ գաղտնիությունը և անանունությունը շատ կարևոր են:</p>	<p>Բոլորը պատասխանել են՝ այո:</p>	
<p>Ի՞նչ նվեր կամ խրախուսում կնախընտրեիք ստանալ՝ հետազոտությանը մասնակցելու համար: Բերե՛ք հստակ օրինակներ:</p>	<p>Մեկ միգրանտ նշել է, որ միգրանտների մեծ մասը կմասնակցի առավելապես ընկերոջ հրավերով, քան խրախուսման համար: Երկրորդ միգրանտը առաջարկել է 1000 դրամ խրախուսում: ՀԿ-ի ներկայացուցիչը նշել է. «<i>խրախուսումը կարող է բարդացնել այլ կազմակերպությունների աշխատանքը միգրանտների շրջանում, քանի որ նրանք այլևս չեն ցանկանա մասնակցել այլ հեղափոխությունների կամ սոցիալական ծրագրերի առանց ֆինանսական խրախուսման</i>»: ՀԿ-ի մեկ այլ ներկայացուցիչ առաջարկել է որպես խրախուսում՝ <i>ֆիլմի տոմս, թեյի կամ սուրճի տոմս, քաղցրավենիքի կամ ցանկացած այլ սննդի փաթեթ</i>:</p>	<p>Մասնակիցները նշել են, որ կարող են հավաքագրել 2-15 մարդու, առաջարկվել է խրախուսում 3000-10000 դրամ: Որպես խրախուսում առաջարկվել է նաև սեռավարակների վերաբերյալ և այլ անվճար հետազոտություններ: Նշվել է նաև, որ ոմանք կարող են չգալ՝ անկախ խրախուսման առկայությունից և չափից:</p>	<p>Բավարար է 1000-10000 դրամը:</p>

Հարց	Խորը հարցազրույցներ	Ֆոկուս խմբային քննարկումներ	Դիտարկումներ
	<p>ՀԿ-ի ներկայացուցիչը նշել էր, որ մեկ այլ հետազոտության ընթացքում <i>մասնակիցներին առաջարկել են սննդային փաթեթներ, նաև անվճար խորհրդատվություն ընդհանրական բժշկի կողմից և ուլտրաձայնային հետազոտություն: Ծառայություններ տրամադրողներն առաջարկել են որպես խրախուսում 10000 դրամ:</i></p>		
<p>Ի՞նչ եք կարծում, որո՞նք են այսպիսի հետազոտություն անցկացնելու դժվարությունները:</p>	<p>Նշվել է հարցազրույցի վայրից հեռավորությունը: Խրախուսումը կարող է հանգեցնել ոչ միգրանտների մասնակցության: Ծառայություն տրամադրողը նշել է. <i>«Հարցմանը գալուց ամաչելը, սեփական առողջությունը չգնահատելը, հայկական մտածելակերպը»:</i> Մեկ այլ ծառայություն տրամադրողը նշել է. <i>«Եթե յուրաքանչյուր անձ պետք է բերի 3 մարդու, պորենցիալ մասնակիցը կմտածի, որ այդ 3-ը կիմանան, որ ինքը հետազոտվել է, և կխուսափի մասնակցությունից»:</i></p>	<p>Հնչել են հետևյալ պատասխանները. <i>«Կարևոր է մարդկանց մոտ հետազոտության նկատմամբ հեղափոխություն առաջացնել», «Կամաչեն, եթե հարցազրույցավարը լինի կին»:</i> Շատերը վերադառնում և գնում են բժշկի և չեն ցանկանա նորից հետազոտվել:</p>	<p>Լավ կլիներ հարցնել, թե ինչով կհետաքրքրվեր այն անձը, ով նշել է, որ խրախուսումը խոչընդոտ է: Կարևոր է ունենալ լավ սկրինինգ:</p>

Հարց	Խորը հարցազրույցներ	Ֆոկուս խմբային քննարկումներ	Դիտարկումներ
Սեռական վարքագիծ			
<p>Դուք գիտե՞ք կամ լսե՞լ եք Հայաստանի քաղաքային համայնքներից արական սեռի սեզոնային աշխատանքային միգրանտների մասին, որոնք արտերկրում գտնվելիս ունենում են զուգընկերներ:</p>	<p>Բոլոր հարցվողները նշել են, որ միգրանտներն ունեն երկու տեսակ զուգընկեր, բայց մեծ մասամբ մշտական զուգընկեր: Միգրանտներից մեկը նշել է. «Միգրանտների 50%-ը չի ունենում սեռական կապեր արտերկրում»: Ըստ ՀԿ-ի ներկայացուցչի՝ «90%-ն ունի մշտական զուգընկերներ արտերկրում, և նրանց 50%-ը բնակվում է զուգընկերոջ հետ համապետ»: Ծառայություն տրամադրողը նշել է. «Սեզոնային միգրանտները հիմնականում չունեն մշտական զուգընկերներ, քանի որ մշտական զուգընկերներ ունենալը թանկ է: Նրանք հիմնականում ունենում են պատահական զուգընկերներ»:</p>	<p>Միգրանտներն ունեն զուգընկերներ. «90%-ն ունի զուգընկերներ, հիմնականում երիտասարդները»: Որոշ միգրանտներ շատ հեռու են լինում բնակավայրերից զուգընկերներ ունենալու համար:</p>	<p>Պետք է հստակեցնել մշտական զուգընկերոջ սահմանումը:</p>
<p>Դուք գիտե՞ք կամ լսե՞լ եք Հայաստանի քաղաքային համայնքներից արական սեռի սեզոնային աշխատանքային միգրանտների մասին, որոնք արտերկրում գտնվելիս օգտվում են մարմնավաճառների ծառայություններից:</p>	<p>Բոլոր հարցվողները նշել են, որ քիչ միգրանտներ են օգտվում մարմնավաճառների ծառայություններից, դա շատ թանկ է, և կա սեռավարակներով վարակման վտանգ: Միգրանտներից մեկը նշել է.</p>	<p>Քիչ միգրանտներ են օգտվում մարմնավաճառների ծառայություններից, մեծ մասամբ երիտասարդները: «Միգրանտները հիմնականում ձեռք են բերում զուգընկերներ պատահական հանդիպումների, հյուրասիրության միջոցով, ոչ գումարով»,</p>	<p>Քիչ միգրանտներ են օգտվում մարմնավաճառների ծառայություններից:</p>

Հարց	Խորը հարցազրույցներ	Ֆոկուս խմբային քննարկումներ	Դիտարկումներ
	<p>«Մեծ քաղաքներում ապրող միգրանտների 10%-ը, հիմնականում երիտասարդները, օգտվում է մարմնավաճառների ծառայություններից»: Ծառայություններ տրամադրող. «Մարմնավաճառները խուսափում են միգրանտներից «կեղտոտության» պատճառով.. մեծ մասը չունի համապատասխան պայմաններ տանը»:</p>	<p>«Հիմնականում փորձում են ունենալ մշտական զուգընկեր, որի տանը կարող են ապրել, որը նրանց համար կերակուր կպատրաստի, լվացք կանի: Կան մարդիկ, որոնք կազմում են ընտանիքներ արտերկրում»:</p>	
<p>Դուք գիտե՞ք կամ լսե՞լ եք, որ այդ տղամարդիկ արտերկրում աշխատելիս օգտագործեն պահպանակներ կանանց հետ սեռական հարաբերություններ ունենալու ժամանակ: Տարածված է պահպանակների օգտագործումը պատահական զուգընկերների հետ սեռական հարաբերություն ունենալիս: Տարածված է պահպանակների օգտագործումը կոմերցիոն զուգընկերների հետ սեռական հարաբերություն ունենալիս:</p>	<p>Բոլոր հարցվողները նշել են, որ միգրանտները հիմնականում օգտագործում են պահպանակներ, ընդ որում օգտագործում են հիմնականում պատահական զուգընկերների, բայց չեն օգտագործում մշտական զուգընկերների հետ, միշտ օգտագործում են մարմնավաճառների հետ: Ավելի տարիքով միգրանտներն ավելի քիչ են օգտագործում պահպանակ: Միգրանտներից մեկը նշել է. «Մշտական զուգընկերներ ունեցողների 90% -ը չի օգտագործում պահպանակ»:</p>	<p>Բոլորը միակարծիք են այն հարցում, որ միգրանտները հիմնականում օգտագործում են պահպանակ հատկապես մարմնավաճառների հետ: Հինգ մասնակից նշել է. «Ռուս կանայք ստիպում են մարդկանց օգտագործել պահպանակ իրենց ապահովության համար»: Կարող է չօգտագործեն պահպանակ դիսկոտեկում/ ակոհոլի ազդեցության տակ:</p>	<p>Պահպանակի ոչ մշտական օգտագործում:</p>

Հարց	Խորը հարցազրույցներ	Ֆոկուս խմբային քննարկումներ	Դիտարկումներ
Դուք լսե՞լ եք սեզոնային միգրանտների մասին, որոնք արտերկրում գտնվելիս ունենում են սեռական հարաբերություններ տղամարդկանց հետ: Ըստ Ձեզ՝ դա տարածվա՞ծ երևույթ է:	Չեն լսել այդ մասին:	Չեն լսել այդ մասին: «Միգրանտները կարգին մարդիկ են, այդպիսի բաներ չեն անում»:	Չգիտեն նման միգրանտների մասին (կամ չեն խոսում այդ մասին):
Թմրամիջոցների գործածումը			
Դուք գիտե՞ք կամ լսե՞լ եք Հայաստանի քաղաքային համայնքներից արական սեռի սեզոնային աշխատանքային միգրանտների մասին, որոնք արտերկրում գտնվելիս գործածում են թմրամիջոցներ: Եթե այո, ապա ի՞նչ տեսակի:	Քչերն են օգտագործում թմրամիջոցներ: Օգտագործում են մարիխուանա կամ հաբեր: ՀԿ-ի ներկայացուցիչ. «Երիտասարդ միգրանտների 20%-ը գործածում է ոչ ներարկային թմրամիջոցներ»:	Գիտեն որոշ միգրանտների, որոնք գործածում են թմրամիջոցներ: «Երիտասարդ միգրանտների 10%-ը գործածում է ոչ ներարկային թմրամիջոցներ, հիմնականում մարիխուանա, բայց դա հաճախակի չէ»: «Նրանք, ովքեր գործածում են թմրամիջոցներ, հիմնականում մշտական բնակվողներն են»:	Թմրամիջոցների գործածման ցածր մակարդակ:
Դուք գիտե՞ք կամ լսե՞լ եք Հայաստանի քաղաքային համայնքներից արական սեռի այլ սեզոնային աշխատանքային միգրանտների մասին, որոնք արտերկրում գտնվելիս գործածում են ներարկային թմրամիջոցներ: Եթե այո, ապա ի՞նչ տեսակի:		Չգիտեն այս մասին: «Այսպիսի մարդիկ չեն ընդունվում գործադրողների կողմից, ոչ էլ ընկերներն են առաջարկում աշխատանք»:	Շատ ցածր է ներարկային թմրամիջոցների գործածումը: Գործածողները հիմնականում երկար ժամանակով արտերկրում աշխատող և բնակվող միգրանտներն են:
Հարց	Խորը հարցազրույցներ	Ֆոկուս խմբային քննարկումներ	Դիտարկումներ
Կարո՞ղ եք նկարագրել, թե ինչպես են նրանք ներարկում թմրամիջոցները. ներարկու՞մ են այլ մարդկանց հետ,	Բոլոր հարցվողները պատասխանել են՝ ոչ:	Ոչ բոլորը գիտեն այս մասին:	Ցածր իրազեկվածություն ներարկային ճանապարհով թմրամիջոցներ գործածողների

օգտագործում են նույն ներարկիչը և ասեղները, օգտվում են նույն պարագաներից:			մասին:
Հեղափառ քայլեր			
Դուք կցանկանալի՞ք օգնել մեզ՝ գտնելու արական սեռի սեզոնային աշխատանքային միգրանտների այս պլանավորված հետազոտության մեջ ընդգրկելու համար:	Բոլոր հարցվողները պատասխանել են՝ այո:	Համարյա բոլորը նշել են, որ կցանկանան հավաքագրել այլոց, բոլորը կցանկանան օգնել:	Կցանկանան օգնել՝ գտնելու միգրանտների:
Դուք կցանկանալի՞ք օգնել մեզ՝ գտնելու արական սեռի սեզոնային աշխատանքային միգրանտների ֆոկուս խմբերի մասնակցելու համար:	Բոլոր հարցվողները պատասխանել են՝ այո:	Բոլոր հարցվողները նշել են՝ այո:	Կցանկանան մասնակցել:
Կարո՞ղ եք նշել ծառայություններ կամ մարդկանց, որոնք աշխատում են սեզոնային աշխատանքային միգրանտների հետ:	Չգիտեն որևէ հատուկ ծառայություն միգրանտների համար: ՀԿ-ի ներկայացուցիչը նշել է «Հայկական Կարիտաս»-ը:	Բոլոր հարցվողները նշել են, որ չգիտեն: «Միայն բրիգադ հավաքագրողները»	Քիչ ծառայություններ են հայտնի միգրանտներին:
Դուք կցանկանալի՞ք նորից խոսել մեզ հետ այսպիսի հետազոտություն ծրագրելու մասին:	Բոլոր հարցվողները պատասխանել են՝ այո:	Բոլոր հարցվողները պատասխանել են՝ այո:	Պատրաստակամ են աջակցելու հետազոտության պլանավորման հարցում:

Ֆոկուս խմբային քննարկումների և խորը հարցազրույցների մանրամասն արդյունքները, ք.Վանաձոր

Հարց	Խորը հարցազրույցներ	Ֆոկուս խմբային քննարկումներ	Դիտարկումներ
Սոցիալական ցանցեր			
Դուք գիտե՞ք արական սեռի, 18 տարեկան և ավելի, աշխատելու նպատակով 3 կամ ավելի ամիս (բայց ոչ ավելի, քան 12 ամիս վերջին մեկ տարվա ընթացքում) արտերկրում գտնված, այս քաղաքում ապրող մարդկանց:	Բոլոր հարցվողները գիտեն որոշակի թվով միգրանտների՝ <ul style="list-style-type: none"> • ՀԿ-ի ներկայացուցիչ՝ 50, • ծառայություններ տրամադրող՝ 10-15. անձամբ շփվում է մոտ 1000-ի հետ, • հետազոտող՝ 6, • միգրանտ՝ 40): 	Բոլոր հարցվողները գիտեն շատ միգրանտների՝ 4-70:	Մեծ սոցիալական ցանցեր:
Դուք գիտե՞ք այս բնութագրիչներով կանանց:	Հարցվողները նշել են, որ չգիտեն կամ գիտեն փոքրաթիվ կին միգրանտների:	--	Գիտեն փոքրաթիվ միգրանտ կանանց:
Ինչպե՞ս եք ճանաչում նրանց:	Բոլոր հարցվողները նշել են, որ գիտեն միգրանտների՝ իրենց հարևանությամբ բնակվող, և որպես բարեկամներ, ընկերներ, ծանոթներ, աշխատանքի բերումով:	Բոլոր հարցվողները նշել են միգրանտների՝ իրենց հարևանությամբ բնակվող, և որպես բարեկամներ, ընկերներ, ծանոթներ: Նաև հանդիպում են՝ քննարկելու մեկնումը աշխատանքի վայր, և հանդիպում են արտերկրում աշխատելիս:	Բազմազան սոցիալական ցանցեր:

Հարց	Խորը հարցազրույցներ	Ֆոկուս խմբային քննարկումներ	Դիտարկումներ
Ցանկության դեպքում հեշտ կլինի՞ Ձեզ համար կապ հաստատել նրանց հետ: Ունե՞ք նրանց հեռախոսահամարները: Որքա՞ն հաճախ եք տեսնում նրանց: Նրանցից քանիսի՞ն գիտեք:	Բոլոր հարցվողները նշել են, որ միգրանտների հետ կապ հաստատելու խնդիր չունեն: Հարցվող միգրանտներից մեկը նշել էր, որ կարող է կապ հաստատել 10, ՀԿ-ի ներկայացուցիչը՝ 20 միգրանտի հետ:	Բոլոր հարցվողները հայտնեցին, որ միգրանտների հետ կապ հաստատելու խնդիր չունեն:	Հեշտությամբ կապ կհաստատեն:
Եթե խնդրենք Ձեզ տալ Ձեր ճանաչած 18 տարեկան և ավելի, աշխատելու նպատակով 3 կամ ավելի ամիս (բայց ոչ ավելի, քան 12 ամիս վերջին մեկ տարվա ընթացքում) արտերկրում գտնված և այս քաղաքում ապրող տղամարդկանց հետ կապ հաստատելու համար անհրաժեշտ տեղեկություններ նրանց հետ անանուն հարցում անցկացնելու նպատակով, Դուք կանե՞ք դա:	Բոլոր հարցվողները նշել են, որ միգրանտների հետ կապ հաստատելու խնդիր չունեն:	Նշել են, որ կարող են բերել 3-25 միգրանտի (հատկապես դրամական խրախուսման դեպքում):	Կարող են բերել մարդկանց հետազոտության:
Փողոցում քայլելիս կարո՞ղ է քաղաքային միգրանտը հեշտությամբ ճանաչվել: Ինչպե՞ս:	Ծառայություններ տրամադրող. «Ունեն փնտրող հայացք, տարբեր հագուստներ»: Միգրանտ, ՀԿ-ի ներկայացուցիչ. «Կրում են տարբեր հագուստներ»:	Միգրանտ. «Կճանաչի որոշ աշխատող միգրանտների իրենց լավ հագուստով... եթե միգրանտը կատարում է ֆիզիկապես ծանր աշխատանք, ապա դա կարող է անդրադառնալ արտաքին տեսքի վրա»: Նրանք կրում են տարբեր հագուստներ և ունեն այլ ոճ:	Կարելի է ճանաչել հագուստով:

Հարց	Խորը հարցազրույցներ	Ֆոկուս խմբային քննարկումներ	Դիտարկումներ
Որքա՞ն է մեծ այս խմբի ցանցը (միայն նույն հարևանությամբ, քաղաքում, քաղաքից դու՞րս):	Միգրանտները հաղորդակցվում են միմյանց հետ մեկնելու, աշխատանք գտնելու համար: Հարցվող միգրանտներից մեկը նշել է, որ գիտի մոտ 40 հոգուց բաղկացած ցանց քաղաքում:	Բոլորը նշել են, որ կարող են կապ հաստատել իրենց ծանոթների հետ: ՖԽ1. «Ավելի դժվար է գտնել մարդու, ով չի աշխատել արտերկրում»:	
Աշխատանքից դուրս նրանք հանդիպու՞մ են որևէ վայրում: Որտե՞ղ (վայրի անվանումը և հասցեն):	Միգրանտները հանդիպում են տարբեր առիթներով և տոների ժամանակ տանը, սրճարաններում և ռեստորաններում: Հանդիպում են աշխատանք գտնելու համար:	Միգրանտները հանդիպում են տարբեր առիթներով և տոների ժամանակ տանը, սրճարաններում և ռեստորաններում:	Հանդիպում են տարբեր վայրերում:
Այս քաղաքի ո՞ր հատվածներում են ապրում արական սեռի սեզոնային միգրանտները:	Հարցազրույցին մասնակցած հետազոտողը նշել էր, որ հիմնականում ապրում են ծայրամասերում՝ Բազում, Դիմաց, Տարոն թաղամասերում: Ըստ ծառայություններ տրամադրողի՝ հիմնականում ապրում են ծայրամասերում՝ Տարոն, Բազում թաղամասերում, ըստ միգրանտի՝ Բազում, Դիմաց, Տարոն թաղամասերում, ըստ ՀԿ-ի ներկայացուցչի՝ Բազում, Դիմաց, Տարոն, Ջունգլիներ թաղամասերում:	Միգրանտներն ապրում են քաղաքի բոլոր հատվածներում: Շատ միգրանտներ կան:	Պետք է տեսնել՝ արդյոք խաչվում են այս վայրերը:

Հարց	Խորը հարցազրույցներ	Ֆոկուս խմբային քննարկումներ	Դիտարկումներ
<p>Նրանք ձևավորում են աջակցության խմբեր (նկարագրե՛ք):</p>	<p>Հետազոտող. <i>«Մարդիկ արտերկրում աշխատանք են գտնում անձնական կապերի միջոցով, ինչը նշանակում է, որ նրանք ունեն ծանոթներ, որոնք տեղեկացնում են նրանց աշխատանք լինելու դեպքում»:</i> Սա հաստատեցին նաև ծառայություններ տրամադրողները, միգրանտները, ՀԿ-ների ներկայացուցիչները:</p>	<p>Ոչ ոք չէր լսել այդ մասին:</p>	<p>Սոցիալական ցանցերը լավ ընդգծված են:</p>
Խրախուսում/ ՄԻԱՎ-ի վերաբերյալ հետազոտություն			
<p>Դուք գիտե՞ք Վանաձորում վայր, որտեղ քաղաքի միգրանտները կարող են հետազոտվել ՄԻԱՎ-ի վերաբերյալ: Դուք կարծու՞մ եք, որ քաղաքի միգրանտները մտահոգվում են ՄԻԱՎ վարակի խնդրով: Ինչու՞ այո և ինչու՞ ոչ:</p>	<p>Հետազոտողը նշել է պոլիկլինիկաները և հիվանդանոցները. <i>«Արական սեռի միգրանտները հիմնականում հետաքրքրված չեն ՄԻԱՎ վարակի խնդրով, նրանք մտածում են, որ դա չի սպառնում իրենց»:</i> Սա հաստատվել է հարցազրույցների այլ մասնակիցների կողմից:</p>	<p>--</p>	<p>Հետաքրքրված չեն ՄԻԱՎ վարակի խնդրով և ՄԻԱՎ-ի վերաբերյալ հետազոտությամբ:</p>

Հարց	Խորը հարցազրույցներ	Ֆոկուս խմբային քննարկումներ	Դիտարկումներ
Կարծում եք քաղաքի միգրանտները կցանկանայի՞ն մասնակցել այսպիսի հետազոտության: Ինչու՝ այո և ինչու՝ ոչ:	Ըստ հետազոտությանը մասնակցած հետազոտողի՝ միգրանտները չեն հետաքրքրվի այսպիսի հետազոտությամբ և չեն մասնակցի դրան:	Բոլոր մասնակիցները նշել են, որ ցանկանում են մասնակցել այսպիսի հետազոտության, որովհետև դա հետաքրքիր է իրենց, իրենք գնահատում են իրենց առողջությունը, կա ֆինանսական խրախուսում ստանալու հնարավորություն: Միգրանտներից մեկը նշել է, որ կմասնակցի հետազոտությանը անկախ ֆինանսական խրախուսումից:	Մեծ հետաքրքրություն մասնակցության նկատմամբ:
Կցանկանայի՞ն նրանք արդյոք անցնել ՄԻԱՎ-ի վերաբերյալ հետազոտություն, եթե դա լիներ անանուն և գաղտնի:	Գաղտնիությունն ու անանունությունը կարևոր են:	--	Պետք է լինեն գաղտնիության և անանունության պահպանման լավ երաշխիքներ:
Ի՞նչը կլիներ համապատասխան նվեր կամ խրախուսում մասնակցության համար: Բերե՛ք հստակ օրինակներ:	Հետազոտողը նշել է, որ նույնիսկ 100 դրամի հեռախոսային քարտերը գրավիչ կլինեին միգրանտների համար: Ծառայություն տրամադրողները նշել են 50000, ՀԿ-ի ներկայացուցիչը՝ 5000 դրամի չափով խրախուսման մասին:	Մասնակիցներից մեկը նշել է. «Գաղտնի և անվճար հետազոտվելու հնարավորությունը՝ որպես կարևոր խրախուսում հետազոտությանը մասնակցելու համար»: Ըստ մեկ այլ մասնակցի՝ 4000-5000 դրամը կլիներ բավարար:	Բավարար կլինի 5000 դրամը:

Հարց	Խորը հարցազրույցներ	Ֆոկուս խմբային քննարկումներ	Դիտարկումներ
<p>Ի՞նչ եք կարծում, որո՞նք են այսպիսի հետազոտություն անցկացնելու դժվարությունները:</p>	<p>Հետազոտող, ծառայություն տրամադրող. «Հաշվի առնելով մեթոդաբանությունը («հավասարը՝ հավասարին» հավաքագրում և խրախուսման հնարավորություն) բոլորը կմասնակցեին»: Միգրանտ. «Հեփաքրքրության պակասը, ինչը սակայն կարող է լրացվել խրախուսման տրամադրումով»: ՀԿ-ի ներկայացուցիչ՝ «Սեփական առողջությունը չզնսահապելը»:</p>	<p>Մասնակիցները նշել են անվստահությունը գաղտնիության պահպանման նկատմամբ, այլ դեպքում խնդիր չի լինի, եթե կա ֆինանսական խրախուսում:</p>	<p>Նախապես պայմանավորվել: Գաղտնիության պահպանման երաշխիքներ: Խրախուսումը օգտակար է:</p>
Սեռական վարքագիծ			
<p>Դուք գիտե՞ք կամ լսե՞լ եք Հայաստանի քաղաքային համայնքներից արական սեռի սեզոնային աշխատանքային միգրանտների մասին, որոնք արտերկրում գտնվելիս ունենում են զուգընկերներ:</p>	<p>Բոլոր հարցվողները նշել են, որ միգրանտներն ունենում են երկու տիպի զուգընկերներ: Ավելի հեշտ է գտնել պատահական զուգընկերներ ակումբներում:</p>	<p>Մասնակիցներից մեկը նշել է. «Բոլորն ունեն զուգընկերներ արտերկրում... Ոմանք մեկնում են իրենց բարեկամների հետ, հաճախ ավելի տարիքով մարդիկ՝ երիտասարդների հետ, և նրանք անհարմար են զգում գտնել զուգընկերներ, նաև կան որոշ մարդիկ, որոնք մեկնում են իրենց զուգընկերների (կանանց) հետ»: Ըստ մեկ այլ մասնակցի. «Բոլորը դավաճանում են իրենց կանանց»:</p>	<p>Պետք է հստակեցնել մշտական զուգընկերոջ սահմանումը:</p>

Հարց	Խորը հարցազրույցներ	Ֆոկուս խմբային քննարկումներ	Դիտարկումներ
Դուք գիտե՞ք կամ լսե՞լ եք Հայաստանի քաղաքային համայնքներից արական սեռի սեզոնային աշխատանքային միգրանտների մասին, որոնք արտերկրում գտնվելիս օգտվում են մարմնավաճառների ծառայություններից:	Բոլոր հարցվողները նշել են, որ քիչ միգրանտներ են օգտվում մարմնավաճառների ծառայություններից, դա շատ թանկ է, և կա սեռավարակներով վարակման վտանգ. <i>«Ավելի հեշտ է գտնել պատահական զուգընկեր»:</i>	Ոմանք օգտվում են մարմնավաճառների ծառայություններից, բայց մեծ մասի համար դա շատ թանկ է:	Քիչ միգրանտներ են օգտվում մարմնավաճառների ծառայություններից:
Դուք գիտե՞ք կամ լսե՞լ եք, որ այդ տղամարդիկ արտերկրում աշխատելիս օգտագործեն պահպանակներ կանանց հետ սեռական հարաբերություններ ունենալու ժամանակ: Տարածվա՞ծ է պահպանակների օգտագործումը պատահական զուգընկերների հետ սեռական հարաբերություն ունենալիս: Տարածվա՞ծ է պահպանակների օգտագործումը կոմերցիոն զուգընկերների հետ սեռական հարաբերություն ունենալիս:	Բոլոր հարցվողները նշել են, որ միգրանտները հիմնականում օգտագործում են պահպանակներ, վախենում են սեռավարակներից:	Մասնակիցներից մեկը նշել է. <i>«Եթե նրանք հաճախ են ունենում սեռական հարաբերություններ մեկ զուգընկերոջ հետ, աստիճանաբար սկսում են ավելի հազվադեպ օգտագործել պահպանակ»:</i>	Պահպանակների ոչ մշտական օգտագործում:
Դուք լսե՞լ եք սեզոնային միգրանտների մասին, որոնք արտերկրում գտնվելիս ունենում են սեռական հարաբերություններ տղամարդկանց հետ: Ըստ Ձեզ՝ դա տարածվա՞ծ երևույթ է:	Չեն լսել այդ մասին: ՀԿ-ի ներկայացուցիչը նշել է, որ գիտի 5 այդպիսի միգրանտի. <i>«Երևույթն առկա է, սակայն այն ակնառու չէ»:</i>	Դա տարածված երևույթ չէ:	Չգիտեն նման միգրանտների (կամ չեն խոսում այդ մասին):

Հարց	Խորը հարցազրույցներ	Ֆոկուս խմբային քննարկումներ	Դիտարկումներ
Թմրամիջոցների գործածում			
Դուք գիտե՞ք կամ լսե՞լ եք Հայաստանի քաղաքային համայնքներից արական սեռի սեզոնային աշխատանքային միգրանտների մասին, որոնք արտերկրում գտնվելիս գործածում են թմրամիջոցներ: Եթե այո, ապա ի՞նչ տեսակի:	Քչերն են լսել այդ մասին: Հիմնականում գործածում են մարիխուանա և սփայս:	Գիտեն որոշ միգրանտների, որոնք գործածում են թմրամիջոցներ: Հիմնականում գործածում են մարիխուանա և շնչելու ու ծխելու միջոցով գործածվող թմրամիջոցներ:	Թմրամիջոցների գործածման մակարդակը ցածր է:
Դուք գիտե՞ք կամ լսե՞լ եք Հայաստանի քաղաքային համայնքներից արական սեռի այլ սեզոնային աշխատանքային միգրանտների մասին, որոնք արտերկրում գտնվելիս գործածում են ներարկային թմրամիջոցներ: Եթե այո, ապա ի՞նչ տեսակի:	Շատերը չեն լսել այդ մասին: Ծառայություններ տրամադրողները նշել են, որ երկար ժամանակով մեկնողները կարող են այդ անել. «Նրանք գործածում են բենզին (քիմիապես մշակվող բենզին)»:	Միգրանտների մեծ մասը չգիտի այդ մարդկանց մասին:	Թմրամիջոցների շատ ցածր գործածում հիմնականում երկարաժամկետ մեկնող միգրանտների շրջանում:
Կարո՞ղ եք նկարագրել, թե ինչպես են նրանք ներարկում թմրամիջոցները. ներարկում են այլ մարդկանց հետ, օգտագործում են նույն ներարկիչը և ասեղները, օգտվում են նույն պարագաներից:	Շատերը չեն լսել այդ մասին:	Չգիտեն:	Ցածր տեղեկացվածություն ներարկային ճանապարհով թմրամիջոցներ գործածողների վերաբերյալ:

Հարց	Խորը հարցազրույցներ	Ֆոկուս խմբային քննարկումներ	Դիտարկումներ
Հեղափոխություն			
Դուք կցանկանայի՞ք օգնել մեզ՝ գտնելու արական սեռի սեզոնային աշխատանքային միգրանտներ այս պլանավորված հետազոտության մեջ ընդգրկելու համար:	Բոլոր հարցվողները պատասխանել են՝ այո: Ծառայություններ տրամադրողներից մեկը նշել է, որ չի հավաքագրի մարդկանց, բայց կբացատրի հետազոտությանը մասնակցելու կարևորությունը և կառաջարկի մասնակցել դրան:	Բոլորը նշել են, որ կցանկանան ներգրավվել և հավաքագրել այլոց, բոլորը կցանկանան օգնել:	Ցանկանում են օգնել՝ գտնելու միգրանտների:
Դուք կցանկանայի՞ք օգնել մեզ՝ գտնելու արական սեռի սեզոնային աշխատանքային միգրանտների ֆոկուս խմբերի մասնակցելու համար:	Բոլոր հարցվողները պատասխանել են՝ այո:	Բոլոր հարցվողները պատասխանել են՝ այո:	Ցանկանում են մասնակցել:
Կարո՞ղ եք նշել ինչ-որ ծառայություններ կամ մարդկանց, որոնք աշխատում են սեզոնային աշխատանքային միգրանտների հետ:	Չգիտեն: ՀԿ-ի ներկայացուցիչը նշել է. «Կա հեռուստատեսային «Ֆորտունա», որի վազող տողում միշտ կան հայտարարություններ արտերկրում աշխատանքի մասին»:	«Ուկրաին» կազմակերպություն, որի միջոցով միգրանտները կարողանում են աշխատանք գտնել արտերկրում:	Քիչ ծառայություններ են հայտնի միգրանտներին:
Դուք կցանկանայի՞ք նորից խոսել մեզ հետ այսպիսի հետազոտություն ծրագրելու մասին:	Բոլոր հարցվողները պատասխանել են՝ այո:	Բոլոր հարցվողները պատասխանել են՝ այո:	Պատրաստակամ են աջակցելու հետազոտության պլանավորման հարցում:

Ֆոկուս խմբային քննարկումների արդյունքների ամփոփում ազգային խորհրդատուի կողմից

Երևան, Գյումրի և Վանաձոր քաղաքներում բնակվող, վերջին մեկ տարվա ընթացքում աշխատելու նպատակով 3 կամ ավելի ամիս արտերկրում գտնված 18 և ավելի տարիք ունեցող արական սեռի սեզոնային աշխատանքային միգրանտների շրջանում ֆոկուս խմբային քննարկումներն իրականացվել են ընթացիկ տարվա հունվարի 25-ից փետրվարի 6-ն ընկած ժամանակահատվածում:

Իրականացված 6 ֆոկուս խմբային քննարկումներին (երկուական յուրաքանչյուր քաղաքում) ընդհանուր առմամբ մասնակցել է 48 անձ, որոնք ներկայացրել են հետևյալ տարիքային խմբերը՝ 20-29 տարեկան 15 անձ (31,1%), 30-39 տարեկան 21 անձ (43,8%), 40-49 տարեկան 7 անձ (14,6%) և 50-59 տարեկան 5 անձ (10,4%):

Ստորև ներկայացված են ֆոկուս խմբային քննարկումների ամփոփ արդյունքները:

Դոմեն 1. ընդհանուր տեղեկատվություն խմբի մասին

1. Բոլոր երեք քաղաքներում տվյալ կարգի աշխատանքային միգրանտների միջև գոյություն ունեն որոշակի սոցիալական կապեր: Դա է վկայում այն, որ մասնակիցների համալիր գնահատմամբ իրենք ճանաչում են իրենց քաղաքներում բնակվող առնվազն 700-720 նմանօրինակ այլ միգրանտի, այսինքն՝ նրանցից յուրաքանչյուրը միջին հաշվով գիտի այդպիսի 14-15 միգրանտի: Կարևոր է սակայն ընդգծել, որ տվյալ առումով առկա են զգալի տարբերակվածություններ: Այսպես, մասնակիցների կեսից ավելին՝ մոտ 54%-ը, ճանաչում է մինչև 10 նման միգրանտի (այդ թվում 1-ին՝ մոտ 5%-ը, 3-4-ին՝ 23%-ը, 6-9-ին՝ գրեթե 26%-ը), մնացածը՝ 10 և ավելի միգրանտի(10-19-ի՝ շուրջ 16%-ը, 20-29-ի, 30-39-ի և 40 և ավելի՝ մոտ 10-ական տոկոսները): Նշանակալից է նաև ըստ քաղաքների տարբերակվածությունը: Եթե Գյումրիում մեկ մասնակցի հաշվով նման ծանոթությունների միջին թիվը կազմում է մոտ 21 միգրանտ, ապա Վանաձորում՝ շուրջ 15, իսկ Երևանում՝ միայն 10-11: Երևանում մինչև 5 ծանոթ միգրանտ ունեցող մասնակիցները կազմել են մոտ 35%՝ Վանաձորի մոտ 31%-ի և Գյումրիի ընդամենը 13%-ի դիմաց: Եթե Երևանում 5-9 ծանոթ միգրանտ է ունեցել մասնակիցների մոտ 18%-ը, ապա Վանաձորում այդպիսիք կազմել են 31%, Գյումրիում՝ 13%: Վերջապես 10 և ավել ծանոթ միգրանտ են ունեցել Երևանում՝ մասնակիցների 47%-ը, Վանաձորում՝ 38%-ը, Գյումրիի 74%-ի դիմաց: Միջքաղաքային նման տարբերակվածությունն ամենայն հավանականությամբ պայմանավորված է երկու գործոնով: Դրանցից առաջինն աշխատանքային

միգրացիոն գործընթացներում տվյալ քաղաքների բնակչության ներառվածության մակարդակների ոչ նույնականությունն է՝ Երևանի համեմատ Վանաձորում ու հատկապես Գյումրիում երևույթի էապես ավելի զանգվածային բնույթ կրելը: Երկրորդը քաղաքների մեծության և ավանդույթների տարբերությունների բերումով սոցիալական կապերի սերտության աստիճանների ոչ միանշանակ լինելն է: Չնայած նրան, որ մասնակիցների փոքր թիվը պարտադրում է բերված քանակական բնութագրիչների նկատմամբ վերապահումներով մոտեցում, կարելի է արձանագրել, որ դրանք, ընդհանուր առմամբ բավականաչափ հատկանշական լինելով, պետք է հաշվի առնվեն ծրագրվող հետազոտության ընտրանքի ձևավորման և մշակման ընթացքում:

2. Ելնելով նրանից, որ դիտարկմանը նախորդած մեկ ամսվա ընթացքում քննարկումների մասնակիցներից գրեթե յուրաքանչյուր 5-րդը չի ունեցել որևէ հանդիպում/շփում իր ճանաչած այլ աշխատանքային միգրանտի հետ (Երևանում՝ մոտ 15%-ը, Վանաձորում՝ գրեթե 38%-ը, Գյումրիում՝ շուրջ 19%-ը)՝ մյուսներն էլ հանդիպում/շփում ունեցել են բավական սահմանափակ թվով այլ միգրանտների հետ (Երևանում՝ միջին հաշվով 2-ի, Վանաձորում՝ 3-ի, Գյումրիում՝ ավելի քան 6-ի, միջինը՝ մոտ 4-ի), կարելի է փաստել, որ միջմիգրանտային սոցիալական կապերի սերտությունն այնքան էլ մեծ չէ:
3. Քննարկումների մասնակիցների գնահատականների համադրման արդյունքում կարելի է փաստել, որ միջմիգրանտային կապերը հիմնականում չորս բնույթի են՝ գործընկերական (արտերկրում համատեղ աշխատած լինելու հանգամանքը՝ դեպքերի մոտ 1/5-ը), հարազատական/բարեկամական (դեպքերի մոտ նույնքան մասը), ընկերական և հարևանական: Մյուս կողմից, նկատի ունենալով նախորդ կետում նշվածը՝ կարելի է փաստել, որ դրանց հիմնական մասը՝ շուրջ 3/4-ը, առավելապես ծանոթություն է: Այդ մասին է վկայում նաև այն, որ դիտարկմանը նախորդած մեկ ամսվա ընթացքում այլ միգրանտների հետ հարցվածների շփում/հանդիպումներն առավելապես կրել են պատահական բնույթ և սակավ դեպքերում են եղել նախապես ծրագրված, որոշակի նպատակ հետապնդող (դրանք մեծամասամբ եղել են որևէ մեկի տանը, հաճախ՝ այս կան այն տոնական առիթով, որոշ դեպքերում՝ նաև հասարակական սննդի վայրում): Նշենք, որ մասնակիցների գնահատմամբ, եթե իրենց ծանոթ աշխատանքային միգրանտների հետ գործնական հանդիպումներ անգամ ունենում են, ապա միայն նոր մեկնմանը նախորդող ժամանակահատվածում՝ քննարկելու դրա հետ կապված խնդիրները:
4. Նախորդ եզրահանգման իրավացիության ևս մեկ հաստատում է այն, որ Վանաձորի և Գյումրիի քննարկումների մասնակիցների գնահատմամբ հարկ լինելու դեպքում իրենք ի զորու են կապ հաստատելու իրենց ճանաչած այլ

միգրանտներից կեսից էլ քչի հետ: Երևանի պարագայում այս մեծությունն էապես ավելի փոքր է՝ միայն մոտ 1/3-ի հետ:

5. Քննարկումների գրեթե բոլոր մասնակիցները անանուն հարցման իրականացման համար ծանոթ միգրանտների մասին իրենց ունեցած տվյալները հետազոտական խմբին տրամադրելու հարցում խնդիր չեն տեսնում, սակայն նրանց հետ նախապես համաձայնեցնելուց հետո միայն (կտրականապես հրաժարվեցին այդ անել Գյումրիից 2 մասնակից): Այլ խնդիր է այն, որ նրանց որոշակի մասը դժվարացավ գնահատել, թե իր շրջապատի միգրանտների որ մասը կտա նման համաձայնություն, առավել ևս, որ մասը կցանկանա մասնակցել ծրագրվող հետազոտությանը:
6. Այն հարցին, թե ծրագրվող հետազոտությանը մասնակցելու համար կկարողանային արդյոք բերել իրենց ճանաչած միգրանտներից, քննարկումների բոլոր մասնակիցները տվել են դրական պատասխան (բացասական պատասխաններ են եղել Գյումրիի միայն 2 մասնակիցներից. նրանցից մեկը պատճառաբանել է, որ կամաջի նման առաջարկանել, մյուսը՝ որ իր ճանաչած միակ աշխատանքային միգրանտին սեռավարակների խնդիրը չի մտահոգում): Հետաքրքիր է մասնակիցներից մեկի դիտարկումը. ըստ նրա՝ իր ճանաչած աշխատանքային միգրանտների որոշ մասը վերադարձից հետո անպայման բժշկական հետազոտության է ենթարկվում, այդ իսկ պատճառով հազիվ թե համաձայնեն մասնակցելու ծրագրվող հարցմանը: Սակայն մասնակիցների մեծ մասի կողմից արվել է վերապահում, որ իրենց ծանոթ աշխատանքային միգրանտների մասնակցության համաձայնությունը կպայմանավորվի անանունության լիարժեք երաշխիքի և որոշակի նյութական խրախուսման տրամադրմամբ, ինչպես նաև հետազոտության գործընթացի այնպիսի կազմակերպմամբ, որ բացառվեն հերթերով պայմանավորված ժամանակի անհարկի կորուստները: Նյութական խրախուսման տրամադրման անհրաժեշտությունը հատկապես կարևորել են Վանաձորի և Գյումրիի միգրանտները (նրանց մեծ մասը, որպես դրա ընդունելի մեծություն, նշել է 4-5 հազար դրամը, եղել են նաև որոշակի թվով մասնակիցներ, որոնց կարծիքով արդյունավետ կարող է լինել միայն 10 հազար, Երևանի երկու մասնակցի գնահատմամբ՝ անգամ 10-15 հազար դրամի չափով խրախուսումը): Մասնակիցների գերակշիռ մասը կարողացավ/հարկ համարեց տալ նաև թվային գնահատական, թե իր ծանոթ աշխատանքային միգրանտներից քանիսի մասնակցությունը կկարողանա ապահովել ծրագրվող հետազոտությունը: Այդ գնահատականների ընդհանուր գումարային մեծությունը կազմում է 230-260 անձ, պայմանով սակայն, որ նրանք արդեն մեկնած չլինեն երկրից: Պոտենցիալ հարցվողների առավել մեծ թիվ են

նշել վանաձորցիները՝ 100-110, նրանց ոչ մեծ չափով զիջել են գյումրեցիները՝ 90-100, և էապես ավելի պակաս՝ երևանցիները՝ ընդամենը 40-50:

7. Ի տարբերություն Երևանի մասնակիցների՝ Վանաձորի և Գյումրիի մասնակիցների մեծ մասի գնահատմամբ փողոցում քայլելիս կարելի է հստակորեն տարբերակել աշխատանքային միգրանտներին: Նրանց կարծիքով վերջիններս որոշակիորեն առանձնանում են իրենց հագուստով և ոճով, նրանց արտաքինի վրա ֆիզիկական ծանր աշխատանքի ունեցած ազդեցությամբ:
8. Քննարկումների մասնակիցների մեծ մասի կարծիքով իրենց բնակավայրում առկա է արտերկրում աշխատած միգրանտների որոշակի ցանց: Ընդ որում ի տարբերություն Վանաձորի և Գյումրիի մասնակիցների, որոնց գնահատմամբ այն բավական մեծ է՝ Երևանի մասնակիցների գերակշիռ մասը դժվարացավ գնահատել դրա չափերը: Միաժամանակ նրանց մեծ մասի կարծիքով, չնայած զգալի ծավալային մեծություններին, այն չի կարող գնահատվել որպես լիարժեք կայացած, բավարար չափով զարգացած:
9. Մասնակիցներից և ոչ մեկը չկարողացավ նշել իրենց քաղաքի որևէ վայր, որտեղ արտագնա աշխատանքային միգրանտները սովորաբար հանդիպում են շփումների, հաղորդակցման և տեղեկությունների փոխանակման համար, որտեղ հարկ եղած դեպքերում կարելի է նրանց որոշ մասի հետ հանդիպել: Ակնհայտ է, որ սա ևս վկայում է նրանց սոցիալական ցանցի թուլության մասին:
10. Երեք քաղաքների մասնակիցներն էլ դժվարացան առանձնացնել աշխատանքային միգրանտների առավել հոծ բնակեցման թաղամասերը: Եթե Գյումրիի և Վանաձորի դեպքերում դա միանգամայն բնական է թվում, քանզի երևույթը, այդ քաղաքներում լինելով առավել քան ծավալուն, կարելի է ասել զանգվածային, գործնականում հավասար չափով ներառում է բոլոր թաղամասերում բնակվողներին, ապա Երևանի դեպքում օրինաչափ է խոսել դրանում կենտրոնական թաղամասերում բնակվողների զգալիորեն սակավ ընդգրկվածության մասին:
11. Միանգամայն օրինաչափ և սպասելի պետք է գնահատվի այն փաստը, որ քննարկումներին մասնակցածներից որևէ մեկը երբևէ չէր լսել սեզոնային միգրանտների աջակցության որևէ խմբի գոյության մասին:

Դոմեն 2. Խմբի ընտրանք

12. Քննարկումների գրեթե բոլոր մասնակիցները նշեցին, որ իրենք կկարողանան և կցանկանան մասնակցել ՄՄՁԸ մեթոդով անցկացվող հետազոտությանը (եղան միայն երկու հրաժարվողներ Գյումրիից, որոնք այդ քայլը հիմնավորեցին նրանով, որ իրենք ռիսկային վարքագիծ չեն դրսևորել): Որպես մասնակցության հիմնական շարժառիթներ՝ մատնանշվեցին ոչ միայն առողջական վիճակի մասին

տեղեկանալու ցանկությունը, այլև դրամական խրախուսում ունենալու հնարավորությունը (Գյումրիի մասնակիցներից մեկն անգամ նշեց, որ իր համար մասնակցության միանգամայն բավարար խթան է արյան անվճար ընդհանուր հետազոտության հնարավորության հանգամանքը):

13. Մասնակիցների գերակշիռ մասի կարծիքով անանունության երաշխիքների տրամադրման դեպքում վերը նշված շարժառիթներով հետազոտությանը մասնակցելու ցանկություն կարող են ունենալ նաև իրենց միգրանտ ծանոթներից շատերը: Եղան նաև կարծիքներ, որ քիչ չեն լինի նաև այնպիսիք, ովքեր հետազոտությանը կմասնակցեն իրենց մերժած չլինելու համար: Այս դեպքում ևս որպես մասնակցության նյութական խրախուսման չափ վերահաստատվեցին կետ 6-ում նշված գումարի չափերը:
14. Մասնակիցների մեծ մասը նշեց, որ եթե իրենք մասնակցեն հետազոտությանը, ապա կկարողանան ներգրավել որոշակի թվով այլ միգրանտների ևս: Ընդ որում նրանց հիմնական մասը չզլացավ նշել նաև պոտենցիալ հարցվողների այն որոշակի թիվը, որ ինքն ի գորու է ապահովել (այստեղ ևս ըստ էության կրկնվեցին 6-րդ կետում նշված համապատասխան գումարի չափերը):
15. Երևանի մասնակիցների կողմից որպես հետազոտության հիմնական դժվարություն հիշատակվեցին ժամանակի սղությունը, հետազոտության ընթացքում հնարավոր հերթերի գոյացումը: Ինչ վերաբերում է Վանաձորի և Գյումրիի մասնակիցներին, ապա նրանց մեծ մասի գնահատմամբ դրամական խրախուսման առկայության դեպքում որևէ խնդիր չի լինի: Մյուսները որպես խնդիր մատնանշեցին մասնակցելու ցանկություն չունենալը և գաղտնիության չափահասման մտավախությունը, պոտենցիալ մասնակիցների զգալի մասի՝ երկրից բացակայությունը, վերջապես, ոչ մեծաթիվ դեպքերում, ամոթխածության խնդիրը, հատկապես եթե գրուցավարը կին լինի (ինչպես նշեց մասնակիցներից մեկը, քիչ չեն այնպիսիք, ովքեր ամաչում են անգամ դեղատնից պահպանակ գնել):
16. Առանց բացառության՝ բոլոր մասնակիցները համաձայնություն հայտնեցին անհրաժեշտության դեպքում մասնակցել հետազոտական աշխատանքների հետագա ծրագրման գործընթացին:

Դոմեն 3. սեռական վարքագիծ

17. Երեք քաղաքների քննարկումների մասնակից գրեթե բոլոր միգրանտներն էլ գիտեին, կամ առնվազն լսել էին արտագնա աշխատանքների ընթացքում հայաստանցի տղամարդ միգրանտների զուգընկերներ ունենալու մասին: Նրանց հիմնական մասի գնահատմամբ այդպիսիք կազմում են մեր աշխատանքային միգրանտների մեծ մասը (եղան անգամ քանակական գնահատականներ՝ 50-

70%): Նրանց գնահատմամբ երևույթի տարածվածության և դրսևորման ձևերի վրա ազդող գործոններ են աշխատանքի բնույթը և ծանրությունը, կացարանային և կենցաղային պայմանները, ֆինանսական հնարավորությունները, գործընկերների սեռատարիքային, տարածքային և ազգակցական կազմը (նրանց թվում կին և տարիքավոր համաքաղաքացիների, մասնավորապես ազգակիցների առկայությունը, մուտքի բնակավայրի տիպը՝ մեծ քաղաք, փոքր քաղաք, գյուղական վայր, չբնակեցված տարածք), անձնական բարոյական նկարագիրը (այս վերջին գործոնը հիշատակվեց միայն մեկ անգամ Վանաձորի միգրանտներից մեկի կողմից): Մեծամասնության կողմից նշվեց, որ կախված այս գործոնների համադրումից՝ տեղացի սեռական զուգընկերները կարող են լինել թե՛ մշտական, թե՛ ժամանակ առ ժամանակ փոխվող և թե՛ պատահական, այսպես կոչված՝ մեկանգամյա: Մասնավորապես նշվեց, որ մշտական սեռական զուգընկեր ունենալու գործելակերպն առավել տարածված է փոքր քաղաքների և գյուղական վայրերի դեպքում (մասնակիցներից շատերը հարկ համարեցին շեշտել, որ այս տարբերակը գերադասելի է արդեն իսկ այնքանով, որ որպես կանոն միաժամանակ լուծվում են կացարանի և կենցաղի խնդիրները), և որ մեծ քաղաքներում առավել հաճախակի է պատահական զուգընկերոջ գործելակերպը:

18. Գնահատելով հայաստանցի աշխատանքային միգրանտների կողմից արտերկրում մարմնավաճառների ծառայություններից օգտվելու երևույթը՝ գործնականում բոլոր մասնակիցներն ընդունեցին դրա առկայության փաստը՝ արձանագրելով սակայն, որ հիմնականում ֆինանսական, մասամբ նաև լեզվական խոչընդոտների բերումով այն առնվազն լայն տարածում չունի:
19. Քննարկումների մասնակիցները գործնականում լիովին համակարծիք էին նաև իրենց իմացած, արտերկրում սեռական կապեր ունեցած աշխատանքային միգրանտների կողմից պահպանակի օգտագործման հանգամանքի գնահատման հարցում: Ըստ նրանց՝ այն օգտագործվում է պատահական ու կոմերցիոն սեռական կապերի պարագայում (բազմիցս նշվեց, որ այդ հարցում պնդում, ավելին՝ բոլոր մարմնավաճառներն իրենք են տրամադրում): Մյուս կողմից, սակայն, մասնակիցների կարծիքով պատահական կապերի դեպքում չեն բացառվում նաև այնպիսի իրավիճակներ, երբ որևէ պատճառով (ալկոհոլ, թմրամիջոցների գործածում և այլն) պահպանակ չի օգտագործվում: Ինչ վերաբերում է մշտական/տևական կապերին, ապա ըստ մասնակիցների գնահատման՝ դրանց դեպքում որպես կանոն պահպանակ օգտագործվում է միայն սկզբնական շրջանում:
20. Քննարկումների բոլոր մասնակիցները նշեցին, որ իրենք արտերկրում տղամարդկանց հետ սեռական հարաբերություն ունեցող հայաստանցի

աշխատանքային միգրանտների չեն ճանաչում, և եթե նման երևույթ անգամ կա, ապա այն առնվազն տարածված բնույթ չի կրում:

Դոմեն 4: Թմրամիջոցների գործածում

21. Քննարկումների մասնակիցների բացարձակ մեծամասնությունը գիտեր արտերկրում թմրամիջոցներ գործածած հայաստանցի աշխատանքային միգրանտների և/կամ լսել էր նրանց մասին: Եղան նաև քանակական և որակական որոշ գնահատականներ («...ոչ մեծ մասը», «...մոտ 10%-ը», «... քիչ են, որովհետև դրա պատճառով այնտեղ աշխատանք չեն ունենա», «...ավելի շար գործածում են նրանք, ովքեր մնացել են մշտական բնակության», «...այնտեղ այնքան էլ շար չեն, բայց վերադարձից հետո այստեղ անգործությունից շարերն են գործածում»): Նրանց գործածած թմրամիջոցներից հիմնականում հիշատակվել են ծխելու կամ շնչելու միջոցները (մարիխուանա, «spice»-ներ, բենզին և այլն), եղել են նաև հաբերի գործածման մասին ոչ մեծ թվով հիշատակումներ:
22. Արտերկրում ներարկային թմրամիջոցներ գործածած հայաստանցի աշխատանքային միգրանտների գիտեր/նրանց մասին լսել էր մասնակիցների միայն փոքր մասը՝ 10-20%-ը, ընդ որում նրանցից որևէ մեկը չկարողացավ, միգուցե չցանկացավ նշել վերջիններիս կողմից գործածվող թմրամիջոցի տեսակը: Մասնակիցների որոշ մասի գնահատմամբ այդպիսի միգրանտներ քիչ են. «...Քանի որ նախապես իմանալու դեպքում նրանց չեն վերցնում աշխատանքի ո՛չ գործատուները, ո՛չ էլ ընկերներն են առաջարկում աշխատանք, ընթացքում պարզելու դեպքում էլ միանգամից ազատում են»:
23. Արտերկրում ներարկային թմրամիջոցներ գործածած հայաստանցի աշխատանքային միգրանտների ճանաչող/նրանց մասին լսած մասնակիցները որպես կանոն տեղյակ չէին այն մասին, թե ինչպես և ինչ ներարկիչներ են նրանք օգտագործում: Թերևս կարելի է միայն հիշատակել Երևանի երկու մասնակիցների հետևյալ գնահատականը. «...Եթե անգամ նրանք օգտագործում են միանվագ ներարկիչներ, ապա որոշ պարագաներ այնուամենայնիվ ընդհանուր օգտագործման են»:

Դոմեն 5. հետագա քայլեր

24. Քննարկումների բոլոր մասնակիցներն էլ ցանկություն հայտնեցին ոչ միայն ներառվելու ծրագրվող հետազոտության մեջ, այլև հնարավորինս աջակցելու նրանում այլ աշխատանքային միգրանտների ներգրավման գործին:
25. Քննարկումների մասնակիցները պատրաստակամ էին նաև աջակցելու այլ ֆոկուս խմբերի մասնակիցներ գտնելու հարցում, ավելին՝ նրանց որոշ մասն իրապես օգնեց՝ լուծելու այդ խնդիրը:
26. Պատասխանելով այն հարցին, թե հայաստանցի արտագնա աշխատանքային միգրանտների հետ աշխատող տեղական ի՞նչ ծառայություններ կամ մարդկանց գիտեք, քննարկումների մասնակիցներն ընդամենը կարողացան նշել առանձին անհատների՝ հիմնականում բրիգադներ հավաքագրողներ, որոնք հավաքագրում են անհրաժեշտ մասնագիտություն և հմտություն ունեցող մարդկանց արտերկրում աշխատելու համար: Կազմակերպության հիշատակում եղավ միայն Վանաձորում՝ «Ուկրշին»-ը, որի գործունեությունը ևս ըստ էության սահմանափակվում է արտերկրում աշխատանք գտնելու հարցում տրամադրվող օգնությամբ: Աշխատանքային միգրանտների մասին տվյալ կազմակերպության ունեցած տեղեկատվական հնարավորությունների խնդիրը բացահայտման կարիք է զգում:
27. Առանց բացառության՝ բոլոր մասնակիցները համաձայնություն հայտնեցին անհրաժեշտության դեպքում մասնակցել հետազոտական աշխատանքների հետագա ծրագրման գործընթացին:

Խորքային հարցազրույցների արդյունքների ամփոփում

Երևան, Գյումրի և Վանաձոր քաղաքների փորձագետների խորքային հարցազրույցներն իրականացվել են ընթացիկ տարվա հունվարի 25-ից փետրվարի 6-ն ընկած ժամանակահատվածում:

Իրականացվել է ընդհանուր առմամբ 24 հարցազրույց, այդ թվում 6-ը՝ արտագնա սեզոնային աշխատանքային միգրանտի, 7-ը՝ ՏԻՄ-երի ներկայացուցիչներ և ծառայություններ տրամադրողների, 8-ը՝ ՀԿ-ների ներկայացուցիչների, և 3-ը՝ հետազոտողների հետ:

Ստորև ներկայացված են հարցազրույցների ամփոփ արդյունքները:

Դոմեն 1. ընդհանուր տեղեկություններ խմբի մասին

1. Բոլոր հարցվածները գիտեին մեծաթիվ արտագնա աշխատանքային միգրանտների, սակայն անձնապես ծանոթ էին նրանց մոտ 30-40%-ի հետ: Ուշագրավ է Վանաձորի ծառայություններ տրամադրողներից մեկի պատասխանը. «Գիտեմ մոտ 1000 հոգու, իսկ 10-15-ին ճանաչում եմ անձամբ»:

2. Հարցվածներից 11-ն արտագնա աշխատանքների մեկնող կանանց չեն ճանաչում: Մյուսների հիմնական մասը գիտի ընդամենը 1-2 նման կնոջ: Զգալի թվով կին միգրանտների գիտեն հարցվածներից միայն երկուսը: Նրանցից մեկը Գյումրիից է (ՏԻՄ ներկայացուցիչ): Նա ոչ միայն գիտի նման 10 կնոջ, այլև տեղյակ է, թե ուր են նրանք մեկնում և ինչ գործունեություն իրականացնում (*«Մեկնում են ՌԴ ծովափնյա քաղաքներ և զբաղվում են խմորեղենի պատրաստմամբ»*): Մյուսը Երևանից է (վարչական ծառայություն տրամադրող) և գիտի 7-8 նման կնոջ: Ուշագրավ և առկա հետազոտական տվյալներից դատելով՝ բավական ճշմարտացի է վերը նշված 1000 միգրանտի իմացող Վանաձորի հարցվածի հետևյալ գնահատականը. *«Կանայք կազմում են իմ իմացած հազարի մոտ 5%-ը»*:
3. Հարցվածներին ծանոթ միգրանտների զգալի մասը իրենց իսկ բարեկամները, հարազատները, ընկերները և հարևաններն են: Միաժամանակ ՏԻՄ ներկայացուցիչների և ծառայություններ տրամադրողների, ՀԿ-ների ներկայացուցիչների և հետազոտողների մեծ մասն ունի աշխատանքային գործունեության բերումով իրենց ծանոթ որոշակի, որոշ դեպքերում անգամ նշանակալի թվով միգրանտներ:
4. Ըստ հարցվածների՝ իրենց ճանաչած միգրանտների զգալի մասի կոնտակտային տվյալներն իրենք ունեն և կարող են նրանց հետ կապ հաստատել: Մյուսների հետ կարող են փորձել կապ հաստատել այլ անձանց օգնությամբ: Այլ խնդիր է, որ նրանց որոշակի մասն արդեն կարող է մեկնած լինել: Ուշագրավ է, որ ինչպես նշել են Երևանի երկու հարցված հետազոտող փորձագետները, իրենք ունեն երկրի տարբեր մարզերում բնակվող աշխատանքային միգրանտների մեծաթիվ հասցեներ, շատ դեպքերում նաև հեռախոսահամարներ (սակայն այս դեպքում ևս չկա երաշխիք, որ նրանք արդեն արտերկրում չեն լինի): Հարցվածները նշել են, որ իրենց հանդիպումները ծանոթ միգրանտների հետ հաճախակի չեն, լինում են հիմնականում այս կամ այն առիթով և գրեթե միշտ ձմռանը, երբ նրանք Հայաստանում են:
5. Հարցվածները խնդիր չեն տեսնում միգրանտների մասին իրենց ունեցած տվյալները հետազոտական խմբին տրամադրելու հարցում: Խնդիրը երկրում նրանց լինելն ու հետազոտությանը մասնակցելու համար համաձայնություն տալն է: Առավել լուրջ քննարկման կարք է զգում Գյումրիի առողջապահական համակարգը ներկայացնող փորձագետի՝ միգրանտների տվյալների ստացման համար պոլիկլինիկաների տնօրենների օգնությանը դիմելու առաջարկը:
6. Հարցվածների մեծ մասը կարծում է, որ աշխատանքային միգրանտներն արտաքնապես չեն տարբերվում մյուսներից: Հակառակ կարծիք ունեցող փոքրամասնությունն էլ գտնում է, որ տարբերություն կա նրանց հագուկապի մեջ: Մասնավորապես Գյումրիի ՀԿ ներկայացնող հարցվածներից մեկի կողմից եղավ

հետևյալ գնահատականը. «... Միբիրից վերադարձածները հստակ առանձնանում են իրենց կաշվե վերարկուներով, մուշտակներով ու մորթե գլխարկներով»:

7. Միգրանտների ցանցի մեծության մասին հարցվածները դժվարացան տալ միանշանակ գնահատականներ: Հիմնականում եղան նշումներ, որ իրենց քաղաքներում միգրանտները շատ են, սակայն ցանցը թույլ է կազմակերպված, քիչ թե շատ կայուն կապերը ներառում են 10-20 անձից բաղկացած խմբեր և հիմնականում ունեն, այսպես ասած՝ բրիգադային, ավելի հազվադեպ՝ բարեկամա-ընկերական հիմքեր:
8. Հարցվածների պատասխաններից դատելով՝ միգրանտները հանդիպումների որոշակի վայրեր չունեն, նրանց հանդիպում/շփումները հիմնականում տեղի են ունենում իրենց տներում կամ հասարակական սենդի կետերում:
9. Ի տարբերություն Գյումրիի բոլոր հարցվածների, որոնց կարծիքով միգրանտները հավասարաչափ տարաբնակեցված են քաղաքի բոլոր թաղամասերում՝ Վանաձորի ու Երևանի հարցվածների որոշ մասի կարծիքով նրանց խտությունն ավելի բարձր է ծայրամասային թաղամասերում: Վանաձորի հարցվածների որոշ մասն անգամ թվարկեց դրանք՝ Դիմաց, Տարոն, Ջունգլիներ:
10. Միգրանտների աջակցության խմբերի առկայության մասին հարցվածները տեղյակ չէին, նշվեց միայն, որ կան միմյանց ճանաչող միգրանտներ, որոնք փոխադարձ օգնություն են տրամադրում արտերկրում աշխատանք գտնելու հարցում:

Դոմեն 2. խմբի ընտրանք

11. Որպես միգրանտների՝ ՄԻԱՎ-ի վերաբերյալ հետազոտության հնարավոր վայրեր հիմնականում նշվեցին պոլիկլինիկաներն ու հիվանդանոցները: Դրանցից զատ՝ հիշատակվեցին նաև Վանաձորում արյան փոխներարկման կայանը և «Նորմեդ» ախտորոշիչ կենտրոնը, Գյումրիում՝ արյան կայանը, Երևանում՝ ՁԻԱՀ-ի ԿՀԿ-ն: Գնահատելով ՄԻԱՎ վարակի խնդրով միգրանտների մտահոգվածության աստիճանը՝ հարցվածների մեծ մասը կարծիք հայտնեց, որ այն բավականին ցածր է, և որ դա պայմանավորված է այն թյուր պատկերացմամբ, թե անձամբ իրենց այն չի սպառնում: Սա իր հերթին կարող է բացատրվել երևույթում ներառվածների մեծ մասի ցածր կրթական մակարդակով: Եղավ նաև կարծիք, որ դրանում դերակատարում ունի նաև, այսպես կոչված, ամաչելու հանգամանքը: Հետաքրքիր է Գյումրիի ՀԿ ներկայացնող հարցվածներից մեկի հետևյալ դիտարկումը. «...Միգրանտների որոշ մասը վերադարձից հետո, գրեթե բոլոր դեպքերում, դիմում է մասնավոր բուժհաստատության բժշկի՝ նվազեցնելու համար բացահայտվելու վրանգը»:

12. Հետազոտությանը միգրանտների մասնակցության ցանկության հարցում հարցվածներն հիմնականում այնքան էլ լավատես չէին (*«...Մեծամասնությունը երևի կհրաժարվի»*, բուժաշխատող՝ Գյումրի): Որպես հրաժարման հիմնական պատճառներ նշվեցին անտարբերությունը սեփական առողջության նկատմամբ, մտածելակերպը, որ ՄԻԱՎ-ի ու այլ սեռավարակների վտանգն իրենց կշռջանցի, հոգնածությունը մեծաթիվ սոցհարցումներից, բացահայտվելու վախը և բնակչության մտածելակերպի առանձնահատկությունները (*«...Դեպքեր գիտեմ, երբ կինն ունեցել է առողջական խնդիրներ, ամուսնու հետազոտությունն էլ է եղել անհրաժեշտ, բայց նա կտրականապես հրաժարվել է»*, բուժաշխատող՝ Գյումրի): Եղան նաև ոչ մեծաթիվ հարցվածներ, որոնց կարծիքով իրենց առողջական վիճակի մասին տեղեկանալու մղումը, ինչպես նաև ՄԻԱՎ-ի խնդրի մասին բավականաչափ տեղեկացվածությունը մեծամասնության մոտ ցանկություն կառաջացնի մասնակցելու ծրագրվող հետազոտությանը: Որոշ հարցվածների կարծիքով մասնակցության աստիճանի բարձրացման լուրջ հաղթաթղթեր կարող են լինել մասնակցելու առաջարկ անողին (ընկերոջը, մտերիմին, բարեկամին, հարևանին) չմերժելու գործոնը, հետազոտության նպատակների, խնդիրների և կարևորության մասին նախնական լայն տեղեկացումը, ինչպես նաև մասնակցության խրախուսման միջոցների կիրառումը:
13. Հարցվածների հիմնական մասի կողմից հետազոտության գաղտնիության ու անանունության պայմանը գնահատվեց որպես մասնակցության աստիճանի բարձրացման կարևոր գործոն, որի նշանակությունը չպետք է սակայն գերազնահատվի (*«...Այն որոշ չափով կմեղմի վիճակը, բայց էլի դժվար կլինի»*, ՀԿ-ի ներկայացուցիչ՝ Երևան): Երևանում հարցված հետազոտողներից մեկի գնահատմամբ գաղտնիությունն առավել լիարժեք կլինի ու առավել մեծ չափով կնպաստի մասնակցության մեծացմանը, եթե հարցումներն իրականացվեն ոչ թե հարցվողի տանը, այլ այնպիսի վայրում, որտեղ նրան չեն ճանաչում: Հարցվածների մեծամասնության կարծիքով անանունությունը լրջորեն կնպաստի մասնակցության աստիճանի բարձրացմանը միայն խրախուսման որոշ մեթոդների հետ զուգահեռ կիրառման պարագայում:
14. Պատասխանելով մասնակցության համար բավարար նվերի կամ խրախուսման մասին հարցին՝ հարցվածների մեծ մասը որպես առավել արդյունավետ տարբերակ նշեց դրամական խրախուսման տրամադրումը: Հետաքրքիր է, որ եթե Վանաձորում հարցվածների մեծ մասը որպես դրա ընդունելի մեծություն մատնանշեց 5 հազար դրամը, ապա Գյումրիում՝ 5-10 հազար դրամը, Երևանում՝ 10-15 հազար դրամը: Առանձին հարցվածների կարծիքով էլ առավել արդյունավետ կլինի խրախուսման ոչ դրամական տարբերակը (*«...Կինոյի տոմս, թեյի կամ սուրճի փաթեթ, քաղցրավենիք կամ սննդային որևէ փաթեթ, ինչպես*

նաև պոլիկլինիկաներում ընդանեկան բժշկի անվճար խորհրդատվություն կամ ուլտրաձայնային հետազոտություն», ՀԿ-ի ներկայացուցիչ՝ Գյումրի): Մյուս կողմից, սակայն, ՀԿ ներկայացնող հարցվածներից մեկը հայտնեց հետևյալ կարծիքը. «... Դրամական խրախուսումը ցանկալի չէ: Դա կարող է հետագայում դժվարացնել այլ կազմակերպությունների աշխատանքը միգրանտների շրջանում այլ հետազոտություններ իրականացնելու հարցում, քանի որ միգրանտներն արդեն առանց դրամական խրախուսման չեն համաձայնի մասնակցել որևէ հետազոտության կամ սոցիալական ծրագրի»: Նույն հարցվողը նշեց նաև դրամական բարձր խրախուսման ևս մեկ վտանգի մասին. «... Դրամական խրախուսումը կարող է նաև ավելորդ ու ոչ նպատակային մարդկանց ներգրավման պատճառ դառնալ, քանի որ շատերը գումար ստանալու նպատակով կփորձեն իրենց ներկայացնել որպես միգրանտ»: Հարցվածներից երկուսը (մեկը՝ միգրանտ, մյուսը՝ բուժաշխատող) նշեցին, որ մասնակցության լուրջ գործոն կլինի իրենց անձնական խնդրանքը: Հարցված հետազոտողներից մեկի կարծիքով էլ արդյունավետ կարող է լինել արդեն իսկ հետազոտության շրջանակներում մատուցվող բժշկական ծառայության իրական արժեքի մասին մասնակցին տեղեկացումը:

15. Հարցվածների կողմից որպես հետազոտության անցկացման հիմնական դժվարություններ նշվեցին սեփական առողջության նկատմամբ անտարբեր վերաբերմունքը և գաղտնիության չպահպանման, հետազոտվելու հանգամանքի բացահայտման մտավախությունը: Նշվեցին նաև տարածքային հասանելիության խնդիրը, ինչպես նաև երևոյթի սեզոնայնության հանգամանքը:

Դոմեն 3. սեռական վարքագիծ

16. Հարցվածների կարծիքով արական սեռի աշխատանքային միգրանտների 50-90%-ն արտերկրում գտնվելիս ունենում է ինչպես պատահական, այնպես էլ մշտական/տևական զուգընկերներ: Առավել տարածված է մշտական/տևական զուգընկերներ ունենալու գործելակերպը, ինչը հատկապես տարածված է տարեց մարդկանց մոտ:
17. Գրեթե բոլոր հարցվածները համակարծիք էին, որ սեզոնային աշխատանքային միգրանտների ոչ մեծ մասը՝ 5-20%-ն է արտերկրում լինելիս օգտվում մարմնավաճառների ծառայություններից: Ըստ նրանց՝ նման գործելակերպն ավելի բնորոշ է երիտասարդներին: Նրանց կարծիքով դա բացատրվում է ինչպես մարմնավաճառների ծառայությունների թանկությամբ ու միգրանտների ոչ մեծ վաստակով, այնպես էլ նրանով, որ իրենք՝ մարմնավաճառներն են հաճախ խուսափում նրանցից («... Մարմնավաճառները խուսափում են մեր

միգրանտներից «կեղտոտության» պատճառով, քանի որ նրանց մեծ մասի կենցաղային պայմաններն անբավարար են», ՀԿ-ի ներկայացուցիչ՝ Գյումրիի):

18. Հարցվածների մեծ մասը լսել է/տեղյակ է, որ արտերկրում միգրանտները սեռական հարաբերությունների ժամանակ պահպանակ օգտագործում են, սակայն նրանց կարծիքով դա կատարվում է ոչ միշտ և ոչ բոլորի կողմից: Հարցվածների մեծ մասի կարծիքով պահպանակների օգտագործումը ավելի հաճախակի է երիտասարդների ու զգալիորեն ավելի պակաս՝ տարեց միգրանտների շրջանում: Տարակարծություններ գրեթե չկան նաև այն հարցում, որ եթե պահպանակ օգտագործվում է պատահական և մարմնավաճառների հետ կապերի գրեթե բոլոր դեպքերում, ապա տևական/մշտական կապերի՝ աննշան մասի դեպքերում:
19. Հարցվածներից միայն 6-ն էին լսել միգրանտների շրջանում տղամարդկանց միջև սեռական կապերի մասին, ընդ որում նրանք բոլորը կա՛մ չկարողացան գնահատել երևույթի տարածվածության աստիճանը և կա՛մ հայտնեցին կարծիք, որ դրանք կարող են լինել եզակի դեպքեր:

Դոմեն 4. թմրամիջոցների գործածում

20. Հարցվածներից 10-ը (4-ը՝ Վանաձորից, 1-ը՝ Գյումրիից և 5-ը՝ Երևանից) անգամ չեն լսել արտերկրում գտնվելիս աշխատանքային միգրանտների կողմից թմրամիջոցների գործածման դեպքերի մասին: Նրանց մի մասն էլ լսել է նման եզակի դեպքերի մասին, ընդ որում հիմնականում ոչ ներարկային թմրամիջոցների գործածման (մարիխուանա, հաբեր և այլն): Գրեթե բոլոր հարցվածների կողմից երևույթը գնահատվեց որպես ոչ այնքան տարածված: Այս հարցում այլ կարծիք ուներ միայն Գյումրիի ՀԿ-ի ներկայացուցիչներից մեկը. ըստ նրա՝ արտերկրում թմրամիջոցներ գործածում է երիտասարդ միգրանտների մոտ 20%-ը:
21. Հարցվածներից միայն գյումրեցի երկու բուժաշխատողներ են տեղյակ/լսել արտերկրում աշխատանքային միգրանտների կողմից ներարկային թմրամիջոցների գործածման դեպքերի մասին: Դրանց տեսակի մասին նրանք տեղեկություն չունեին: Մյուս կողմից նրանցից մեկը տեղյակ էր գերդոզավորումից մահվան մեկ դեպքի մասին: Մնացած բոլոր հարցվածների կարծիքով միգրանտների շրջանում այս երևույթը տարածված չէ, քանի որ այն կտրականապես մերժվում է ինչպես գործատուների, այնպես էլ գործընկերների կողմից:
22. Հարցվածները պատկերացում չունեին միգրանտների կողմից ներարկային թմրամիջոցների գործածման առանձնահատկությունների մասին:

Դոմեն 5. հետագա քայլեր

23. Բոլոր հարցվածները ցանկություն հայտնեցին օգնելու գտնել արական սեռի սեզոնային աշխատանքային միգրանտների ծրագրվող հետազոտության մեջ ընդգրկելու համար: Վանաձորի հազար միգրանտի իմացող ծառայություններ տրամադրողը, բացառելով իր կողմից մարդկանց հավաքագրումը, միաժամանակ խոստացավ բացատրական աշխատանք տանել հետազոտություն անցնելու կարևորության մասին և առաջարկել մասնակցել դրան:
24. Բոլոր հարցվածները ցանկություն հայտնեցին և որոշ դեպքերում իրական աջակցություն ցուցաբերեցին ֆոկլուս խմբերի մասնակից արական սեռի սեզոնային աշխատանքային միգրանտների գտնելու հարցում:
25. Որպես սեզոնային աշխատանքային միգրանտների հետ աշխատող ծառայություններ/կազմակերպություններ հարցվածների կողմից հիշատակվեցին երկուսը՝ սոսկ հավաքագրում իրականացնող «Ուկրշինը» (Վանաձոր) և միայն գյուղական համայնքների վերադարձած միգրանտների վերաինտեգրման հարցերով զբաղվող «Հայկական Կարիտաս» բարեսիրական ՀԿ-ն (Գյումրի): Բոլոր հարցվածների կարծիքով սեզոնային աշխատանքային միգրանտների հետ հիմնականում աշխատում են անհատներ, այսպես կոչված՝ բրիգադիրներ, որոնք, լինելով կա՛մ տեղաբնակ և կա՛մ արտերկրից (հիմնականում բնակավայրի՝ նախկինում էմիգրացված բնակիչներից), ձևավորում են բրիգադներ որոշակի աշխատանքների իրականացման համար:
26. Բոլոր հարցվածները չմերժեցին հետազոտություն ծրագրելու համար նոր հանդիպում ունենալու հնարավորությունը:

ՀԻՄՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Ֆոկուս խմբային քննարկումների և խորքային հարցազրույցների ամփոփ արդյունքների համադրումը թույլ է տալիս արձանագրելու դրանց բոլոր առումներով գրեթե նույնական լինելու փաստը:
2. Դիտարկման օբյեկտ հանդիսացող երեք քաղաքներում էլ արական սեռի սեզոնային աշխատանքային միգրանտների միջև առկա են որոշակի սոցիալական կապեր: Օրինաչափ է, որ պայմանավորված արտագնա աշխատանքային միգրացիոն գործընթացներում բնակչության ներառվածության մակարդակների տարբերություններով՝ ծավալային առումով դրանք առավել նշանակալից են Գյումրիում, որոշ չափով պակաս՝ Վանաձորում և նկատելիորեն պակաս՝ Երևանում: Նկատի ունենալով, որ բնակչության արտագնա աշխատանքային միգրացիոն գործընթացներում ներառվածության մակարդակով Հայաստանի մնացած բոլոր քաղաքային բնակավայրերը, որպես կանոն չգիջելով Երևանին, որոշ դեպքերում անգամ գերազանցում են Վանաձորի ու Գյումրիի սահմանանիշերը (նախ և առաջ Գեղարքունիքի, Շիրակի, Լոռվա և Տավուշի մարզերում)՝ կարելի է կարծել, որ նման սոցիալական կապեր կան նաև նրանցում:
3. Արձանագրելով միջմիգրանտային կապերի առկայությունը՝ միաժամանակ հարկ է նշել, որ դատելով շփումների բնույթից և հաճախությունից՝ դրանց սերտության աստիճանը բավական ցածր է: Այն համեմատաբար բարձր է Գյումրիում, որոշակիորեն ցածր՝ Վանաձորում և հատկապես ցածր՝ Երևանում: Սա հիմք է տալիս ենթադրելու, որ ծրագրվող հետազոտության աշխատանքներն առավել դժվար ընթացք կարող են ունենալ Երևանում:
4. Կապերի գերակշիռ մասն ընդամենը ծանոթության բնույթ է կրում, գրեթե լիովին բացակայում է ընդհանուր խնդիրների ու շահերի, դրանց լուծման ու պաշտպանության համար ջանքերի համատեղման անհրաժեշտության գիտակցումը, առավել ևս՝ այդ ուղղությամբ որոշակի քայլերի իրականացման պրակտիկան:
5. Չնայած ցածր սերտությանը՝ որոշակի նախապայմանների ապահովման դեպքում միջմիգրանտային կապերը կարող են բավարար լինել ծրագրվող հետազոտության նախատեսվող ընտրանքի մեթոդի կիրառման դեպքում մասնակիցների բավարար քանակ ապահովելու համար:
6. Այդ նախապայմաններն են՝ անանունության լիարժեք երաշխիքները, մասնակցության նյութական խրախուսման բավարար չափը (նվազագույնը՝ 5, առավելագույնը՝ 10 հազար դրամ), հարցման և բժշկական հետազոտության կատարման ու արդյունքների տրամադրման նվազագույն ժամկետների

ապահովումը, հետազոտության նպատակների և խնդիրների կարևորության մասին միգրանտների նախնական տեղեկացումը:

7. Միջմիգրանտային կապերի թուլության՝ միգրանտների հանդիպումների և շփումների որոշակի վայրերի բացակայության, նրանց վիզուալ առանձնացման/հայտնաբերման հնարավորությունների սամանափակության, տարածքային տարաբնակեցման համատարածության, նրանց մասին տվյալների վարչական և այլ աղբյուրների գրեթե լիակատար բացակայության, անմիջաբար նրանց հիմնահարցերով զբաղվող պետական կազմակերպությունների, գերատեսչությունների և որոշակի հասարակական կազմակերպությունների /աջակցության խմբերի բացակայության, դիտարկման ժամկետներում նրանց այս կամ այն մասի՝ երկրից բացակայության պայմաններում հետազոտության ընտրանքի նախատեսվող մեթոդի կիրառման հիմնական դժվարությունը կայանալու է տվյալ մեթոդի հիմնաքար հանդիսացող «սերմերի» ի հայտ բերման/ընտրության համակարգված քաղաքակիրթ մեթոդի մշակման և իրականացման մեջ:
8. Դիտարկման արդյունքները, հաստատելով գործընթացում ներառված տղամարդկանց գերակշիռ մասի՝ արտերկրում դրսևորվող սեռական վարքագծի բարձր ռիսկայնության վարկածը, միաժամանակ թույլ են տալիս արձանագրել նրանց զգալի մասի մոտ դրա մակարդակի նվազեցման միտվածություն ունեցող որոշակի գործելակերպի առկայությունը (տևական/մշտական կապերի գերադասում, պահպանակների օգտագործում):
9. Դիտարկման արդյունքներից դատելով՝ արտերկրում աշխատանքային միգրանտների կողմից թմրամիջոցների գործածումը, սահմանափակ տարածում ունենալով, հիմնականում դրսևորվում է ծխելու/շնչելու միջոցների և դեղերի կիրառման գործելակերպով. ներարկային թմրամիջոցներ գործածողների թիվն առանձնապես մեծ է: Սրան նպաստում են ինչպես աշխատանքային ծանրաբեռնվածությունը, այնպես էլ երևույթի կրողների՝ հատկապես ներարկային թմրամիջոցներ գործածողների նկատմամբ թե՛ գործատուների, թե՛ գործընկերների ընդգծված բացասական վերաբերմունքը: Ուշագրավ է, որ միգրանտների գնահատմամբ երևույթում ներառվածների թիվը որոշակիորեն ավելանում է միջմիգրացիոն փուլում՝ Հայաստանում գտնվելիս:
10. Ուշադրության արժանի է և ողջունելի դիտարկումների բոլոր մասնակիցների՝ թե՛ միգրանտների և թե՛ փորձագետների միահամուռ պատրաստակամությունը՝ իրենց հնարավորությունների շրջանակներում աջակցելու ծրագրվող հետազոտության կազմակերպման և իրականացման աշխատանքներին:

11. Ծրագրվող հետազոտության աշխատանքների արդյունավետության առանձնահատուկ կարևորություն ունեցող նախապայման է երևույթի հստակ արտահայտված սեզոնայությամբ պայմանավորված ժամկետային սահմանափակման հաշվառումը: Այդ աշխատանքները պարտադիր կերպով պետք է իրականացվեն դեկտեմբեր-փետրվար ամիսների միջակայքում, այսինքն՝ սեզոնային աշխատանքային միգրանտների հիմնական մասի վերադարձին հաջորդող ու նոր մեկնմանը նախորդող ժամանակահատվածում:

**QUALITATIVE ASSESSMENT
OF SAMPLING METHODS
FOR ARMENIAN, MALE, SEASONAL
LABOR MIGRANTS
IN URBAN COMMUNITIES IN ARMENIA
2016**

ACKNOWLEDGMENTS

This study was conducted by RA MoH National Center for AIDS prevention.

A technical support was provided by international consultant of World Health Organization Lisa Johnston and local consultant Ruben Yeganyan during the study implementation and for report of findings.

The report was outlined by the international consultant and finalized jointly with NCAP specialists.

The financial assistance for study implementation was provided by the Global Fund against AIDS, Tuberculosis and Malaria.

Table of Contents

ABBREVIATIONS/ACRONYMS	82
ARMENIAN, MALE, SEASONAL LABOR MIGRANTS IN ARMENIA	83
LOCATION AND FUNDING SOURCE	83
BACKGROUND AND JUSTIFICATION	84
Objectives	85
Eligibility Criteria.....	85
Methods	86
<i>Finding participants for the focus groups</i>	86
<i>Data collection during interviews/focus groups</i>	86
<i>Data Analysis</i>	86
<i>Data Collection Instruments</i>	86
<i>Staffing</i>	87
Ethical considerations.....	88
Overview of findings	89
<i>Sampling technique to sample urban migrants</i>	89
<i>Incentives</i>	90
<i>HIV testing</i>	90
<i>Sexual risk</i>	90
<i>Drug use</i>	91
<i>Next steps</i>	91
<i>Other issues</i>	91
Recommendations	92
<i>Annex A</i> .Information sheet for Urban Migrant Study.....	93
<i>Appendix B</i> .Interview Guide-key informants	94
<i>Appendix C</i> .Interview Guide–Focus Groups	97
<i>Appendix D</i> .Focus group discussion and in-depth interview, Yerevan	100
<i>Appendix E</i> .Focus group discussion and in-depth interview, Guymri.....	106
<i>Appendix F</i> .Focus group discussion and in-depth interview, Vanadzor	112
<i>Appendix G</i> .Summary of results of focus group discussions by National Consultant	117
Summary of results of in-depth interviews.....	121
Main conclusions.....	125

ABBREVIATIONS/ACRONYMS

ART	Antiretroviral Therapy
FSW	Female sex workers
GFATM	Global Fund to fight AIDS, TB and Malaria
HIV	Human Immunodeficiency Virus
BBS	biological and behavioral surveillance
MSM	Men who have sex with men
NCAP	National Center for AIDS Prevention
PWID	People who inject drugs
RDS	Respondent Driven Sampling
STI	Sexually Transmitted Infection
UNAIDS	Joint United Nations Programme on HIV/AIDS

ARMENIAN, MALE, SEASONAL LABOR MIGRANTS IN ARMENIA

Running title: Urban Migrant Study (for migrants in urban areas)

This report provides findings from a qualitative research exercise to assess sampling methods to sample Urban Migrants defined as *Armenian, Male, Seasonal Labor Migrants in Urban Communities in Armenia*. Past surveys to sample urban migrants have used convenience sampling methods, including snowball sampling, resulting in unrepresentative data. This exercise is to establish whether the population forms social networks and that some sampling method superior to a simple snowball sample might be possible. Specifically, the formative research will inform the possibility of conducting a survey of urban migrants using respondent driven sampling.

LOCATION AND FUNDING SOURCE

Location for Urban Migrant Study:

Yerevan, Gyumri and Vandadzor (3 major cities).

Funding:

Global Fund to fight HIV/AIDS, tuberculosis, and malaria.

BACKGROUND AND JUSTIFICATION

According to UNAIDS Spectrum estimates, HIV prevalence among the general population is 0.2% making it a low prevalence country. However, HIV is higher among most populations at higher risk for HIV exposure based on Biological and Behavioral Surveillance (BBS) using respondent driven sampling (RDS) conducted in 2014¹. In these surveys, HIV prevalence was found to be highest among people who inject drugs (PWID) at 4%, followed by men who have sex with men (MSM) at 0.4%. No HIV seropositive participants were found in the BBS of female sex workers (FSW).

Generally, Armenia is considered an emigration country with travel mostly to Russia (90%)^{2,3} and Ukraine where HIV prevalence is at least 1% in the general population (ages 15-49 years⁴). There is concern that labor migrants returning to Armenia may have been exposed to HIV while working and living in their receiving countries. According to some sources, it is estimated that at any one time there are approximately 80,000-100,000 returning labor migrants in Armenia⁵, 36.5% of whom live in rural communities. Other sources indicate that the majority of labor migrants were from urban areas (58.3% vs. 53.7% rural labor migrants) in 2009⁶. Almost all labor migrants returning to Armenia are males. In 2014, 1% of all HIV tests in Armenia (n=9278) were reported to be among returning labor migrants and out of 334 new cases identified in Armenia, 55% were returning labor migrants and 18% were partners of returning labor migrants⁷. In a BBS survey conducted in 2014 using convenience sampling methods in six rural regions of Armenia HIV prevalence among returning labor migrants was found to be 0.4%⁸. However, given questions about the sampling reliability of the 2014 BBS surveys, Armenia National Center for AIDS Prevention (NCAP) has conducted a new survey using multistage cluster sampling. The results for the survey of rural migrants should be available in the late spring of 2016.

Armenia currently does not have any reliable data on returning Armenia migrants who live in urban settings. In 2012, a survey including both rural and urban migrants was conducted which tried to use a random household sampling approach.⁹ This approach was most difficult in the urban areas of

1 Ministry of Health, National Center for AIDS Prevention. (2015) Results from the HIV Biological and Behavioural Surveillance in the Republic of Armenia, 2014. Accessible at: ccmarmenia.am/images/uploads/bbc_report_2014_eng.pdf

2 European Training Foundation (2011). Migration Survey on the Relationship between Skills, Migration and Development in Armenia. Accessible at:

http://www.crrc.am/hosting/file/_static_content/projects/Migration_and_skills_2011/Migration_and_skills_Armenia.pdf

3 International Labour Organization. (2010). Migration and Development: Armenian Country Study, Yerevan. Accessible at: http://www.smsmta.am/upload/Migration%20and%20Development_Study_in_English.pdf.

4 World Health Organization. Data and statistics. Accessed on September 12, 2015 at: <http://www.euro.who.int/en/health-topics/communicable-diseases/hiv-aids/data-and-statistics>.

5 International Organization for Migration. (2013) Report on Household Survey on Migration in Armenia, Accessed at: http://publications.iom.int/bookstore/index.php?main_page=product_info&cPath=41_7&products_id=1400

6 International Labour Organization. (2010). Migration and Development: Armenian Country Study, Yerevan. Accessible at: http://www.smsmta.am/upload/Migration%20and%20Development_Study_in_English.pdf.

7 International Organization for Migration. (2013) Report on Household Survey on Migration in Armenia, Accessed at: http://publications.iom.int/bookstore/index.php?main_page=product_info&cPath=41_7&products_id=1400

8 Ministry of Health, National Center for AIDS Prevention. (2015) Results from the HIV Biological and Behavioural Surveillance in the Republic of Armenia, 2014. Accessible at: ccmarmenia.am/images/uploads/bbc_report_2014_eng.pdf

9 International Organization for Migration. (2013) Report on Household Survey on Migration in Armenia, Accessed at: http://publications.iom.int/bookstore/index.php?main_page=product_info&cPath=41_7&products_id=1400

large urban cities and soon the sampling approach for urban migrants morphed into a convenience snowball sample. Based on this survey and in-depth interviews with representatives of NCAP, the Armenian State Migration Agency, WHO in Armenia, and GFATM, there is evidence that urban migrants are socially networked. However, there is no information to determine if they are networked to the point of allowing for a probability based sampling methodology such as respondent driven sampling (RDS). For this reason, NCAP conducted a qualitative assessment to understand the underlying social networks of urban migrants to determine if RDS, or some other probability method, is possible. The qualitative assessment was conducted during January and February 2016 in three urban cities: Yerevan, Gyumri and Vanadzor.

Objectives

The objectives of the qualitative assessment was to:

- Understand and measure the strength of network ties among urban migrants (do they know other urban migrants in the same urban area?);
- Measure their social network sizes (how many urban migrants do they know who know them)?
- Understand the underlying network qualities of the population (i.e., how are they socially networked? What do they do together?)
- Assess the feasibility of conducting an RDS survey among urban migrants (i.e., would they participate in a survey if they were recruited by a trusted peer? Why or why not?)
- Learn more about the sexual and drug use risk behaviors

Eligibility Criteria

The population of focus was:

- Males
- 18 years of age and over
- Abroad for 3 or more months for purposes of labor, but not more than one year, in the past year
- Residing in the catchment area

This was made clear at the outset of all focus groups and in-depth interviews. Focus groups were made up primarily of people fitting this eligibility criteria. In some cases, urban migrants not fitting this eligibility criteria were included as long as they could provide information about those who do fit the eligibility criteria.

Methods

Finding participants for the focus groups

Participants for the focus group were located through contacts or services working with urban migrants. Other sources for the interviews and focus groups were from experts working in the field, non-governmental organizations working with migrants. Focus groups were made up of diverse sectors of the population. Once participants were found for one focus group, it was easier to find participants for the other focus groups.

Data collection during interviews/focus groups

The interviews and focus groups were conducted in quiet spaces. Before starting the interview/focus group, the interviewer read the information sheet (**Appendix A**) and received verbal agreement from all participants that they understood the information contained therein. The interviewer then signed on behalf of everyone giving informed consent. The questions for the interview/focus groups were open ended and designed to elicit open discussion (Appendix B and C) and all processes followed a qualitative research field guide developed in English by the international consultant and translated into Armenian. The facilitator guided the discussion so participants remained focused on and responded to the questions. Efforts were made to follow up with and elicit responses from those who were quieter than others. A note taker was present to record notes during the interviews and focus groups.

Data Analysis

Notes were translated from Armenia to English and then extracted into separate reports of findings. Reports were sent electronically to the international consultant for review. Once the reports were reviewed, the team held a Skype call with the international consultant to assess the findings, discuss common themes and update the questions to fill in gaps and to add information about new topics. No interviews in addition to those already planned were needed given that the information provided converged and no new findings were being learned. The team also discussed their interpretation of whether RDS or some other method could be used to sample urban migrants in a larger survey. The final report was written by the technical advisor and reviewed by the NCAP.

Data Collection Instruments

Interview guides were semi structured to allow for modification during the data collection process. The sampling methods explored were time location sampling [TLS], cluster sampling [CS], targeted institutional sampling [TS], respondent driven sampling [RDS], snowball sampling [SB], and modifications or combinations of these:

- How to best identify seeds (RDS, SB)
- Appropriate sites for interviews/services (RDS, TLS, CS, SB, TS)
- Appropriate incentives (RDS, TLS, CS, SB, TS)
- Extent of networking (RDS, SB)
- Acceptability of specimen collection and testing, as well as treatment of STI (RDS, TLS, CS, SB, TS)

- Willingness to recruit peers (RDS, SB)
- Acceptability and feasibility of interview questions and techniques (RDS, TLS, CS, SB, TS)
- Logistics for management of lab specimens for biomarkers, handling of test results (RDS, TLS, CS, SB, TS)
- Self-identity of population (RDS, SB)
- Safety of the population and staff (RDS, SB, TLS, CS, TS)

Criteria for selecting a sampling method may be based on 1) representativeness: can the sampling method produce a sample that resembles the population from which it was drawn; 2) efficacy: will the sampling method produce the required sample size in a six week to two month period; 3) feasibility and reproducibility: can the sampling method be implemented in a standardized way in the selected geographical areas. For a more exhaustive list of topics please see the semi-structured interview guide template (**Appendix B and C**). Other questions focused on sexual behaviors, including having regular and casual sexual partners, buying sex and men having sex with men, and non-injecting and injecting drug use.

Staffing

The staffing involved key personnel from NCAP who acted as facilitators during the focus groups, interviewers during the in-depth interview and to coordinate the meetings, take notes, and write up findings. Outside technical assistance, including one international epidemiological consultant and a local sociologist with expertise in migrant issues, provided technical expertise before and during data collection.

The staff consists of the following titles and responsibilities:

1. Local consultant (outside NCAP) Responsibilities:

- Supervision of the qualitative assessment
- Mini training of the interviewers
- Preparing of the assessment report

2. Interviewers Responsibilities:

- Conduct the in-depth interviews
- Conduct focus groups
- Take notes and write up findings

3. International consultant Responsibilities:

- Development of questionnaires and field guide
- Technical assistance for interpretation of the qualitative assessment findings
- Technical assistance for determination of the final sampling methodology for urban migrant population
- Technical assistance for analysis and interpretation of the urban Migrant Study
- Technical assistance for writing the final report.

Ethical considerations

The basic principles of ethics in human research as stated by the declaration of Helsinki were followed throughout this project. All data collected were anonymous and no names or specific identifying information were collected once participants are contacted and enroll.

Verbal Informed Consent

All participants will be able to read or have read to them the verbal Information Sheet (Appendix A) in Armenian language. Participants had the opportunity to ask any questions to the interviewer. Informed consent covered all procedures, potential risks, benefits, and who to contact in Armenia to report complaints or concerns. Anyone was free to leave the interviews at any time. The interviewer conducted the consent process and signed on behalf of the participant (s) to avoid the participant (s) having to divulge personal information by signing his name.

Age

This activity recruited only persons aged 18 or older; no minors were included.

Findings

Data were collected through in-depth interviews and focus groups during January and February 2016 in Yerevan, the capital and largest city in Armenia, Gyumri, the second largest city in Armenia and the regional center of the Shirak Region (Marz) in the northwestern part of the country and Vanadzor, the third largest city and regional center of the Lori Region (Marz) in the northern part of the country. In-depth interviews were conducted among NGO representatives (Yerevan, n=2; Gyumri, n=3; Vanadzor, n=3), migrants (Yerevan, n=2; Gyumri, n=2; Vanadzor, n=2), Government representatives/service providers (Yerevan, n=2; Gyumri, n=3; Vanadzor, n=2) and researchers working with migrants (Yerevan, n=2; Vanadzor, n=1) (Table 1).

Table 1. *Characteristics of interviewees for in-depth interviews*

Interviewees for in-depth interviews	Yerevan	Gyumri	Vanadzor
NGO representatives	2	3	3
Migrants	2	2	2
Government staff/service providers	2	3	2
Researchers	2	0	1
Total	8	8	8

In addition, six focus group interviews were conducted among a total of 48 migrants in Yerevan, Gyumri, and Vanadzor (Table 2). Participants came from a variety of communities within each city and ranged in ages from 22 to 44 years in Yerevan, 19 to 50 years in Gyumri and 25 to 54 years in Vanadzor. Overall, the age groups represented 41.1% of 20 to 29 year olds, 43.8% of 30 to 39 year olds, 14.6% of 40 to 49 year olds and 10.4% of 50 to 59 year olds.

Table 2. *Characteristics of interviewees for focus group (FG) interviews*

Interviewees for focus group	Yerevan		Gyumri		Vanadzor	
	FG1	FG2	FG1	FG2	FG1	FG2
Number of participants	7	9	8	8	8	8
Represented communities	Kayaran Bangladesh Komitas Shengavit Noragavit Nor-Norq Avan Nork Marash Davitashen Malatia Sebastia		Papakhana Mush 58 district Slabotka DA Textil Chulochni 48 Kamo str. Savoyan str. Komitas str. Gorki str.		Kongo Taron Lcher Dimats Kayaran Kentron Boshi tagh Jungliner Tsalkut Darpas	
Ages (years)	Average	Range	Average	Range	Average	Range
	33	22 to 44	32	19 to 50	39	25 to 54

The findings are summarized and presented below and more detailed findings (including some quotes) are presented by country, by interview type (focus group or in-depth) and by content group in **Appendices D, E and F**. An additional summary of results by National consultant for the assessment of urban migrants, is provided in **Appendix G**.

Overview of findings

Sampling technique to sample urban migrants

